

ՄԱՍ Ա

ԻԲՆ ԱԲԻ ԱԼ-ԶԱՀԻՐԻ ՏԵՂԸ ՄԱՄԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ

1.1 ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՄԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ: ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Իմացի՛ր, որ պատմագրությունը (*fann al-tārīḥ*) բազմաթիվ գիտակարգեր, մեծաթիվ օգուտներ, զանազան նպատակներ ունեցող գիտություն է: Այն մեզ ծանոթացնում է անցած ժողովուրդների բարերին (կամ բնավորությանը՝ *aḥlāq*), մարգարեների վարքին (կենսագրությանը՝ *fi siyarihīm*), արքաների դիմատիպներին և նրանց փառափառությանը: Նա, ով ուզում է այդ ամենն իմանալ, կարող է ցանկալի արդյունքի հասնել [անցյալի] կրոնական ու աշխարհիկ իրողություններին (այն է՝ պատմական փորձին) հետևելով: Այն (պատմագրությունը), սակայն, պահանջում է բազմաթիվ աղբյուրներ (*māḥid mutaʿaddida*), տարատեսակ գիտելիքներ, ֆինական միտք (*ḥusn al-naẓar*) և վստահություն, որոնք կողողորդեն դեպի ճշմարտություն և հետ կպահեն սայթափումներից և սխալներից: Քանզի եթե հաղորդումները (*aḥbār*) վերցնենք այն տեսքով, ինչպես որ դրանք փոխանցվել են, ինչպես օրինակ չֆինսվեն ավանդույթի հիմնարար սկզբունքները (*uṣūl al-ʿāda*), փառափառության կանոնները, փառափառության բնույթը, հասարակական պայմանները, և եթե ակներև փաստերը չհամեմատվեն թափնված փաստերի, իսկ ներկայի փաստերն անցյալի փաստերի հետ, դա հավանաբար կտանի գայթաթմների և սայթափումների (*al-ʿuṭūr wa-mazillat al-qadam*) շեղելով ճշմարտության ուղուց (*ġāddat al-ṣidq*)»:

Իբն Խալդուն, «*Քիթաբ ալ-Իբար*»⁷¹

⁷¹ Ibn Ḥaldūn, *Al-ʿIbar wa-diwān al-mubtadaʿ wa-l-ḥabar fi ayyām al-ʿArab wa-l-Barbar* *Diwān al-mubtadaʿ wa-l-ḥabar fi tāriḥ al-ʿArab wa-l-Barbar* (հետալսում՝ *Al-ʿIbar*), թ. 1, bi-taḥqīq Ḥalīl Šihāda wa-Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, 2001, թ. 13.

1250 թ. Մամլուքյան սուլթանության հիմնադրումով նոր շրջափուլ բացվեց Մերձավոր Արևելքի ոչ միայն քաղաքական, այլև մշակութային պատմության մեջ: Գրավոր մշակույթի ու մատենագրության աննախադեպ զարգացման առումով սա նոր շոնդալից սկիզբ էր նաև արաբական պատմագրական ավանդույթում: Եվ ամենևին էլ չափազանցված չեն այն պնդումները, թե «մամլուքյան շրջանն իսլամական պատմության առավել վկայագրված դարաշրջանն է»⁷²: Հատկանշական է, որ Այյուբյան տիրապետության ողջ ընթացքում և Մամլուքյան սուլթանության սկզբնական շրջանում մատենագրության ծաղիկուն կենտրոններ էին համարվում Դամասկոսը, Հալեպն ու Ասորիքի մյուս քաղաքները, սակայն ԺԴ դարի կեսերից սկսած պատմական գիտելիքի զարգացման առաջնությունն աստիճանաբար անցավ եգիպտացի հեղինակներին⁷³:

Մամլուքյան մատենագրությունը, ըստ էության, Այյուբյան պատմագրության օրգանական շարունակությունն էր ու հասունացումը: Նոր դարաշրջանի պատմիչներն ընդհանուր առմամբ պահպանեցին ու զարգացրին Այյուբյան պատմագրության մեթոդաբանական ու ժանրային (ժամանակագրություններ, անհատների «վարձագրություններ» և կենսագրական բառարաններ, արքունական գրադրության ձեռնարկներ և այլն) հիմնական առանձնահատկությունները⁷⁴: Սա բնական և տրամաբանական է թվում այն առումով, որ երկու ավանդույթներն էլ մեծ հաջվով, թեև տարբեր ժամանակների, այնուամենայնիվ, համանման պատմական միջավայրերի ու ազդեցությունների ծնունդ ու արձագանք էին: Մամլուքյան դարաշրջանը,

⁷² Li Guo, “History Writing”, in *The New Cambridge History of Islam*, vol. 4 (*Islamic cultures and societies to the end of eighteenth century*), ed. by R. Irwin, Cambridge University Press, Cambridge, 2010, p. 449; N. Rabbat, “Representing the Mamluks in Mamluk Historical Writing”, in *The Historiography of Islamic Egypt, c. 950-1800*, ed. by H. Kennedy, E.J. Brill, Leiden, 2000 (հետալյսն՝ HIE), p. 59.

⁷³ D. Little, “Historiography of the Ayyūbid and Mamlūk epochs”, in *The Cambridge History of Egypt. Vol. 1: Islamic Egypt 640-1517*, ed. by C. F. Petry, Cambridge University Press, Cambridge, 1998, p. 412; K. Hirschler, “Studying Mamluk Historiography - From source-criticism to the cultural turn”, in *Ubi Sumus? Quo Vademus? Mamluk Studies - State of the Art*, ed. by S. Conermann, Bonn University Press, Gottingen, 2013, p. 169.

⁷⁴ D. Little, “Historiography”, p. 412.

սակայն, մի քանի քայլ առաջ էր նախորդից ոչ միայն նորանոր ժանրերի առաջացման, այլև հասարակական-քաղաքական կյանքում պատմագրության դերի աճի, նրա նշանակության գիտակցման տեսանկյունից: Ծիշտ է, արաբախլամական քաղաքակրթական էվոլյուցիայի գրեթե բոլոր փուլերում՝ այդ թվում Այյուբյանների օրոք, պետական իշխանությունն ու պատմական գիտելիքը «թևանցուկ» են զարգացել⁷⁵, այնուհանդերձ մամլուքյան դարաշրջանում այդ կապն էլ ավելի է սերտացել: Քաջ գիտակցելով իրենց իշխանության օրինականության շեշտման, պրոպագանդման ու իդեալականացման համար պատմագրության ունեցած լուրջ դերակատարությունը՝ մամլուքյան կառավարող վերնախավն սկսեց հովանավորել ու աջակցել մտավորականության ('ulamā')՝ իրեն առավել մոտ կանգնած հատվածին՝ մեծ դրամաշնորհների արժանացնելով և այդ կերպ պատմագրությունը բարձրացնելով պետական քաղաքականության մակարդակի⁷⁶: Ըստ այդմ, մամլուքյան մատենագրության ամենատարածված ուղղություններից մեկն է դառնում այսպես կոչված «ֆադաֆալան (fiyāḍa) ուղղվածության պատմագրությունը»⁷⁷: Պատահական է, որ ժամանակի խոշորագույն արաբագիր պատմիչների մեծամասնությունը մամլուքյան վարչական համակարգի ներկայացուցիչներ, արքունի քարտուղար-գրագիրներ, մամլուքյան կրոնաքաղաքական պաշտոնական գաղափարախոսության կրողներ ու արտահայտողներ էին: Սուլթանի ու արքունական շրջանակների վստահությունն ու հովանավորությունը շահելու մղումը հենց իրենց՝ մտավորականների շրջանում շատ հաճախ «ակադեմիական» սուր ու անհանդուրժող մրցակցության երանգներ էր ստանում⁷⁸: Այն պատմիչները, ովքեր կորցնում էին ռազմաքաղաքա-

⁷⁵ A. Mallett, "Islamic Historians of the Ayyūbid Era and Muslim Rulers from the Early Crusading Period: A Study in the Use of History", *Al-Masaq*, vol. 24, № 3, 2012 (December), pp. 241-252.

⁷⁶ D. Little, "Historiography", pp. 413-414.

⁷⁷ T. Khalidi, *Arabic Historical thought in the classical period*, Cambridge University Press, Cambridge, 1994, pp. 183-184.

⁷⁸ Երևույթը հստակ տեսանելի է երեք ժամանակակիցների՝ ալ-Այնիի, ալ-Ասկալանիի և ալ-Մակրիզիի դեպքում: Տե՛ս A. Broadbridge, "Academic Rivalry and the Patronage System in Fifteenth-Century Egypt: al-'Aynī, al-Maqrīzī, and Ibn Hajar al-'Asqalanī", *MSR*, vol. 3, 1999, pp. 85-107:

կան վենախավի բարեհաճությունը, հեռացվում էին իշխանական օղակներից: Այս երևույթի փայլուն օրինակն ալ-Մակրիզին է (մահ. 1442 թ.), ով, չկարողանալով վերականգնել իր երբեմնի փառքն ու արքունական շրջանակներում վայելած հեղինակությունը, մեկուսանում է հասարակությունից՝ իրեն նվիրելով գրական-գիտական գործունեությանը՝ գրելով իր հիմնական երկերը, որոնցում շատ հաճախ սուր քննադատություն է արժանացնում մամլուքյան հասարակական-քաղաքական կյանքի իրողությունները⁷⁹:

Մամլուքյան պատմագրական ավանդույթում պայմանականորեն առանձնացվում են երկու «պարոններ»՝ «ասորիքյան» և «եգիպտական»⁸⁰: Նման տարանջատման համար հիմք են դարձել ասորիքյան ([Սիբտ իբն ալ-Ջաուզի], ալ-Յունինի, ալ-Ջազարի, ալ-Բիրզալի, ալ-Ջահաբի, ալ-Քութուբի, իբն Քասիր և այլն) և եգիպտացի (իբն Աբդ ալ-Ջահիր, Բայբարս ալ-Մանսուրի, իբն ալ-Դավադարի, իբն Դուկմակ, իբն ալ-Ֆուրաթ, ալ-Մակրիզի, ալ-Այնի, իբն Թադրի Բիրզի և այլն) հեղինակների երկերում պատմական գիտելիքի շարադրման նախ և առաջ ձևաբովանդակային նշմարելի տարբերությունները: Օրինակ, ասորիքյան պատմիչները, ովքեր գերազանցապես կրոնական դասի ներկայացուցիչներ (բացառությամբ, թերևս, Համայի Այյուբյան կառավարիչ Աբու ալ-Ֆիդայի)՝ կրոնագետներ և հադիսագետներ (muḥaddit) էին, իրենց երկերում առանձնահատուկ ուշադրություն են հատկացրել այն հաղորդումների արձանագրմանը, որոնք ուղղակիորեն թե անուղղակիորեն կապ ունեին կրոնագիտությանը և կրոնաիրավագիտությանը, այս ոլորտի մարդկանց (riḡāl) կյանքին ու կենսագրությանը՝ ընդհանուր առմամբ խուսափելով արտաքին քաղաքական իրադարձությունների մանրամասն ներկայացումից: Եգիպտացի ժամանակագիրները, ովքեր մեծամասամբ մամլուքյան ռազմաքաղաքական վեր-

⁷⁹ St' u K. Hirschler, "The 'Pharaoh' Anecdote in Pre-Modern Arabic Historiography", JAIS, vol. 10, 2010, p. 71, ինչպես նաև **Ապրիլ**՝ "Islam: The Arabic and Persian traditions, eleventh-fifteenth centuries", in *Oxford history of historical writing*, vol. 2, 400-1400, ed. by S. Foot and C. Robinson, Oxford University Press, Oxford, 2012, p. 277:

⁸⁰ D. Little, *An introduction to Mamlūk historiography: an analysis of Arabic annalistic and biographical sources for the reign of al-Malik an-Nāṣir Muḥammad ibn Qalā'ūn* (Freiburger Islamstudien, Bd. II.), Franz Steiner Verlag, Wiesbaden, 1970, p. 46, 95.

նախավի ներկայացուցիչներ էին, ընդհակառակը, հարկ են համարել գրի առնել այն իրադարձությունները, որոնք ուղիղ աղբյուրներ ունեին Սուլթանությունից ներքաղաքական կյանքին, մամլուքյան կենտրոնական իշխանությունները, արտաքին քաղաքական հարաբերություններին⁸¹: «Ընդարձակ ձևակերպմամբ՝ մամլուքյան պատմագրության եզրագծով ճշգրիտ փառաբանական պատմությունների ավանդույթ է, ասորիքյանը՝ ինտելեկտուալ պատմությունների», - մի առիթով գրում է Դ. Ռեյզմանը⁸²: Մյուս կողմից, գիտական համագործակցության և պատմական գիտելիքի սերնդափոխության տեսանկյունից «դպրոց» կոչվելու ավելի մեծ նախադրյալներ ունի ասորիքյան պատմագրական ավանդույթը: Օրինակ, հայտնի է, որ ալ-Յունինին և ալ-Ջազարին փոխանակել են իրենց սեպագրությունները, խմբագրել են մեկը մյուսի երկերը: Ալ-Ջազարին իր հերթին մասնագիտական սերտ կապեր է ունեցել ալ-Յունինիի աշակերտ ալ-Բիրզալիի հետ, ում աշակերտել է ալ-Ջահաբին: Դրան հակառակ, եզրագծային պատմագիրները մեծամասամբ միմյանցից անկախ հեղինակներ են⁸³:

Մամլուքյան տիրապետության սկզբնական շրջանում Այյուբյան մատենագիրները շարունակեցին գրի առնել Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները՝ շատ հաճախ չթաքցնելով իրենց ընդգծված անհանդուրժողական վերաբերմունքն իշխանությունը դավթած մամլուքների կառավարող վերնախավի նկատմամբ: Խոսքը մասնավորապես Աբու Շամայի (մահ. 1268 թ.) մասին է: Դուրանին, դուրանյան ընթերցումներին, մեկնություններին, հազիսներին (խալամի մարգարե Մուհամմադի վերաբերյալ զրույցներ) նվիրված կրոնագիտական երկերի⁸⁴ հետ մեկտեղ Աբու Շաման նաև պատմագիտական

⁸¹ St' u Անդ, p. 95:

⁸² D.C. Reisman, “A Holograph MS of Ibn Qāḍī Shuhbah's “Dhayl””, MSR, vol. II, 1998, p. 24.

⁸³ Մամլուքյան պատմագրության մեջ երկու դպրոցների տարանջատման, դրանց փաստական գոյության հարցին ամենախիմալոր անդադարձը կատարել է Լի Գուոն: St' u Li Guo, “Mamluk historiographic studies: the state of the art”, MSR, vol. I, 1997, pp. 29-43:

⁸⁴ K. Hirschler, *Medieval Arabic Historiography: Authors as actors*, Routledge, London and New York, 2006, pp. 44-62. Այս ուսումնասիրության հեղինակը երկու ժամանակակից հեղինակների՝ Աբու Շամայի *Kitāb al-Rawḍatayn* և Իբն Վասիլի *Mufarriḡ al-kurūb* երկերի համեմատությամբ բնութային է ենթադրում պատմական գիտելիքի գեներացման առանձնա-

արժեքավոր ժառանգությունն է թողել: Նրա ամենահայտնի երկը՝ *Kitāb al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Ṣalāhiyya*-ն («Զույգ պարտեզների գիրք՝ ալ-Նուրիյյա և ալ-Սալահիյյա հարստությունների մասին հաղորդումների»)՝⁸⁵, որը Նուր ալ-Դինի և Սալահ ալ-Դինի կառավարման տարիների պատմությունն է, մեծամասամբ հիմնված է նախորդ սերնդի հեղինակների հաղորդումների վրա, որոնցից մի քանիսի (Իբն Աբի Տալլ, Իմադ ալ-Քաթիր և Իսֆահանի) երկերը մասամբ են մեզ հասել կամ առհասարակ կորսված են⁸⁶: Այս հանգամանքն, անշուշտ, բարձրացնում է դամասկոսցի մատենագրի թողած պատմագրական ժառանգության արժեքը: Դրան հակառակ, մամլուքյան տիրապետության մի քանի տարիները, որ նույնպես ներառված են երկում, չափազանց հպանցիկ են ներկայացված: Աբու Շամայից մեզ են հասել ևս երկու երկեր. մեկը՝ *ʿUyūn al-Rawḍatayn*-ն է («Զույգ պարտեզների աղբյուրներ»)՝⁸⁷, որը վերոնկարագրյալ երկի համառոտագրությունն է, մյուսը՝ *Al-Ḍayl ʿalā al-Rawḍatayn* («Զույգ պարտեզների շարունակություն»)՝ վերնագրով⁸⁸, գրված է որպես նույն երկի «Շարունակություն», բայց ավելի շատ ինքնուրույն գործ է, որում չէջող դրված է հատկապես Դամասկոսի պատմության և նրա ականավոր մարդկանց կենսագրությունների ներկայացման վրա:

հատկություններ և սերտ կապը նրա ստեղծողի կյանքի և գործունեության սոցիալական, մշակութային-ինտելեկտուալ և քաղաքական միջավայրի հետ: Տե՛ս նաև **նոյճի** *Social contexts of Medieval Arabic historical writing: Court scholars versus ideal / withdrawn scholars – Ibn Wāṣil and Abū Ṣāma, in Egypt and Syria in the Fatimid, Ayyubid and Mamluk Eras IV*, ed. by U. Vermeulen and J. Van Steenbergen, Leuven, 2005, pp. 311-331: Աբու Շամայի կյանքին և մատենագրական ժառանգությանը նվիրված առանձին աշխատություն կա: Տե՛ս **Ibrahīm al-Zaybaq**, *Abū Ṣāma, muʿarriḥ Dimašq fī ʿaṣr al-Ayyūbiyyīn (599 –665 h. / 1203-1267 m.)*, Muʿassasat al-Risāla, Bayrūt, 2010:

⁸⁵ **Abū Ṣāma**, *Kitāb al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Ṣalāhiyya*, 5 ց., bi-taḥqīq Ibrāhīm Ṣams al-Dīn, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2002.

⁸⁶ **Ahmad H.**, “Abū Ṣāma”, in *EF*², vol. 1 (A-B), E.J. Brill, Leiden, 1986, p. 150; **K. Hirschler**, *Medieval Arabic Historiography*, p. 12.

⁸⁷ **Abū Ṣāma**, *ʿUyūn al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Ṣalāhiyya*, 2 ց., bi-taḥqīq Aḥmad al-Baysūmī, Dimašq, 1991-1992.

⁸⁸ **նոյճի** *Tarāḡim riḡāl al-qarnayn al-sādis wa-l-sābiʿ al-maʿrūf bi-l-Ḍayl ʿalā al-Rawḍatayn*, bi-taḥqīq Muḥammad al-Kawṭarī, Dār al-ḡīl, Bayrūt, 1974:

Այյուբյան պատմագրության մյուս ականավոր դեմքը՝ Իբն Վասիլն է (մահ. 1298 թ.): Երկար տարիներ Ասորիքի (Քարաք, Համա, Դամասկոս) մի շարք տիրակալների ծառայելով՝ նա 1244 թ. տեղափոխվել է Եգիպտոս և ծառայության անցել սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհի (կառ. 1240-1249 թթ.) մոտ, ում նվիրել է ժամանակագրությունը Al-Tārīḥ al-ṣāliḥī («Սալիհյան պատմություն») վերնագրով⁸⁹:

Այյուբյան դինաստիայի անկումից հետո նա, պետական պաշտոնավարման երկարամյա փորձառություն և հմտություններ ունենալով, հաջողությամբ ինտեգրվեց նաև մամլուքյան կառավարող վերնախավի միջավայր⁹⁰: 1260 թվականին նա կադիի (դատավորի) պաշտոն է ստացել, իսկ 1260-1261 թթ., արդեն որպես մամլուքյան սուլթան ալ-Ջահիր Բալբարսի դեսպան, ուղարկվեց Սիցիլիայի արքա Մանֆրեդի (1258-1266 թթ.) հետ բանակցելու: Նրա հիմնական երկը՝ Mufarriḡ al-kurūb fī aḥbār banī Ayyūb-ը («Այյուբյանների վերաբերյալ հաղորդումների տազնայները վանող [գիրք]»), նույնպես Այյուբյան դինաստիայի իդեալականացված պատմություն է⁹¹: Այս դեսպանագնա-

⁸⁹ **Ibn Wāṣil**, *Kitāb al-Tārīḥ al-ṣāliḥī*, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, 2 ց., al-Makaba al-‘Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2010.

⁹⁰ Իբն Վասիլի կյանքի, գործունեության և պատմագրական ժառանգության մասին տե՛ս Կ. Հիշերի վերը նշված գիրքն ու հոդվածը, ինչպես նաև **նույնի** *Ibn Wasil: An Ayyubid Perspective on Frankish Lordships and Crusades*, in: *Medieval Muslim Historians and the Franks in the Levant*, ed. by Alex Mallett, Brill, Leiden-Boston, 2014, pp. 136-160, ինչպես նաև **D.S. Richards**, “Ibn Wasil, Historian of the Ayyubids”, in *Ayyubid Jerusalem: The Holy City in Context 1187-1250*, ed. by R. Hillenbrand and S. Auld, Altajir Trust, London, 2009, pp. 456-459 և **Ibn Wāṣil**, *Al-Tārīḥ al-ṣāliḥī*, §. 5-38:

⁹¹ **Ibn Wāṣil**, *Mufarriḡ al-kurūb fī aḥbār banī Ayyūb*, 5 ց., bi-taḥqīq Ḡamāl al-Dīn al-Ṣayyāl, Ḥusayn Muḥammad Rabī, Sa‘īd ‘Abd al-Fattāḥ ‘Āṣūr, al-Qāhira, 1953-1977: Երկի վերջին 1248-1261 թթ. պարփակող բերև կարևորագույն մասը երկար ժամանակ է, ինչ ձեռագրում է: Այդ հատորը Թադմուրիի խմբագրությամբ վերջապես լույս տեսավ 2004 թ. (**Ibn Wāṣil**, *Mufarriḡ al-kurūb*, ց. 6, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-‘Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2004): 2010 թ. բնագրի առավել հետևողական մի հրատարակություն նախաձեռնեց Մումամմադ Ռահիմը՝ ֆնուբյան առնելով այդ մասն ընդգրկող բոլոր հայտնի ձեռագրերը: St‘u Mohamed Rahim, *Die Chronik des Ḡamāl ad-Dīn Muḥammad ibn Wāṣil, Mufarriḡ al-Kurūb fī Aḥbār Banī Ayyūb*, Kritische Edition des letzten Teils (646/1248-659/1261) mit Kommentar: Untergang der Ayyubiden und Beginn der Mamlukenherrschaft, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2010: Երկու հրատարակությունների գրախոսությունը տե՛ս **K. Hirschler**, “Mohamed Rahim, *Die Chronik des ibn Wāṣil* (review)”, *OL*, Band 107 / 4-5, 2012, S. 285-286:

ցությունից հետո նրա պատմագրական երկը շարունակել է աշակերտ-ներին մեկը՝ Նուր ալ-Դին Ալի իբն Աբդ ալ-Ռահիմը՝ ավելի հայտնի Իբն ալ-Մուլադի (մահ. 1302 թ.) անունով, ով եղել է Համայի Այյուբյան էմիր ալ-Մալիք ալ-Մուզաֆֆար Մահմուդի (կառ. 1284-1299 թթ.) արքունի գրագիրը: Նա ղեպքերի շարադրանքը հասցրել է մինչև 1296 թ.՝ շատ իրադարձություններ՝ այդ թվում Կիլիկիո հայոց թագավորության դեմ ուղղված արշավանքների նկարագրություններ, ներկայացնելով ականատեսի աչքերով⁹²:

Այյուբյան պատմիչ է նաև ղպտի քրիստոնյա ալ-Մաֆին Զիրչիս իբն ալ-Ամիրը (մահ. 1273 թ.), ով *kātib al-ğayṣ-ī* («բանակի գրագիր») բարձր պաշտոն էր զբաղեցնում Դամասկոսում: Ժամանակակիցներից իբն ալ-Վասիտիի վկայությամբ՝ նա մեղադրվել է մոնղոլների օգտին լրտեսելու մեջ, ինչի համար սուլթան Բայբարսի հրամանով դատապարտվել է տասնմեկամյա բանտարկության⁹³: Ազատ արձակվելուց հետո կյանքի մնացյալ մասն անցկացրել է Դամասկոսում՝ գրելով իր պատմագրական երկը՝ *Al-Mağmūʿ al-mubārak-ը* («Օրհնված ժողովածու»)՝⁹⁴, որ համընդհանուր պատմություն է՝ հասցված մինչև 1260 թ.⁹⁵:

⁹² Այս երկը նույնպես հրատարակվել է Թադմուրիի ջանքերով: Տե՛ս **Ibn al-Muğayzil**, *Dayl Mufarriğ al-kurūb fi aḥbār Banī Ayyūb*, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, al-Makaba al-ʿAsriyya, Ṣaydā-Bayrūt, 2004: Հեղինակի և նրա երկի մասին տե՛ս Անդ, §. 5-25: Հմմտ. **R. Amitai-Preiss**, *Mongols*, p. 4; **L.S. Northrup**, *From slave to sultan: The career of al-Manṣūr Qalāwūn and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678-689 A. H. / 1279-1290 A. D.)*, Franz Steiner Verlag, Stuttgart, 1998, p. 35, 44:

⁹³ **Ibn al-Wāsiṭī**, *Radd ʿalā ahl al-dīmma wa-man tabiʿahum*, bi-taḥqīq Turkī ibn Fahad Āl Saʿūd, al-Riyāḍ, 2010, §. 76. Իբն ալ-Ամիրի բանտարկության հանգամանքների մասին այլ վկայություններ էլ կան: Տե՛ս **R. Amitai-Preiss**, *Mongols*, p. 154: Տե՛ս նաև **S. Moawad**, “Al-Makīn Jirjis ibn al-ʿAmīd (the elder)”, in *Christian-Muslim Relations. A Bibliographical History, Volume 4 (1200-1350)*, ed. by D. Thomas and A. Mallett, E.J. Brill, Leiden-Boston, 2012, pp. 566-571:

⁹⁴ Տե՛ս **Ibn al-ʿAmīd**, *Kitāb al-mağmūʿ al-mubārak / “La Chronique Ayyoubides” dʿal-Makīn ibn al-ʿAmīd*, ed. Cl. Cahen, *BEO*, tome XV, 1955-1957, pp. 109-184, որ վերահրատարակվել է նաև որպես *Aḥbār al-ʿAyyūbiyyīn, Maktabat al-ṭaqāfa al-dīniyya, Būr Saʿūd* (սաունց տաբեթի): Կլ.Կահենի հրատարակած հատվածը նաև ֆրանսերեն թարգմանվություն է ունեցել: Տե՛ս **al-Makīn ibn al-Amīd**, *Chronique des Ayyoubides (602-658/1205-6-1259-60)*, traduction française annotée par Anne-Marie Edde et Françoise Micheau, Académie des inscriptions et belles-lettres, Paris, 1994:

⁹⁵ **J. Den Heijer**, “Coptic Historiography in the Fātimid, Ayyubid and Early Mamluk Periods”, *Medieval Encounters*, vol. 2, Issue 1, 1996, pp. 88-95.

Այյուբյանների և մամլուքների իշխանությունն սահմանագծին ստեղծագործած հեղինակներից է Իբն Խալլիֆանը (մահ. 1282 թ.), ում *Wafāyat al-a'yān wa-anbā' abnā' al-zamān* («Երևելիների մահախոսականներ և հաղորդումներ ժամանակի [ակամավոր] մարդկանց մասին») մեծարժեք կենսագրական բառարանը պարունակում է ականավոր մուսուլմանների՝ այդ թվում իր ժամանակակիցների մասին ավելի քան 3500 կենսագրական հոդվածներ⁹⁶։ Իբն Խալլիֆանը *qāḍī*-ի («դատավոր») օգնականի և ապա *qāḍī*-ի բարձր պաշտոններ է զբաղեցրել Կահիրեում և Դամասկոսում, իսկ 1261 թ. սուլթան Բայբարսի կարգադրությամբ նշանակվել է Դամասկոսի գլխավոր *qāḍī* (*qāḍī al-quḍāt*)։ Նույն պաշտոնում Իբն Խալլիֆանը վերանշանակվել է նաև սուլթան Կալավունի (1279-1290 թթ.) կողմից⁹⁷։

Մամլուքները, սակայն, շուտով «գառն» իրենց պատմիչներին, ովքեր լոյալ դիրքորոշում որդեգրելով իրենց նկատմամբ, բարենպաստ գույներով և լեգիտիմություն գերբերից կներկայացնեին Սուլթանության պատմությունը⁹⁸։ Խոսքը հատկապես այսպես կոչված պալատական կենսագիրների մասին է, ովքեր բարձր պաշտոններ էին զբաղեցնում արքունիքում։ Բահրի մամլուքյան վաղ շրջանի բյուրոկրատ պատմիչներից հիշատակության են արժանի երեքը՝ Իզզ ալ-Դին իբն Շադդադը (մահ. 1285 թ.), Իբն Աբդ ալ-Ջահիրը (մահ. 1292 թ.) և Շաֆի իբն Ալին (մահ. 1330 թ.)։ Իբն Աբդ ալ-Ջահիրին և

⁹⁶ Տե՛ս **Ibn Ḥallikān**, *Wafāyat al-a'yān wa-anbā' abnā' al-zamān*, 8 ց. bi-taḥqīq Iḥsān 'Abbās, Dār Ṣādir, Bayrūt, 1977: *Wafāyat al-a'yān* երկի՝ հայոց պատմության հետ առնչվող պետական և ֆաղափական գործիչների կենսագրություններից հատվածներ է թարգմանել Գ. Մարյանը։ Տե՛ս Իբն Խալլիֆան, *Վէճալաթ էլ-Առեան։ Անհետացած երեւելիներ*, թարգ. Գ. Մըսղեան, տպ. Յուսաբե, Գահիրե, 1935:

⁹⁷ Իբն Խալլիֆանի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս նրա կենսագրական բառարանի Մ.Գ. դե Սլեյնի անգլերեն թարգմանության IV հատորի առաջաբանում։ Տե՛ս **Ibn Khallikan's Biographical Dictionary**, tr. by William MacGuckin de Slane, vol. 4, Oriental Translation Fund of Great Britain and Ireland, London, 1871, pp. v-xix, ինչպես նաև **J.W. Fück**, “Ibn Khallikān”, in *EF*², vol. 3, pp. 832-833:

⁹⁸ **D. Little**, “Historiography”, p. 420.

նրա մատենագրական ժառանգությունը ներքևում առանձին կանգրա-դառնանք, իսկ մյուս երկուսի մասին այստեղ կխոսենք:

Իզզ ալ-Դին իբն Շադդադը ծնվել է Հալեպում: Այյուբյան տիրա-կալ ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք (կառ. 1236-1260 թթ.) նա գրագիր-քարտուղարի պաշտոն է զբաղեցրել Հալեպում: Ալ-Նասիրը, բարձր գնահատելով նրա դիվանագիտական հմտությունները, քանիցս ուղար-կել է դեսպանագնացությունների: 1259 թ., օրինակ, հենց նրան է վստահվել Մայյաֆարիկին քաղաքը մոնղոլների պաշարումից ազա-տելու դիվանագիտական առաքելությունը, որը, սակայն, հաջողու-թյուն չէր ունեցել: Երբ մոնղոլները գրավեցին Հալեպը, իբն Շադդա-դը ստիպված եղավ թողնել Ասորիքն ու փախչել Եգիպտոս⁹⁹: Լավա-դույնս գնահատելով ստեղծված նոր քաղաքական իրադրությունը և գործի դնելով իր դիվանագիտական ունակությունները՝ նա կարճ ժա-մանակ անց արդեն սուլթան Բայբարսի արքունիքում էր: Վերջինիս մահից հետո՝ ալ-Մալիք ալ-Սաիդ Բերքե խանի (1277-1279 թթ.) և ալ-Մանսուր Կալավունի օրոք, նա շարունակել է մեծ հարգանք և հեղի-նակություն վայելել արքունական շրջանակներում¹⁰⁰: Իբն Շադդադը հեղինակ է երկու մեծարժեք պատմագրական երկերի, որոնցից առա-ջինը՝ *Tārīḥ al-Malik al-Zāhir*-ը («Ալ-Մալիք ալ-Ջահիրի պատմությունը»)¹⁰¹, սուլթան Բայբարսի կենսագրությունն է, և մասամբ է մեզ հասել: Մյուս երկը՝ *Al-A'lāq al-Ḥaṭīra fī dīkr umarā' al-Šām wa-l-Ġazīra*-ն¹⁰² («Թափն-

⁹⁹ Տե՛ս D. Sourdél, “Ibn Shaddād”, in *EF*², vol. 3, p. 933; Muḥammad Sa’īd Riḍā, “Ibn Šaddād fī kitābihi al-A’lāq al-ḥaṭīra”, MMA, ց. 14, Baġdād, 1980, ց. 127-138:

¹⁰⁰ D. Little, “Historiography”, p. 422.

¹⁰¹ ‘Izz al-Dīn ibn Šaddād, *Tārīḥ al-Malik al-Zāhir*, bi-taḥqīq Aḥmad Ḥuṭayṭ (Die Geschichte des Sultans Baibars von ‘Izz ad-dīn Muḥammad b. ‘Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Franz Steiner Verlag, Wiesbaden, 1983).

¹⁰² Տարբեր մատերի փաստաթղթայիններից տե՛ս Šarī Lūdī, “Al-A’lāq al-ḥaṭīra li-‘Izz al-Dīn ibn Šaddād”, *al-Mašriq*, ց. 33, 1935, ց. 161-223; *Al-A’lāq al-ḥaṭīra fī dīkr umarā' al-Šām wa-l-Ġazīra* (Dominique Sourdél, La description d'Alep d'Ibn Šaddād), ց. 1.1, bi-taḥqīq Dūmīnīk Sūrdīl, Dimašq, 1953; ‘Izz al-Dīn ibn Šaddād, *Al-A’lāq al-ḥaṭīra fī dīkr umarā' al-Šām wa-l-Ġazīra*, ց. 1.1, 1.2, 3.1, bi-taḥqīq Yaḥyā Zakaryā ‘Abbāra, Dimašq, 1978-1991; Anne-Marie Eddé, “La description de la Syrie du Nord de ‘Izz al-Dīn ibn Shaddād”, *BEO*, t. 32-33, 1980-1981, pp. 265-402 և *Description de la Syrie du Nord*, trad. Anne-Marie Eddé-Terrasse, Institut français de Damas, 1984 (նախնորի ֆրանսերեն քաղաքագրությունը):

կազմին և մեծարժեք վկայություններ Ասորիքի և ալ-Ջազիրայի իշխանների մասին»), պատմատեղագրական բացառիկ կարևորություն աշխատությունն է, որում հեղինակը, ինչպես որ վերնագիրն է հուշում, ներկայացրել է Ասորիքի, Ջազիրայի և հարակից շրջանների մասին իր պատմաաշխարհագրական գիտելիքները¹⁰³: Al-A'laq al-ḥaṭīra-ի Ասորիքին նվիրված մասը հարուստ տեղեկություններ է պարունակում նաև Կիլիկյան Հայաստանի բերդերի և քաղաքների մասին, և նրա թարգմանությունը կարևոր ներդրում կլինեի հայագիտական ուսումնասիրություններում:

Բայբարս (Ḥusn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sīra al-Zāhiriyya – «Ալ-Ջահիրի կենսագրության լավագույն թափված արժանիքների մասին») և Կալավուն (Al-Faḍl al-Ma'tūr min sīrat al-sultān al-Malik al-Manṣūr – «Սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի կյանքից պատմված արժանիքների մասին») ¹⁰⁴ սուլթանների կենսագրությունների հեղինակ է նաև Շաֆի իբն Ալին (մահ. 1330 թ.), ով Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի քրոջ որդին էր և նույնպես կահիրյան դիվանատան գրագիրներից մեկը: Թեև Ḥusn al-manāqib-ը հիմնված է ընդհանուր առմամբ իբն Աբդ ալ-Ջահիրի Al-Rawḍ al-zāhir-ի վրա, այլ կերպ ասած՝ վերջինիս համառոտագրությունն է, Շաֆի իբն Ալին, այնուամենայնիվ, փորձել է տեղ-տեղ լրացումներ կատարել և կամ ուղղումներ մտցնել իբն Աբդ ալ-Ջահիրի հաղորդումներում¹⁰⁵: Կալավունի կենսագրությունը՝ Al-Faḍl al-Ma'tūr-ը, կարծես թե իբն Աբդ ալ-Ջահիրի համապատասխան երկից

¹⁰³ Երկի մասին տե՛ս նաև Z. Antrim, “Making Syria Mamluk: Ibn Shaddād’s Al-A’laq al-Khaṭīrah”, MSR, vol. 11.1, 2007, pp. 1-18; И.Ю. Крачковский, Избранные сочинения, т. 4 (Арабская географическая литература), Издательство Академии Наук СССР, Москва-Ленинград, 1957, стр. 369-372:

¹⁰⁴ Šāfi' ibn 'Alī, Ḥusn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sīra al-Zāhiriyya, bi-taḥqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥuwayṭir, al-Riyāḍ, 1989; ԹԱՊԻՔ՝ Al-Faḍl al-Ma'tūr min sīrat al-sultān al-Malik al-Manṣūr, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmurī, Al-Maktaba al-'Asriyya, Ṣaydā-Bayrūt, 1998.

¹⁰⁵ A.-A. Khawaiter, Baibars the First, pp. 175-179; L.S. Northrup, From slave to sultan, pp. 28-33.

անկախ գործ է¹⁰⁶։ Ըստ ալ-Սաֆադիի կենսագրական բառարանի՝ Շաֆի իբն Ալիին հեղինակել է նաև սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրին նվիրված երկ (ընդ որում՝ մի քանի մասից բաղկացած)՝ *Naẓm al-ḡawāhir fī sirāt mawlānā al-sultān al-Malik al-Nāṣir* («Մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի կյանքի ակամաշար») վերնագրով¹⁰⁷։ Ինչպես Գ. Վան դեն Բոշեն է գրում իր ատենախոսություն մեջ, ինքն ու Ֆ. Բոդենը պարզել են, որ Ֆրանսիայի ազգային գրադարանի թիվ Arabe 1705 ձեռագիրը պարփակում է հիշյալ վարքագրության մասերից մեկը, որն իրենք պատրաստվում են մոտ ապագայում հրատարակել¹⁰⁸։ Շաֆի իբն Ալիի այս երկերը պարունակում են Կիլիկյան Հայաստանին վերաբերող մի շարք եզակի հաղորդումներ, որոնք իբն Աբդ ալ-Ջահիթի և մյուս պատմիչների մոտ չեն գտնվում։

Մամլուքյան ռազմավարչական համակարգի օղակներում հիշյալ երեք բյուրոկրատ պատմիչներից էլ ավելի բարձր պաշտոնական դիրք ունեցող պատմագիրներ էին Բայբարս ալ-Մանսուրին (մահ. 1325 թ.), Աբու ալ-Ֆիդան (մահ. 1331 թ.) և Բաքթաշ ալ-Ֆախրին (մահ. 1344 թ.)¹⁰⁹։ Նրանցից երկրորդը, ինչպես վերևում արդեն նշել ենք, Համայի կառավարիչն էր և հետո նաև սուլթանը, իսկ մյուս երկուսը բարձր պաշտոններ են զբաղեցրել մամլուքյան բանակում ու դիվանատանը։

Բայբարս ալ-Մանսուրին սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Կալափունի ստրուկներից էր (այստեղից էլ «ալ-Մանսուրի» անունը), ուս-

¹⁰⁶ Այս երկու հեղինակների երկերի միջև եղած կապին հանգամանորեն անդրադարձել է Լ. Նորթրափը։ Տե՛ս L.S. Northrup, *From slave to sultan*, pp. 28-33։ Տե՛ս նաև D. Little, “Historiography”, p. 422։

¹⁰⁷ Al-Ṣafadī, *Kitāb al-Wāfi bi-l-wafayāt*, ց. 16, bi-tahqīq Aḥmad al-Arnāʾūt wa-Turkī Muṣṭafā, *Dār ihyaʾ al-turāṭ al-ʿarabī*, Bayrūt, 2000, ց. 46.

¹⁰⁸ Տե՛ս Van Den Bossche G., *The Past, Panegyric, and the Performance of Penmanship Sultanī Biography and Social Practice in Late Medieval Egypt and Syria*, PhD dissertation, Ghent University, 2018, p. 17, 180-188։ Ատենախոսությունը հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում սուլթանական վարձագրությունների ձևաբովանդակային և ֆնաւերգական հատկանիշների, ժամանակի ֆաղափական անցուղարձերի և սցիալական իրողությունների վերաբերյալ նրանց պարունակած ուղերձների վերաբերյալ։ Աշխատանքում նմուշօրինակ են վերցված Մուհի ալ-Դիմի իբն Աբդ ալ-Ջանիթի և Շաֆի իբն Ալիի գրած սուլթանական *sīra*-ները։

¹⁰⁹ Տե՛ս Անդ, p. 423։

վերջինս գնել էր Մոսսուլից դեռ իր էմիրություն տարիներին: 1266 թ. Կալավունի գլխավորությամբ նա մասնակցել է Ասորիքի և Կիլիկիայի արշավանքներին, Անտիոքի 1268 թ. պաշարմանը, Կիլիկյան Հայաստանի դեմ ուղղված մեկ այլ՝ 1275 թվականի արշավանքին: 1286 թ. Բայբարս ալ-Մանսուրին նշանակվել է Քարաք բերդամրոցի կառավարիչ: 1292 թ. նա մասնակցել է Հռոմկլայի դեմ ուղղված մամլուքյան արշավանքին, 1305/1306 թ. Կիլիկիայի հայոց թագավորության դեմ ուղղված մեկ այլ արշավանքի: Սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք Բայբարս ալ-Մանսուրիին շնորհվել է մամլուքյան բանակի հազարապետի կոչում (amīr al-f), մի կարճ ժամանակ էլ զբաղեցրել է նաև «դավադար»-ի (dawādar՝ բառացի՝ «[սուլթանական] թանաքամանը պահող») պաշտոնը: Իր բարձրագույն վարչական դիրքին Բայբարս ալ-Մանսուրին հասել է 1311 թ., երբ նշանակվել է Եգիպտոսի «փոխարքա» (nāʾib al-saltāna), ով ստորագաս էր միայն սուլթանին: Մեկ տարի անց, սակայն, ազատվել է զբաղեցրած պաշտոնից և շուրջ Հինգ տարի անցկացրել բանտում¹¹⁰:

Բայբարս ալ-Մանսուրին երկու պատմագրական երկերի հեղինակ է՝ Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiğra («Ընտրված մտքեր հիշրայի պատմության մասին») և Al-Tuḥfa al-mulūkiyya fī al-dawla al-turkiyya («Արքայական պարզև թյուրքական հարստության մասին»)՝՝: Սրանցից առաջինը համընդհանուր պատմություն է, որի մեզ հասած տարբերակում իրադարձությունների շարադրանքը հասնում է մինչև 1309 / 1310 թ.: Հատկապես արժեքավոր են երկրի՝ մամլուքների պատմությունը նվիրված մասերը, որովհետև դրանցում ներկայացված են քաղաքական իրա-

¹¹⁰ Բայբարս ալ-Մանսուրի կյանքի և գործունեության մասին առանձին ուսումնասիրություն կա: Տե՛ս Wāʾil ʿAbd al-Ḥaqq al-Ḍamūr, *Al-Amīr Baybars al-Manṣūrī, Nāʾib al-saltāna fī al-Karak wa-Miṣr wa-dawruhu fī-l-tāriḥ li-dawlat al-mamālīk al-Baḥriyya*, Maṭbaʿat al-safīr, ʿAmmān, 2009, ինչպես նաև E. Ashtor, “Baybars al-Manṣūrī”, in *EF*², vol. 1, pp. 1127-1128; D. Little, “Historiography”, pp. 4-5; L.S. Northrup, *From slave to sultan*, p. 38; D.S. Richards, “A Mamluk amir’s Mamluk history: Baybars al-Manṣūrī and the Zubdat al-Fikra”, *HIE*, pp. 37-38:

¹¹¹ Տե՛ս Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiğra*, bi-taḥqīq Dunāld Rītšārdz (D.S. Richards), Berlin-Bayrūt, 1998; Գույնի Kitāb al-Tuḥfa al-mulūkiyya fī al-dawla al-turkiyya, bi-taḥqīq ʿAbd al-Ḥamīd Ṣāliḥ Ḥamdān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira, 1987:

դարձություններ, որոնց անձամբ ականատես ու մասնակից է եղել Բայբարս ալ-Մանսուրի ռազմաքաղաքական գործիչն ու պատմագիրը: Մյուսը՝ Al-Tuhfa-ն, Մամլուքյան Հարստության Համառոտ պատմությունն է, որում իրադարձությունների շարադրանքն սկսվում է Այյուբյան դինաստիայի կործանումից՝ հասնելով մինչև 1311/1312 թվականը: Ճիշտ է, այս երկը մեծամասամբ հիմնված է նախորդի վրա, բայց դրա համառոտագրությունը չէ, քանզի պարունակում է այնպիսի հաղորդումներ ու մանրամասներ, որ բացակայում են Zubda-ում¹¹²: Բայբարս ալ-Մանսուրիի երկերը հայ-մամլուքյան հակոտնյա հարաբերությունների վերաբերյալ արժեքավոր հաղորդումներ են պարունակում, որոնց մեծ մասն իրադարձությունների անմիջական մասնակցի և ականատեսի վկայություններ են¹¹³:

Բայբարս ալ-Մանսուրիի գրչին է վերագրվում նաև Muhtār al-aḥbār¹¹⁴ վերնագիրը կրող երկը, որի մասին տեսակետ կա, թե Zubda-ի՝ մամլուքների պատմությանը նվիրված մասի համառոտ վերաշարադրանքն է՝ չնայած բովանդակային բազմաթիվ տարբերություններին¹¹⁵:

Աբու ալ-Ֆիդան, ով սերում էր Այյուբյան դինաստիայից (նա Համայի Այյուբյան էմիր ալ-Մուզաֆֆար Մահմուդ Բ-ի զարմիկն էր), նույնպես հաջողությամբ ինտեգրվեց նոր իշխանական շրջանակներ: Մամլուքներին մատուցած ծառայությունների և դրսևորած հավատարմության համար նա սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի կողմից նշանակվել է Համայի կառավարիչ (1311 թ.) և հետո նաև անգամ արժանացել սուլթան (1321 թ.) տիտղոսի: Աբու ալ-Ֆիդան ակտիվ մասնակցություն է ունեցել եգիպտական և ասորիքյան զորքերի՝ ֆրանկների, Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների դեմ ուղղված արշավանքներին՝ դրանք իր պատմության մեջ՝ Al-Muḥtaṣar fī tāriḥ al-bašar-ում («Մարդկության համառոտ պատմություն») ներկայացնելով ականատեսի

¹¹² D. Little, *An Introduction*, p. 6.

¹¹³ Al-Ḍamūr, *Al-Amīr Baybars al-Manṣūrī*, §. 142-150.

¹¹⁴ Baybars al-Manṣūrī, *Muhtār al-aḥbār*, bi-taḥqīq ‘Abd al-Ḥamīd Ṣāliḥ Ḥamdān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira, 1993.

¹¹⁵ D.S. Richards, “A Mamluk amir's Mamluk history”, p. 38.

աչքերով¹¹⁶: Չնայած դրան, ինչպես արդի հետազոտողների ուսումնասիրություններն են ցույց տալիս, Սուլթանությունից գործերին վերաբերող նրա հաղորդումների մի մասը հիմնված են ժամանակակից պատմիչներին՝ ի մասնավորի Բայբարս ալ-Մանսուրիի Zubda-ի և Իբն Վասիլի շարահարող Իբն ալ-Մուղայզիլի վկայությունների վրա¹¹⁷: Ինչպես արդեն վերևում առիթ ենք ունեցել նշելու, Աբու ալ-Ֆիդայի այս երկի համառոտագրություն-շարունակություն է գրել Իբն ալ-Վարդին (մահ. 1349 թ.) *Tatimmat al-Muḥtaṣar fī tāriḥ al-baṣar* («Մարդկության համառոտ պատմության շարունակություն») վերնագրով: Նա ընդամենը տասնութ տարի է ավելացրել իրադարձությունների շարադրանքին¹¹⁸:

Աբու ալ-Ֆիդայից մեզ է հասել նաև *Taqwīm al-buldān* («Երկրների տեղագրություն») վերնագրով աշխարհագրական երկ, որում Ասորիքի, Պաղեստինի և հարակից շրջանների մասին բառահոգեվածները մեծամասամբ հիմնված են հեղինակի անձնական դիտարկումների վրա¹¹⁹:

Բազր ալ-Դին Բաբթաշ ալ-Ֆախիրին սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք զբաղեցրել է *naqīb al-ḡuyūṣ*-ի կամ այսպես ասած՝ գլխավոր ռազմական համհարզի ազդեցիկ պաշտոնը¹²⁰: Կենսագրական բառարաններում և պատմական երկերում (ալ-Շուջաի, ալ-Սաֆադի,

¹¹⁶ Հեղինակն իր պատմությունն սկսում է մարդկության նախահայր Ադամից՝ հասցնելով մինչև 1329 թ.: Տե՛ս **Abū al-Fidāʾ**, *Kitāb al-Muḥtaṣar fī tāriḥ al-baṣar*, 4 ց., al-Maṭbaʿa al-Ḥusayniyya al-Miṣriyya, al-Qāhira, 1907: Այս աշխատանքը գրելիս օգտագործել ենք մի արդի հրատարակություն, որը վերևում արդեն քննարկված ծանոթագրել ենք: Տե՛ս նաև **H.A.R. Gibb**, “Abu l-Fidāʾ”, in *EP*, vol. 1, pp. 118-119:

¹¹⁷ **L.S. Northrup**, *From slave to sultan*, p. 45.

¹¹⁸ Տե՛ս **D. Little**, *An Introduction*, pp. 66-67: Հմմտ. **H.A.R. Gibb**, “Abu l-Fidāʾ”, p. 119:

¹¹⁹ **Abū al-Fidāʾ**, *Taqwīm al-buldān* (Géographie d'Aboulféda, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840); **И.Ю. Крачковский**, *Избранные сочинения*, т. 4, стр. 386-394.

¹²⁰ Ըստ ալ-Կալկաշանդիի՝ այս պաշտոնը զբաղեցնող անձի պարտականությունն էր արժույթի հրավիրված եմիրներին ուղեկցել սուլթանի մոտ, հսկել սուլթանին պաշտոնական արարողությունների և արշավանքների ժամանակ, կալանքի դատապարտված բարձրաստիճան պաշտոնյաներին տեղափոխել բանտ և կալանավայրից դատարան, մահվան դատապարտվածներին՝ պատժի իրակացման վայր, բանակին իրազեկել շերքի կամ արշավանքի պատրաստվելու մասին: Տե՛ս **D. Ayalon**, “Studies on the Structure of the Mamluk Army- III (Holders of Offices Connected with the Army)”, *BSOAS*, vol. 16, 1954, p. 64:

ալ-Մակրիզի, Իբն Հաջար ալ-Ասկալանի)¹²¹ Բաքթաշի մասին պահպանված խիստ սուղ կենսագրական տեղեկություններից հայտնի է, որ ռազմական այր լինելուց զատ՝ նա նաև մուհադդիս (հազիսագետ) է եղել: Մինչդեռ ժամանակակիցները ոչինչ չեն հաղորդում նրա ժամանակագրության մասին, որը մեզ է հասել երկու ձեռագրով: Ձեռագրերից մեկը գտնվում է Բեռլինի պետական գրադարանի արաբական հավաքածուում՝ 9835 համարի ներքո: Այն խմբագրվել և պատմաբանների սեղանին է դրվել Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրիի կողմից 2010 թ.¹²²: Բավարիայի ազգային գրադարանում Cod.arab 37 համարի ներքո գտնվող մեկ ուրիշ ձեռագիր բաղկացած է երկու մասից: Առաջին մասն Անանուն հեղինակի գրչին պատկանող մի ժամանակագրություն է, որը հրատարակվել է 1919 թվականին չվեդ արևելագետ Կաուլ Վիլհելմ Զետտերշտայնի կողմից¹²³: Ձեռագրի երկրորդ մասը Բաքթաշ ալ-Ֆախրիի վերագրվող ժամանակագրությունն է, որից խմբագիրը լրացրել է բեռլինյան ձեռագրում եղած բացատները և կորած էջերը: Հատկանշական է, որ Թադմուրիի կարծիքով մյուսնխենյան ձեռագրում պահպանված և Զետտերշտայնի կողմից հրատարակված բնագիրը նույնպես ամենայն հավանականությամբ պատկանում է Բաքթաշ ալ-Ֆախրիի գրչին:

Եգիպտացի անանուն հեղինակի վերոբերյալ տարեգրությունն ընդգրկում է 1291-1340 թթ. իրադարձությունները: Մամլուքյան պատմագրության ուսումնասիրողների շրջանում այս սկզբնաղբյուրը հայտնի է հրատարակչի անունով՝ «Զետտերշտայնի ժամանակագրություն»: Երկում առկա ինքնակենսագրական բնույթի ակնարկումներից պարզ է դառնում, որ ժամանակագրության հեղինակը մամլուքյան

¹²¹ Šams al-Dīn al-Šuġġāʾī, Tārīḥ al-Malik al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn al-ṣāliḥī wa-awlādihi (Die Chronik aš-Šuġāʾīs, hrsg. Barbara Schäfer, Franz Steiner Verlag, Wiesbaden, 1977), §. 276; Al-Šafadī, Aʿyān al-ʿaṣr wa-aʿwān al-naṣr, ǧ. 1, Dār al-Fikr, Dimašq, 1998, §. 699; Al-Maqrīzī, Al-Sulūk, ǧ. 2.3, §. 274; Ibn Haǧar, Al-Durar al-kāmina, ǧ. 1, §. 482.

¹²² Badr al-Dīn Bektāš al-Fāḥirī, Tārīḥ al-Fāḥirī, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmurī, Al-Maktaba al-ʿAṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2008.

¹²³ K.V. Zetterstéen, Beiträge zur Geschichte der Mamlukensultane in den Jahren 690-741 der Hira nach arabischen Handschriften, E.J. Brill, Leiden, 1919 (հետայսու պայմանականորեն կանվանենք *al-Muʿallif al-Maǧhūl*, այն է՝ «Անանուն հեղինակ»):

բանակի ոչ այնքան բարձր դիրքի զինվորական է եղել, ով մասնակցություն է ունեցել, օրինակ, Աքրայի և Հայոց կաթողիկոսանիստ Հռոմիլայի 1292 թ. գրավմանը¹²⁴: Լիթթլի կարծիքով որոշակի կապ կա այս հեղինակի և Իբն ալ-Դավադարիի միջև. բացառված չէ, որ երկու հեղինակներն էլ օգտագործած լինեն միևնույն աղբյուրը¹²⁵:

Բահրի մամլուքյան շրջանի նշանավոր պատմիչներից է նաև Իբն ալ-Դավադարին (մահ. 1335 թ. հետո): Նա սերում էր թյուրքական ծագման բարձրաստիճան ռազմական գործիչների ընտանիքից. նրա պապը Սարխադի տերն էր, հայրը՝ Ջամալ ալ-Դին ալ-Դավադարին, նույնպես պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել ալ-Աշրաֆ ինսլի և ալ-Մալիք ալ-Նասիր սուլթանների օրոք¹²⁶: Նա, հետևաբար, ռազմական արխտոկրատիայի առաջին սերնդի այսպես կոչված *awlād al-nās* (այն է՝ «ժողովրդի (մամլուֆների) որդիներ») կոչված դասի ներկայացուցիչ էր, ովքեր, ի տարբերություն իրենց հայրերի՝ ի ծնե ազատ մուսուլմաններ լինելով՝ մամլուքներ չէին համարվում և գործնականում զրկված էին ռազմական գործով զբաղվելու հնարավորությունից, ուստի ստիպված էին համալրել մտավորական դասի շարքերը և եթե հասնում էին բարձր պաշտոնների, ապա գերազանցապես կրոնական և վարչական ոլորտներում¹²⁷:

Իբն ալ-Դավադարիի երկն ինը մասից բաղկացած համընդհանուր պատմություն է՝ *Kanz al-durar wa-ğāmi‘ al-ğurar*-ը («Մարգարիտների գանձարան և քանկագիրն իրերի պահից»)¹²⁸ վերնագրով, որից հատկապես

¹²⁴ D. Little, *An Introduction*, p. 18.

¹²⁵ Տե՛ս Անդ, p. 19, 23-24:

¹²⁶ Տե՛ս B. Lewis, “Ibn al-Dawādārī”, in *EF*, vol. 3, p. 744; D. Little, *An Introduction*, pp. 10-12, ինչպես նաև Թյօյի՝ “Historiography”, p. 424; U. Haarmann, *Quellenstudien zur frühen mamlukenzeit (Islamkundliche Untersuchungen, Band 1)*, Klaus Schwarz Verlag, Freiburg, 1970, S. 61-70:

¹²⁷ D. Ayalon, “Awlād al-nās”, in *EF*, vol. 1, p. 765; N. Rabbat, “Representing the Mamluks”, pp. 66-67. Հմմտ. A. Levanoni, *A turning point in mamluk history: The third reign of al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn (1310-1341)*, E.J. Brill, Leiden, 1995, pp. 42-52.

¹²⁸ Ibn al-Dawādārī, *Kanz al-durar wa-ğāmi‘ al-ğurar*, 9 ք., al-Qāhira-Bayrūt, 1960-1994 (տարբեր խմբագրիներ՝ Bernd Radke, Edward Badeen, Muḥammad al-Sa‘īd Ġamāl al-Dīn, Gunhild Graf և Erika Glassen, Dorothea Krawulsky, Ṣalāḥ al-Dīn al-Munağğid, Sa‘īd ‘Abd al-Fattāḥ ‘Āṣūr, Ulrich Haarmann, Robert Roemer).

արժեքավոր են վերջին երկու մասերը, որ նվիրված են Բազրիների պատմությանը: Մամլուքների իշխանության վաղ պատմությունը շարադրելիս Իբն ալ-Դավադարին օգտվել է իրենից առաջ ապրած հեղինակներից: Ինչևէ, իր ժամանակի շատ իրադարձություններ ներկայացնելիս նա օգտագործել է Հոր և նրան ծանոթ ռազմական գործիչների վկայությունները: Ավելին, իր երկին բացառիկություն հաղորդելու համար երբեմն միտումնաբար թաքցրել է իր իրական աղբյուրները՝ դրանց վկայությունները վերագրելով իր հորը¹²⁹: Այնուհանդերձ, Հոր միջոցով նրան հասու են եղել ժամանակի մյուս ժամանակագիրների համար անհասանելի մի շարք փաստաթղթեր, որոնք նա ներառել է իր պատմության մեջ¹³⁰: Իբն ալ-Դավադարի պատմության մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ այն իր ընդհանուր գծերով շեղվում է ժամանակի տարեգրությունների խիստ պատմական կադապրված ոճից, քանզի համեմված է Հարուստ բանահյուսական նյութով, գվարձախոսություններով, բանաստեղծական մեջբերումներով¹³¹:

Այս հեղինակների ժամանակակիցն է Կիրտայ ալ-Իզզի ալ-Խազինդարին, ում մասին կենսագրական տեղեկությունները նույնպես չափազանց սուղ են: Համենայն դեպս, նրա անունը հուշում է, որ եղել է մամլուք գանձապահ (hāzindār): Կիրտայի Tārīḥ al-nawādir mim mā ḡarā li-l-awā'il wa-l-awāḥir («Ջվարեախոսությունների պատմություն՝ սկզբում և վերջում տեղի ունեցածի մասին») երկից պահպանվել են երկու մասեր, որոնցից առաջինն ընդգրկում է իսլամի պատմության առաջին դարերը, երկրորդ առավել արժեքավորը՝ 1229-1290 թթ. պատմությունը¹³²: Մատենագիրն օգտվել է այլ հեղինակների պատմագրական երկերից՝ մասնավորապես Իբն ալ-Վահիդից, ում պատմությունը, ցավոք, մեղջի հասել¹³³: Tārīḥ al-nawādir-ում շատ են ժամանակագրական անճշտությունները, կան անգամ հորինած իրադարձությունների նկա-

¹²⁹ U. Haarmann, *Quellenstudien*, S. 110-111; D. Little, “Historiography”, p. 425.

¹³⁰ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 48; D. Little, *An Introduction*, p. 11.

¹³¹ Տե՛ս նույնի՝ “Historiography”, p. 425:

¹³² Qirtāy al-ʿizzī al-Ḥazīndārī, *Tārīḥ maǧmūʿ al-nawādir mim mā ḡarā li-l-awā'il wa-l-awāḥir*, bi-taḥqīq Hürst Hayn wa-Muḥammad al-Ḥuḡayrī, Bayrūt, 2005 (Berlin, Klaus Schwarz Verlag, 2005).

¹³³ Cl. Cahen, “La chronique de Qirtāy et les Francs de Syrie”, *JA*, 1937, pp. 140-145.

րագրություններ, ինչպիսին է, օրինակ, սուլթան Բայբարսի կողմից Անգլիա դեսպանություն ուղարկելու մասին անհեթեթ հաղորդումը: Այս հանգամանքը ստիպում է «սառն աչքով նայել երկում առկա մյուս բացառիկ տեղեկություններին, որ տալիս է հեղինակը»¹³⁴: Սա չի նշանակում, որ պետք է ամբողջ երկը կասկածելի համարել և դեն նետել, այլ անհրաժեշտ է այն զգուշությամբ օգտագործել¹³⁵: Երկը նաև որոշ ուշագրավ մանրամասներ է պարունակում այլ աղբյուրներից հայտնի իրադարձությունների վերաբերյալ:

Մամլուքյան Եգիպտոսի և Ասորիքի պատմության ուսումնասիրության կարևորագույն աղբյուրներից է Շիհաբ ալ-Դին Ահմադ իբն Աբդ ալ-Վահհաբ ալ-Նուվայրիի (մահ. 1332 թ.) հսկայածավալ հանրագիտարանային աշխատությունը՝ *Nihāyat al-arab fī funūn al-adab*-ը («Գրագրության համար խիստ ցանկալի գիտությունների մասին»)՝¹³⁶: Արքունական գրագրի որդի լինելով՝ ալ-Նուվայրին ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք ռազմական և վարչական բարձր պաշտոններ (*sāhib diwān al-ḥāṣṣ*՝ սուլթանական ունեցվածքի վերատեսուչ, *sāhib diwān al-inṣā*՝ դիվանապետ, գլխավոր գրագիր, *nāẓir al-ḡuyūṣ*՝ բանակի [ֆինանսական] վերատեսուչ և այլն) է զբաղեցրել ինչպես Կահիրեում, այնպես էլ Դամասկոսում, Տրիպոլիում և Սուլթանության այլ նահանգներում¹³⁷:

Պետական ծառայողի իր բուռն գործունեության մայրամուտին ալ-Նուվայրին սկսել է գրել իր *Nihāyat al-arab*-ը, որով իր առջև նպատակ է դրել հանրագումարի բերել այն հիմնարար հումանիտար գիտելիքները, որոնք անհրաժեշտ էին իր ժամանակի արքունական գրագրին և ընդհանրապես ինտելեկտուալին՝ *adīb*-ին: Հեղինակն իր

¹³⁴ R. Irwin, *The Image of the Byzantium and the Frank in Arab Popular Literature of the late Middle Ages*, in: *Latins and Greeks in the Eastern Mediterranean after 1204*, ed. by B. Arbel, B. Hamilton and D. Jacoby, London, 1989, p. 240.

¹³⁵ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 47.

¹³⁶ Al-Nuwayrī, *Nihāyat al-arab fī funūn al-adab*, 33 ց., Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2004.

¹³⁷ Стѣп М. Chapoutot-Remadi, “Al-Nuwayrī”, in *IE²*, vol. 8, pp. 156-158; И.Ю. Крачковскій, *Избранные сочинения*, т. 4, стр. 402-403; D. Little, *An Introduction*, p. 24, ինչպես նաև նույնի՝ “Historiography”, p. 430; E. Muhanna, *The World in a Book: Al-Nuwayri and the Islamic Encyclopedic Tradition*, Princeton University Press, Princeton and Oxford, 2018, pp. 13-15:

երկը բաժանել է հինգ գլուխների (կոսմոգրաֆիա կամ տիեզերագրություն, մարդ, բուսական աշխարհ, կենդանական աշխարհ, պատմություն), որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է *adāb*-ի մեկ գիտություն, որ նա *fann* է անվանում: Յուրաքանչյուր գիտություն իր հերթին ստորաբաժանվում է հինգ մասերի (*qism*): Վերջին գիտությունը, որ զբաղեցնում է հանրագիտարանի կեսից ավելին, նվիրված է պատմությանը: Սա, սակայն, ոչ թե համընդհանուր պատմություն է, այլ բաժանված է առանձին դինաստիաների նվիրված մասերի (օրինակ, սելջուկներ, Զանգիններ, մոնղոլներ¹³⁸, մամլուքներ և այլն)¹³⁹: Մամլուքների պատմությանը նվիրված հատվածում ալ-Նուվայրին օգտագործել է ինչպես եգիպտացի (Բայբարս ալ-Մանսուրի), այնպես էլ ասորիքցի հեղինակների՝ ալ-Յունինիի, ալ-Ջազարիի, ալ-Բիրզալիի երկերը, որոնցից նա հաճախակի մեջբերումներ է կատարում: Չնայած դրան՝ ալ-Նուվայրին իր ժամանակի շատ իրադարձություններ էլ ներկայացնում է ակնատեսի աչքերով: Բացի այդ, նա, ինչպես որ Բայբարս ալ-Մանսուրին, բարձր պաշտոններ զբաղեցնելով և չափազանց մոտ կանգնած լինելով մամլուքյան բարձրագույն կենտրոնական իշխանությանը, հնարավորություն է ունեցել օգտվելու պաշտոնական փաստաթղթերից և արխիվային նյութերից¹⁴⁰:

Մամլուքյան մատենագրության մյուս ոչ պակաս հայտնի հանրագիտարանագիրը Շիհաբ ալ-Դին Ահմադ Իբն Ֆադլ Ալլահ ալ-Ումարին (մահ. 1349 թ.) է: Նա ծնվել է Դամասկոսում՝ տեղի և հետո նաև Կահիրեի արքունի դպրատան գլխավոր գրագիր (*kātib al-sirr*) Յահյա Իբն Ֆադլ Ալլահի ընտանիքում: 1329 թ., երբ Յահյան կանչ-

¹³⁸ R. Amitai-Preiss, “Al-Nuwayrī as a Historian of the Mongols”, *HIE*, pp. 23-36; L. Armstrong, “The Making of a Sufi: al-Nuwayrī’s Account of the Origin of Genghis Khan”, *MSR*, vol. 10.2, 2006, pp. 153-160.

¹³⁹ Մամլուքյան հանրագիտարանային գրականության և առանձնապես ալ-Նուվայրիի *Nihāyat al-arab* աշխատության մասին հանգամանակից տե՛ս է. Մոմաննայի վերջ մեջբերված ուսումնասիրությունը:

¹⁴⁰ D. Little, *An Introduction*, p. 24, ինչպես նաև նույնի “Historiography”, p. 430; L.S. Northrup, *From slave to sultan*, p. 46. Տե՛ս նաև Sh. M. Elham, *Kitbugā und Lāghīn: Studien zur Mamluken-Geschichte nach Baibars al-Manṣūrī und al-Nuwayrī*, Klaus Schwarz, Freiburg, 1977:

վել է Եգիպտոս և նշանակվել Կահիրեի սուլթանական ղեկավարության գլխավոր գրագիր, Շիհաբ ալ-Դինն ուղեկցել է հորը՝ նշանակվելով գլխավոր գրագրի տեղակալի պաշտոնում: Հոր՝ ծեր և հիվանդ լինելու պատճառով Շիհաբ ալ-Դինը փաստացիորեն ինքն է ղեկավարել ղեկավարության աշխատանքը՝ մեծ դերք և հարգանք ձեռք բերելով արքունիքում: Սակայն շատ չանցած՝ սուլթան ալ-Մալիք ալ-Նասիր Մուհամմադի հետ վիճելու և Ասորիքի փոխարքայի կողմից Դամասկոսի գլխավոր գրագրի պաշտոնում ղպտիի նշանակումը հաստատելու նրա որոշումը վիճարկելու համար նա հեռացվել է զբաղեցրած պաշտոնից և բանտարկվել: 1337 թ. Յահյա իբն Փադլ Ալլահի մահից հետո նրա զբաղեցրած պաշտոնում նշանակվել է մյուս որդին՝ Ալա ալ-Դին Ալին: Ինչ վերաբերում է Շիհաբ ալ-Դինին, ապա վերջինս ազատ արձակվելուց հետո՝ մի կարճ ժամանակով, գլխավոր գրագրի պաշտոն է զբաղեցրել Դամասկոսում: Կյանքի վերջին տարիները նվիրել է իր երկու հիմնարար աշխատությունները գրելուն¹⁴¹: Ալ-Ումարիի առաջին երկը նրա բազմահատոր *Masālik al-abṣār fī mamālik al-amṣār* («Երկրների թագավորությունները նամակով ուղիներ») հանրագիտարանային աշխատությունն է¹⁴²: Այն, ինչպես որ *Nihāyat al-arab*-ը, ունի պատմությանը նվիրված գլուխ, որն ընդգրկում է հիջրայից մինչև 1342 / 1343 թ. պատմությունը: Երկը գերազանցապես հիմնված է նախորդ սերնդի և ժամանակակից այլ պատմիչների երկերի վրա: Հատկանշական է, որ անգամ իր ապրած ժամանակի պատմությունը շարադրելիս հեղինակը պարզապես պատճենել է, օրինակ, ալ-Չահաբիի *Kitāb duwal al-Islām* երկից¹⁴³:

¹⁴¹ K.S. Salibi, “Ibn Faḍl Allāh al-‘Umārī”, in *EF*, vol. 3, p. 758; И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 405-411; D.S. Richards, *Egypt and Syria in the Early Mamluk Period an extract from Ibn Faḍl Allāh al-‘Umārī’s Masālik al-abṣār fī Mamālik al-Amṣār*, Routledge, London and New York, 2017, pp. 1-8.

¹⁴² Al-Umārī, *Masālik al-abṣār fī mamālik al-amṣār*, 27 ց., bi-taḥqīq Kāmil Salmān al-Ğubūrī, Dār al-kutub al-‘ilmiyya, Bayrūt, 2010. Դոնալդ Ռիչարդսը վերջերս փաղվածքներ է թարգմանել այս երկից: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

¹⁴³ D. Little, *An Introduction*, p. 40, ինչպես նաև նույնի “Historiography”, p. 431.

Ալ-Ումարիի մյուս երկը՝ *Al-Taʿrīf bi-l-muṣṭalah al-šarīf*-ը («Մանրագում բարձր տեղմիմաբանության (ոճի) հետ») ¹⁴⁴, արքունական գրագրությանն ու քարտուղարությանը նվիրված բացառիկ կարևորության ձեռնարկ է՝ իր ժանրի ու տեսակի մեջ առաջիններից մեկը մամլուքյան մատենագրության մեջ ¹⁴⁵: Նրանում հեղինակը ներկայացնում է Սուլթանության վարչական կառուցվածքի և կառավարման առանձնահատկությունները, բացատրում է պաշտոնական գրագրության բնույթը, տալիս է սուլթանության տեղական կառավարիչների, ցեղապետների, զանազան կրոնաթերիական խմբերի ղեկավարների, հարևան երկրների տիրակալների (այդ թվում՝ հայոց արքաների) հետ պաշտոնական նամակագրության բանաձև-կաղապարների օրինակներ: Ալ-Ումարիի երկու երկերը լայնորեն օգտագործվել են հաջորդ սերնդի հեղինակների՝ մասնավորապես ալ-Կալիլաշանդիի (մահ. 1418 թ.) կողմից, ում շնորհիվ արքունի քարտուղարության ձեռնարկներ գրելու ավանդույթը հասել է իր բարձրակետին: Ալ-Ումարիի գրագրության ձեռնարկի լրամշակում (Taṭqīf) է հեղինակել Թակի ալ-Դին Աբդ ալ-Ռահման իբն Մուհամմադ ալ-Թալմին՝ ավելի շատ հայտնի իբն

¹⁴⁴ Տե՛ս **al-ʿUmārī**, *Kitāb al-Taʿrīf bi-l-muṣṭalah al-šarīf*, Maṭbaʿat al-ʿĀšima, al-Qāhira, 1894, ինչպես նաև երկի՝ Սամիր ալ-Դուրուբի կատարած հետազոտությունը, որը ձեռքի տակ չեմք ունեցել: Տե՛ս **Samīr Maḥmūd al-Durūbī**, *A Critical Edition of and Study on Ibn Faḍl Allāh's Manual of Secretaryship "al-Taʿrīf bi'l-Muṣṭalah al-Sharīf"*, Mu'tah University, Karak, 1992:

¹⁴⁵ Ընդունված է Մամլուքյան դարաշրջանի արքունի գրագրության ձեռնարկների ժանրի առաջին հեղինակ համարել Շիհաբ ալ-Դին Մահմուդ ալ-Հալաբիին (մահ. 1325 թ.): Նա 1317 թվականից մինչև իր մահը գլխավոր ֆարտուղարի (*kātib al-sirr*) պաշտոն է զբաղեցրել Դամասկոսի դիվանատանը: Ալ-Հալաբիի գլխավոր երկը *Ḥusn al-tawassul ilā šināʾat al-tarassul* («Նամակագրության արվեստին լավագույնս տիրապետելու մասին») ձեռնարկն է (al-Maṭbaʿa al-Wahabiyya, al-Qāhira, 1880), որում, այնուամենայնիվ, շեշտն ավելի շատ դրված է գրագրի հետադասական ձևերի վրա, այլ ոչ թե գործնական ունակությունների: Այնուամենայնիվ, երկի վերջին մասում ընդգրկված են մի քանի փաստաթղթեր կամ գուցե դրանց սևագրություններ, ինչպես օրինակ Հայոց արքային ուղղված մի այսպես կոչված «հազանդության հորդոր» և մի «նշանակման կարգադրություն» (*taqlīd li-mutamallik Sīs*), որոնք ուսումնասիրվել են մեր կողմից առանձին հոդվածով: Տե՛ս **Գ. Դանիելյան**, «Շեքիպտոսի և Ասորիի սուլթանից Կիլիկիո Հայոց արքային ուղղված երկու վավերագիր» ըստ Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի *Ḥusn al-tawaṣṣul* երկի և նորահայտ սկզբնաղբյուրային փաստերի», 2021 (անտիպ): Ալ-Հալաբիի մասին տե՛ս **A.F. Broadbridge**, “Diplomatic conventions in the Mamluk Sultanate”, *Annales Islamiques*, 41, 2007, p. 99:

Նագիր ալ-Ջալշ (մահ. 1384 թ.)¹⁴⁶ անունով: Այն Կիլիկիայի հայոց արքաների հետ նամակագրության կաղապարների վերաբերյալ որոշ նյութ է պարունակում, որը բացակայում է ալ-Ումարիի մոտ¹⁴⁷:

ԺԴ դարի արաբագիր պատմիչներից հիշատակության է արժանի նաև ազգությունը չգտնվող իբն ալ-Ասսալ Մուֆադդալ իբն Աբի ալ-Ֆադալը: Ժամանակի կենսագրական բառարանները նրա մասին տեղեկություններ չեն հաղորդում: Հայտնի է միայն, որ նա իր երկը՝ *Al-Nahğ al-sadid wa-l-durr al-farid fīmā ba'd tāriḥ ibn al-'Amīd*-ը («Ճիշտ ուղի և եզակի մարգարիտ՝ ի լուսնի իբն ալ-Ամիդի պատմության») ¹⁴⁸, *ավարտին է հասցրել 1358 թ.: Ինչպես վերնագրից է երևում, Մուֆադդալի պատմությունն ալ-Մաքին իբն ալ-Ամիդի երկի շարունակությունն է, որին հարևանցի անդրադարձել ենք վերևում: Ժամանակակից ուսում-*

¹⁴⁶ *St' u Ibn Nāzīr al-Ġayṣ, Taṭqīf al-Ta'rif bi-l-muṣṭalah al-ṣarīf*, bi-tahqīq Rūdulf Fasālī, al-Ma'had al-'Ilmī al-Faransī li-l-aṭār al-ṣarqiyya, al-Qāhira, 1987: Ալ-Ումարիի և իբն Նագիր ալ-Ջալշի ձեռնարկների մասին տե՛ս նաև **A.F. Broadbridge**, *Diplomatic conventions*, pp. 100-104: Մամլուքյան պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար վավերազգրական նյութի օգտագործման կարևորության մասին հրաշալի հոդված ունի Ֆրեդերիկ Բոդենը, որը, թերևս, արդեն լրացման կարիք ունի վերջին երկու տասնամյակների ընթացքում գիտական շրջանառության մեջ դրված նորահայտ վավերագրական նյութի հաշվառմամբ: *St' u F. Bauden*, “Mamluk Era Documentary Studies: The State of the Art”, *MSR*, vol. IX/1, 2005, pp. 15-60:

¹⁴⁷ Ալ-Ումարիի, իբն Նագիր ալ-Ջալշի և ալ-Կալկաշանդիի երկերում մամլուքյան սուլթանների և Կիլիկիո հայոց թագավորների դիվանագիտական նամակագրությանը վերաբերող նյութն ուսումնասիրել ենք առանձին հոդվածով: *St' u Գ. Դանիելյան*, «Հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրությունն ըստ ալ-Ումարիի, իբն Նագիր ալ-Ջալշի և ալ-Կալկաշանդիի ձեռնարկների», *Բազմավէպ հայագիտական հանդես*, Սուրբ Ղազար, Վենետիկ, 2016, № 2, էջ 44-98:

¹⁴⁸ Երկում շարադրված է եգիպտոսի և Ասորիի 1260-1341 թթ. պատմությունը: 1260-1317 թթ. իրադարձություններն ընդգրկող հատվածը հրատարակել և ֆրանսերեն է թարգմանել է. Բլոշեն, մնացած մասը՝ Ս. Կորտանտամերը (գերմաներեն թարգմանությամբ): *St' u Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il*, *Al-Nahğ al-sadid wa-durr al-farid fīmā ba'd tāriḥ ibn al-'Amid* (*Moufazzal ibn Abil-Fazā'il, Histoire des sultans mamlouks*, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet, *Patrologia Orientalis* (հետայսու՝ *PO*), t. 12, 14, 20, Paris, 1919-1929; Ägypten und Syrien zwischen 1317 und 1341 in der Chronik des **Mufaḍḍal b. Abī l-Faḍā'il** von Samira Kortantamer, Klaus Verlag, Freiburg, 1973: Վերջերս լույս է տեսել երկի բնագրի նախորդ երկու հրատարակությունները մեկտեղող հատորը: *St' u Ibn al-'Assāl Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il*, *Al-Nahğ al-sadid wa-durr al-farid fīmā ba'd tāriḥ ibn al-'Amid*, bi-tahqīq Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn 'Alī al-Sayyid, ǧ. 1-2, Dimašq, Dār sa'd al-dīn, 2017:

նասիրողին առաջին հայացքից կարող է թվալ, թե նա գործ ունի մի եզակի պատմություն հետ, որը, դպտիի ձեռքով գրված լինելով, արժեքավոր տեղեկություններ պիտի պարունակի ժամանակի անցքերի մասին՝ դրանք ներկայացնելով քրիստոնյայի աչքերով: Ցավոք, Al-Nahǧ al-sadīd-ը չի արդարացնում այդ ակնկալիքները: Այն չնչին տեղեկություններ է հաղորդում անգամ Եգիպտոսի դպտիական համայնքի և դպտիական եկեղեցու մասին: Մուֆադդալը գերազանցապես հիմնվել է մուսուլման հեղինակների երկերի վրա (Բայբարս ալ-Մանսուրի, ալ-Ջադարի, Իբն ալ-Դավադարի, ալ-Նուվայրի և այլն)՝ նույնությամբ արտագրելով անգամ այդ աղբյուրների տեքստերում առկա մուսուլմանական կրոնական բանաձևերը, կրկնելով նույնիսկ նրանցում առկա սխալները¹⁴⁹:

Բահրի մամլուքյան շրջանի պատմության ուսումնասիրության համար նշանակալի կարևորություն ունեն ինչիլ Իբն Այբակ ալ-Սաֆադիի (մահ. 1363 թ.)¹⁵⁰ կենսագրական բառարանները: Ինչպես

¹⁴⁹ Տե՛ս D. Little, *An Introduction*, pp. 32-38, ինչպես նաև նայնի՝ “Historiography”, p. 427; L.S. Northrup, *From slave to sultan*, p. 49; U. Haarmann, *Quellenstudien*, S. 107-113: Տե՛ս նաև S. Moawad, “Mufaḍḍal ibn Abī al-Faḍā’il”, in *Christian-Muslim Relations. A Bibliographical History*, vol. 5, pp. 119-122; J. Den Heijer, “Coptic Historiography”, pp. 89-95:

¹⁵⁰ Հիշյալ ալ-Սաֆադիին չպետք է շփոթել ալ-Հասան Իբն Աբդ Ալլան ալ-Սաֆադիի հետ (մահ. մոտ 1317 թ.), ով նույնպես մամլուքյան շրջանի պատմիչ էր, դիվանատան ծառայող: Նրա ժամանակագրական երկը՝ փոքրածավալ *Nuzhat al-mālik wa-l-mamlūk*-ը, Եգիպտոսի պատմությունն է մինչև 1316 թ.: Հեղինակի ու նրա այս երկի մասին ավելի մանրամասն տե՛ս Šākir Muṣṭafā, *Al-Tārīḥ al-‘Arabī wa-l-mu‘arriḥūn: Dirāsa fī taṭawwur ‘ilm al-tārīḥ wa-ma‘rifat riḡālihi fī al-Islām*, ǧ. 3, Dār al-‘Ilm li-l-malāyīn, Bayrūt, 1990, ǧ. 210-211; D. Little, *An Introduction*, pp. 38-39 և հատկապես՝ al-Šafadī, *Nuzhat al-mālik wa-l-mamlūk fī muḥtaṣar sirat man waliya Miṣr min al-mulūk*, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba‘a al-‘Aṣriyya, Bayrūt, 2003, ǧ. 7-16: Հատկանշական է, որ այս ալ-Սաֆադին նաև *Aṭār al-uwwal fī tartīb al-duwal* վերագիրը կրող երկի հեղինակ է: Այն այսպես կոչված «արքայազների հայելիներ» (*specula principum*) ժանրի աշխատությունն է՝ պետական արդյունավետ կառավարման ուղեցույց բարձրաստիճան իշխանավորների համար: Տե՛ս al-Ḥasan [i]bn ‘Abd Allāh al-‘Abbāsī al-Šafadī, *Aṭār al-uwwal fī tartīb al-duwal*, bi-taḥqīq ‘Abd al-Raḥman ‘Umayra, Dār al-ǧayl, Bayrūt, 1989: *Aṭār al-uwwal*-ի հրատարակիչ Աբդ ալ-Ռահման Ումայրան այդ երկը ներկայացրել է որպես հեղինակի միակ աշխատություն: Նրա բացթողումը լրացրել է *Nuzhat al-mālik* երկի հրատարակիչ Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրին՝ հրատարակությունն օժտելով հեղինակի կյանքի, գործունեության և մատենագրական ժառանգության մասին ներածական ակնարկով (տե՛ս վերևում նշված էջեր):

որ Իբն ալ-Դավադարին, նա նույնպես մամլուք պաշտոնյայի որդի էր՝ awlād al-nās կոչված դասի ներկայացուցիչ: Նա գրագրի և դիվանատան գլխավոր քարտուղարի (kātib al-širr) պաշտոններ է զբաղեցրել նախ Հայրենի Սաֆադում, հետո նաև Դամասկոսում, Կահիրեում և Հալեպում¹⁵¹:

Ալ-Սաֆադին Հայտնի է իր երկու երկերով՝ Al-Wāfi bi-l-wafāyāt («Լրացում մահախոսականներին») վերնագիրը կրող սովորահատոր և A'yān al-'aṣr wa-a'wān al-naṣr («Գաղափարների երևելիներ և հաղթանակի ջատագովներ») շատ ավելի կարճառոտ կենսագրական բառարաններով¹⁵²: Առաջինն ընդգրկում է ականավոր մուսուլմանների մասին հազարավոր կենսագրություններ՝ սկսած Մուհամմադ մարգարեի ժամանակներից, իսկ երկրորդում ժողովված են սոսկ հեղինակի ապրած ժամանակի մարդկանց շուրջ 1900 կենսագրություններ¹⁵³:

Դժվար է պատկերացնել մամլուքյան պատմությունն առանց ասորիքյան պատմիչների թողած պատմագրական ժառանգություն: Եգիպտացի հեղինակների պաշտոնական և կիսապաշտոնական տարեգրություններին այստեղ փոխարինում էին «իմտելեկտուալ պատմությունները», որոնցում, ինչպես վերևում ենք առիթ ունեցել նշելու, կենտրոնական տեղ է զբաղեցնում մուսուլմանական համայնքի հոգևոր-մշակութային և կրոնական կյանքը: Կարծում ենք՝ սխալ չի լինի ենթադրել, որ լինելով մեծամասամբ կրոնական գործիչներ ('ulamā') և «ստեղծագործելով» մամլուքյան կենտրոնական իշխանություն «վերահսկողությունից» հեռու՝ ասորիքյան պատմիչները գուցե և իրենց ժամանակի իրադարձությունների օբյեկտիվ և վստահելի աղբյուրներ համարվելու շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան

¹⁵¹ F. Rosenthal, “Al-Ṣafadī”, in *IEJ*, vol. 8, p. 759; D. Little, “Al-Ṣafadī as a biographer of his contemporaries”, in *Essays on Islamic Civilization Presented to Niyazi Berkes*, E.J. Brill, Leiden, 1976, pp. 190-211.

¹⁵² Al-Ṣafadī, *Kitāb al-Wāfi bi-l-wafāyāt*, 29 ց., bi-taḥqīq Aḥmad al-Arnā'ūt wa-Turkī Muṣṭafā, Dār ihyā' al-turāt al-'arabī, Bayrūt, 2000; **Տույճի** A'yān al-'aṣr, 6 ց., Dimašq, 1998 (մի քանի խմբագիրներ՝ Alī Abū Zayd և այլք: Վերևում հատորներից մեկն արդեն օգտագործել եմ):

¹⁵³ Տե՛ս D. Little, *An Introduction*, pp. 102-106, ինչպես նաև **Տույճի** “Historiography”, pp. 431-432:

եգիպտացի հեղինակները: Ասորիքյան պատմագրության բնորոշ գծերից մեկը ժամանակագրությունների և կենսագրական-մահախոսական բառահոգովածների (wafayāt) միահյուսումն է: Այս վերջինները հիմնականում ներկայացվում են յուրաքանչյուր տարվա կարևորագույն իրադարձությունների շարադրանքից հետո, բայց երբեմն էլ հենց բուն շարադրանքում, ինչպես որ ալ-Բիրզալիի (մահ. 1339 թ.) մոտ է, ում հարկ ենք համարում առաջինն անդրադառնալ:

Ալամ ալ-Դին ալ-Կասիմ իբն Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Բիրզալիին Բահրի մամլուքյան շրջանի արաբագիր պատմագիր է և հայտնի հադիսագետ (muḥaddith): Ծնվել և կյանքի մեծ մասն անցկացրել է Դամասկոսում, թեև ուսանելու տարիներին բավականին շատ ճանապարհորդել է Միջագետքում, Արաբիայում, Եգիպտոսում: Հոր հետևողությամբ հիմնավոր կրոնական կրթություն է ստացել իր ժամանակի նշանավոր գիտնականների մոտ (օրինակ, աշակերտել է հայտնի կրոնաիրավագետ Իբն Թալմիյային): Նրա աշակերտներից է եղել ալ-Ջահաբին, ում մասին դեռ կխոսենք¹⁵⁴:

Ալ-Բիրզալիի ամենահայտնի երկը նրա Al-Muqtafi li-tārīḥ al-šayḥ Ṣihāb al-Dīn Abī Šāma-ն («Շեյխ Շիհաբ ալ-Դին Աբու Շամայի պատմության շարունակություն») է, որը, ինչպես վերնագիրն է հուշում Աբու Շամայի Kitāb al-Rawḍatayn-ի շարունակությունն է: Այն ընդգրկում է ալ-Բիրզալիի ծննդյան թվականից՝ հիջրայի 665 թվականից (1267 թ.) մինչև իր մահվանը նախորդած տարվա՝ հիջրայի 738 թվականի (1338 թ.) իրադարձությունները: Al-Muqtafi-ում Դոնալդ Լիթթլի կարծիքով հեղինակը փորձել է հանրագումարի բերել Ասորիքի մասին իրենից առաջ ապրած և իր ժամանակակից մատենագիրների հաղորդումները¹⁵⁵: Համենայն դեպս, այն, որ հստակ կապ կա այս երկի և հատ-

¹⁵⁴ Ալ-Բիրզալիի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս F. Rosenthal, “Al-Birzālī”, in *IE²*, vol. 1, pp. 1238-1239; D. Little, *An Introduction*, p. 46; ‘Abbās al-‘Azzāwī, “Mu‘arriḥ al-Šām aw al-Birzālī wa-Tārīḥuhu”, *MMIA*, ց. 20.11-12, Dimašq, 1945, ց. 519-527; L. Northrup, *From slave to sultan*, p. 41 և հատկապես՝ Al-Birzālī, *Al-Muqtafi li-tārīḥ al-šayḥ Ṣihāb al-Dīn Abī Šāma al-ma‘rūf bi-tārīḥ al-Birzālī*, ց. 1.1, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba‘a al-‘Ašriyya, Šayḍā-Bayrūt, 2006, ց. 7-29:

¹⁵⁵ D. Little, *An Introduction*, p. 46.

կապես ալ-Ջազարիի, ինչպես նաև ալ-Յունինիի երկերի միջև, անվի-
ճելի է: Երկը երկար ժամանակ հասանելի է եղել միայն ձեռագրերով,
ինչը դժվարացրել է նրա ուսումնասիրությունը: Տարիներ առաջ, սա-
կայն, Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրին ձեռնամուխ եղավ բնագրի
պահպանված մասերի հրատարակությանը՝ մամլուքյան պատմության
հետազոտողներին նվիրելով մի աղբյուր, որի կարևորությունը և
փոխկապակցվածությունը ժամանակի մյուս մամլուքյան սկզբնաղբ-
յուրների հետ դեռ պետք է ըստ պատշաճի գնահատել¹⁵⁶:

Ալ-Ջազարին (մահ. 1338 թ.) արդեն բավական ժամանակ է, ինչ
վաստակել է մամլուքյան դարաշրջանի պատմագրության սկզբուն-
քային կարևորություն ունեցող հեղինակներից մեկի համբավը: Նա
ծնվել է Դամասկոսում, բայց ուսման տարիներին եղել է նաև Եգիպ-
տոսում՝ աշակերտելով հայտնի հադիսագետներին¹⁵⁷: Ալ-Ջազարիի
համբավը կապված է նրա *Ḥawādīt al-zamān wa-anbāʾuhu wa-wafayāt al-*
akābir wa-l-aʿyān min abnaʾihi («Ժամանակի անցներն ու նորությունները և
նրա մեծ ու երևելի մարդկանց մահախոսականները») պատմագրական եր-
կի հետ, որը, ցավոք, ամբողջական տեսքով մեզ չի հասել¹⁵⁸: Իր երկը
գրելիս նա ունեցել է մեծաթիվ ինֆորմանտներ (տեղեկատուներ):

¹⁵⁶ Տե՛ս **Al-Birzālī**, *Al-Muqtafi*, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, ց. 1-4, Ṣaydā-Bayrūt, 2006: Թադմուրին թվարկում է այն աղբյուրները, որոնք ալ-Բիրզալին հղում է իր պատմության մեջ, ինչպես նաև նշում է այն սկզբնաղբյուրները, որոնք մեջբերումներ են կատարում ալ-Բիրզալիի պատմությունից: Տե՛ս **al-Birzālī**, *Al-Muqtafi*, ց. 1.1, ց. 92-103:

¹⁵⁷ Ալ-Ջազարիի մասին կենսագրական տեղեկությունները սուղ են: Տե՛ս **D. Little**, *An Introduction*, p. 53, ինչպես նաև **նույնի**՝ “Historiography”, p. 428; **U. Haarmann**, *Quellenstudien*, S. 12-13; **A.S. Bazmee Ansari**, *Al-Djazarī*, in *EF*², vol. 2, p. 522; **ʿAbbās al-ʿAzzāwī**, “Šams al-Dīn ibn al-Ğazarī wa-Tārīḥuhu”, *MMIA*, ց. 19. 11-12, ց. 524-526; **Nuʿmān Ğubrān**, *Šams al-Dīn al-Ğazarī wa-kitābuhu Ḥawādīt al-zamān*, *Abḥāth al-Yarmūk: Silsilat al-ʿulūm al-insānīyah wa-l-iğtimāʾiyya*, ց. 23.1, 2007, ց. 135-138:

¹⁵⁸ Երկի պահպանված հատվածների հրատարակության առաջին փորձը ձեռնարկել է Ջ. Սովադեն: Տե՛ս *La Chronique de Damas dʿAl-Jazari* (années 689-698 H.) par J. Sauvaget, Paris, Librairie ancienne H. Champion, 1949: Ժամանակագրության մեզ հասած 689 (մասամբ)-699 թթ. և 725-738 թթ. (1290-1300 և 1324 / 1325-1337 / 1338 թթ.) ընդգրկող հատվածները հասանելի են մեզ նույնպես շնորհիվ Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրիի: Տե՛ս *Tārīḥ Ḥawādīt al-zamān wa-anbāʾuhu wa-wafayāt al-akābir wa-l-aʿyān min abnaʾihi al-maʾrūf bi-tārīḥ Ibn al-Ğazarī*, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, al-Maṭbaʿa al-ʿAşriyya, 3 ց., Ṣaydā-Bayrūt, 1999:

Օրինակ, «եգիպտական գործերի» մասին խոսելիս նա հաճախ իր տեղեկությունների աղբյուր է նշում ոմն էմիր Սայֆ ալ-Դին Միհաֆֆանդարին: Այս հանգամանքն, անշուշտ, խոսում է ալ-Ջազարիի երկի արժանահավատության օգտին: Վերևում արդեն արձանագրել ենք, որ հստակ կապ կա ալ-Բիրզալի և ալ-Ջազարիի երկերի միջև: Հավանական է, որ անձամբ ծանոթ լինելով միմյանց հետ՝ այս երկու դամակոսցի հեղինակները համագործակցել են, խորհրդակցել, փոխանակել տեղեկություններ¹⁵⁹: Եթե նույնիսկ ընդունենք, որ ալ-Ջազարիի համար ալ-Բիրզալիի պատմությունը որպես աղբյուր է ծառայել, այնուամենայնիվ, պետք է նշենք, որ առաջինի հաղորդումները երկրորդի վկայությունների հետ համեմատած որպես կանոն ավելի հանգամանալից են, հաղորդած պատմական նյութի բացառիկության և եզակիության առումով ավելի նշանակալի¹⁶⁰: Ալ-Ջազարին իր հերթին ժամանակակից և հաջորդ սերնդի մամլուքյան՝ ինչպես ասորիքյան, այնպես էլ եգիպտական պատմագիրների (ալ-Յունինի, ալ-Ջահաբի, Իբն ալ-Դավադարի, ալ-Նուվայրի և այլն) կարևոր սկզբնաղբյուրներից է¹⁶¹: Ալ-Ջազարիի պատմության համառոտագրություն է կատարել ալ-Ջահաբին (Al-Muhtār min tāriḥ al-Gazarī – «Ալ-Ջազարիի պատմության ծաղկափառ»), որ հասել է մեզ¹⁶²:

Մամլուքյան պատմիչների ասորիքյան «գպրոցի» մյուս խոշոր հեղինակությունն ալ-Յունինին է (մահ. 1326 թ.): Ինչպես ալ-Բիրզալիի Al-Muqtafi-ն, նրա պատմագրական երկը ևս, գրվել է Այյուբյան շրջանի պատմիչի երկը շարունակելու մտադրությամբ: Վերջինիս Dayl mir'āt al-zamān fī tāriḥ al-a'yān («Երևելիների պատմության ժամանակների պատմություն») վերնագրից պարզ է դառնում, որ խոսքը Սիրատ Իբն ալ-Ջաուդիի (մահ. 1256 թ.) մասին է: Իր երկի նախաբանում հեղինակը պարզաբանում է, որ ինքը նախ գրել է Սիրատ Իբն

¹⁵⁹ U. Haarmann, *Quellenstudien*, S. 95.

¹⁶⁰ D. Little, *An Introduction*, p. 54; L. Northrup, *From slave to sultan*, p. 42.

¹⁶¹ U. Haarmann, “L’édition de la chronique mamelouke syrienne de Shams ad-Dīn Muḥammad al-Jazarī”, *BEO*, t. 27, 1974, pp. 198–200.

¹⁶² Al-Dahabī, *Al-Muhtār min tāriḥ ibn al-Ġazarī, bi-taḥqīq Ḥaḍīr ‘Abbās Muḥammad Ḥalīfat al-Munṣadāwī, Dār al-Kitāb al-‘Arabī, Bayrūt*, 1988.

ալ-Ջաուզիի պատմության համառոտագրություն (Muḥtaṣar mir'āt al-zamān) և հետո միայն ձեռնամուխ է եղել իր «Շարունակությունը» գրելուն, որն ընդգրկում է 1256-1312 թվականները¹⁶³:

Ալ-Յունինին ծնվել է Դամասկոսում կրոնաիրավագետի ընտանիքում: Ուսման նպատակով մի քանի անգամ այցելել է Եգիպտոս՝ աշակերտելով տարբեր մազհաբների հայտնի կրոնագետների¹⁶⁴: Dayl mir'āt al-zamān-ի արդի հետազոտողները համակարծիք են ալ-Ջազարիի և ալ-Յունինիի երկերի առնչակցության հարցում: Երկու երկերի համեմատությունը թույլ է տալիս ենթադրել, որ հեղինակները մասնագիտական սերտ կապեր են ունեցել, և ալ-Յունինին իր նյութի մի զգալի մասը փոխառել կամ պարզապես բառացիորեն պատճենել է ալ-Ջազարիից¹⁶⁵:

¹⁶³ Մինչ այժմ երկը խմբագրելու ու հրատարակելու չորս փորձ է եղել: Այդ գործի մեկնարկը տրվել է 1954 թ. Հայդաբադում, ուր մինչև 1961 թ. լույս են տեսել Dayl-ի առաջին չորս հատորները, որ ընդգրկում են 1256-1287 թթ. (Al-Yūnīnī, *Dayl Mirāt al-zamān*, al-tab'a al-ūlā, ց. 1-4, Maṭba'at Dā'irat al-Ma'ārif al-'Uṣmāniyya, Ḥaydarābad, 1954-1961): Հաջորդ ֆալյն արել է Անդրանիկ Մեփոնյանը, ով 1975 թ. տպագրված իր ատենախոսությամբ հրատարակել է ալ-Յունինիի պատմության 1287 [1288]-1291 թթ. իրադարձությունները պարփակող հատվածը գերմաներեն թարգմանության հետ մեկտեղ (A. Melkonian, *Die Jahre 1287-1291 in der Chronik al-Yūnīnīs*, Universitätsverlag Becksmann, Freiburg, 1975): 1998 թ. Լի Գուոն հրատարակեց իր ատենախոսության լրամշակված տարբերակը, որում խմբագրել էր երկի 1297-1302 թթ. ընդգրկող հատվածը՝ այն ուղեկցելով անգլերեն թարգմանությամբ (Li Guo, *Early Mamluk Syrian Historiography: Al-Yūnīnī's Dhayl Mir'āt al-zamān*, 2 vols., E.J. Brill, Leiden, 1998): Եվ վերջապես Համգա Արբասը հրատարակել է 1297-1312 թթ. ընդգրկող բնական խմբագրությունը երեք հատորով (Al-Yūnīnī, *Dayl Mirāt al-zamān (Tārīḥ al-sanawāt 696-711 h./1297-1312 m.)*, bi-taḥqīq Ḥamza 'Abbās, ց. 1-3, Abū Ḥabī, 2007): Երկի՝ այս հրատարակություններում չներառված 1292-1297 թթ. պարփակող հատվածը շարունակում է չհրատարակված մնալ:

¹⁶⁴ Հեղինակի մասին կենսագրական մանրամասն տեղեկությունների համար տե՛ս J. Sublet, "Al-Yūnīnī", in *EF*, vol. 11, pp. 345-346 ու հատկապես Li Guo, *Dhayl*, vol. 1, pp. 4-16 և 'Abbās Ḥamza, *Dayl*, ց. 1, 27-32:

¹⁶⁵ Այսօրինակ եզրակացությունների մասին տե՛ս D. Little, *An Introduction*, pp. 57-58 և նույնի՝ "Historiography", p. 429; U. Haarmann, *Quellenstudien*, S. 95, ինչպես նաև նույնի՝ *L'édition*, S. 197; L. Northrup, *From slave to sultan*, pp. 43-44; R. Irwin, "Mamluk history and historians", in *The Cambridge history of Arabic literature: Arabic literature in the post-classical period*, ed. by R. Allen and D.S. Richards, Cambridge University Press, 2006, p. 161; 'Abbās Ḥamza, *Dayl*, ց. 1, ք. 49, Է. 1: Հմտ. Li Guo, *Dhayl*, vol. 1, p. 59:

Մամլուքյան պատմագրությունյան ասորիքյան «ավանդույթի» այս երեք ներկայացուցիչների ազդեցությունը ժամանակակիցների և Հաջորդ սերնդի մատենագիրների վրա հսկայական է: Նրանցից առավել նշանավորները երեքն են՝ ալ-Ձահաբին (մահ. 1348 թ.), ալ-Քուլթուբին (մահ. 1363 թ.) և Իբն Քասիրը (մահ. 1374 թ.):

Պատմիչ, աստվածաբան, կրոնաիրավագետ ալ-Ձահաբին ծնվել է 1274 թ. Դամասկոսում, բայց ինչպես վերոհիշյալ երեք հեղինակները, կրոնական կրթություն ստանալու նպատակով երիտասարդ տարիներին շատ է ճանապարհորդել՝ լինելով մասնավորապես Կահիրեում: Մեծ հեղինակություն է վայելել ժամանակակիցների շրջանում հատկապես որպես հադիսագետ (muḥaddiṭ al-‘aṣr)՝ դասավանդելով Դամասկոսի տարբեր madrasa-ներում: Հարել է շաֆիական մազհաբին: Հայտնի է, որ ծանոթ է եղել և մասնագիտական սերտ կապեր է ունեցել դամասկոսցի մյուս հայտնի կրոնաիրավագետ-մուհադդիսների՝ ալթիվում Իբն Թալմիյայի և ալ-Բիրզալիի հետ: Կյանքի վերջին տարիներին կորցրել է տեսողությունը¹⁶⁶:

Ալ-Ձահաբիի թողած գրավոր ժառանգությունը պատկառելի է: Նրա պատմագրական երկերից կարևորագույնը Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a‘lām («Իսլամի և հայտնիների ու ականավորների պատմություն») ¹⁶⁷ վերնագիրը կրող բազմահատոր համընդհանուր պատմությունն է, որում պատմական իրադարձությունների շարադրանքը հասցված է մինչև 1301 թ.: Երկը պարունակում է ինչպես ժամանակագրական (ḥawādīṭ կամ tārīḥ), այնպես էլ կենսագրական նյութ (wafayāt և tarāğim): Իսլամի պատմության «երևելիների» մասին կենսագրական հոդվածները նրանում դասակարգված են այսպես կոչված ṭabaqāt-ի («դասերի») գրականության սկզբունքներով¹⁶⁸: Ալ-Ձահաբիի

¹⁶⁶ Կենսագրական մանրամասներ համար տե՛ս M. Ben Cheneb [J. de Somogyi], “Al-Dhahabī”, in *EF*², vol. 2, pp. 214-215; J. de Somogyi, “The Ta’rikh al-islām of adh-Dhahabī”, *JRAS*, vol. 64.4, 1932, pp. 819-823; ‘Abd al-Sitār al-Šayḥ, *Al-Ḥāfiẓ al-Ḍahabī, Mu‘arriḥ al-Islām, nāqid al-muḥaddiṭīn, imam al-mu‘addilīn, wa-l-muḡarriḥīn* (673-748 ھ.), Dār al-Qalam, Dimašq-Bayrūt, 1994, §. 27-43:

¹⁶⁷ **Al-Ḍahabī**, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a‘lām*, 52 ց., bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, Dār al-kitāb al-‘arabī, Bayrūt, 1987-2000.

¹⁶⁸ *Tārīḥ al-Islām*-ի մասին մանրամասն տե՛ս J. de Somogyi, “The Ta’rikh”, pp. 824-855:

պատմագրական նյութի համար հավանական աղբյուրներ են եղել ասորիքցի մյուս հեղինակները՝ ի մասնավորի ալ-Բիրզալիի և ալ-Ջազարիի երկերը¹⁶⁹։ Բացի Tārīḥ al-Islām-ից պահպանվել են նաև հեղինակի մի քանի այլ երկեր, որոնք նույնպես պատմագրական հետաքրքրություն են ներկայացնում իրենցից, չնայած որ գրեթե բոլորը «Խսլամի պատմություն» համառոտագրություններ են¹⁷⁰։ Հիշատակության է արժանի հատկապես երկհատոր Duwal al-Islām-ը, որը թեև հիմնականում ալ-Ջահաբիի մեծ պատմության կրճատված տարբերակն է, բայց իրադարձությունների թեկուզ և խիստ համառոտ շարադրանքը նրանում առաջ է անցնում նախորդից չորս տասնամյակով՝ հասնելով մինչև 1344 թ.¹⁷¹։

Մատենագրի երկու այլ երկերից Siyar a'lām al-nubalā'-ը («Ազնվազամ փայտնիների կենսագրություններ») հանրագիտարան է, որի պարունակած կենսագրական հոդվածների քանակը Tārīḥ al-Islām-ի հետ համեմատած սահմանափակ է, մյուսը՝ Al-'Ibar fī ḥabar man ḡabara-ն («Խրատներ փանգուցյալների մասին հաղորդումներից») նույնպես վերջինիս համառոտագրությունն է¹⁷²։

Սուհամմադ իբն Շաքիր ալ-Քուլթուբիի մասին կենսագրական տեղեկությունները սուղ են։ Ամենն, ինչ գիտենք հեղինակի մասին, այն է, որ նա ապրել է ծայրահեղ աղքատության մեջ, բայց սկսելով զբաղվել գրավաճառությամբ անակնկալ կերպով հարստացել է (այստեղից էլ նրա al-Kutubī անունը)¹⁷³։ Հայտնի է առաջին հերթին իր մեծածավալ Fawāt al-Wafayāt («Al-Wafayāt-ի բացթողումներ») կենսագրական բառարանով¹⁷⁴, որ Իբն Խալլիքանի Հայտնի Wafāyat al-a'yān-ի

¹⁶⁹ D. Little, *An Introduction*, pp. 63-64.

¹⁷⁰ Ben Cheneb [Somogyi J. de], "Al-Dhahabī", p. 215.

¹⁷¹ Al-Dahabī, *Duwal al-Islām*, 2 չ., bi-taḥqīq Ḥasan Ismā'īl Marwa, Dār Ṣādir, Bayrūt, 1999.

¹⁷² Խոյնի՝ Siyar a'lām al-nubalā', 25 չ., bi-taḥqīq Baṣār 'Awwād Ma'rūf, Ṣū'ayb al-Arna'ūt (և այլոց), Mu'assasat al-Risāla, Bayrūt, 1996; Խոյնի՝ Al-'Ibar fī ḥabar man ḡabara, 4 չ., bi-taḥqīq Abū Hāḡir Muḥammad al-Sa'īd ibn Basyūnī Zaglūl, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, 1985.

¹⁷³ F. Rosenthal, "Al-Kutubī", in *IEP*, vol. 5, p. 570; Al-Kutubī, 'Uyūn al-tawārīḥ wa-fīhi min sanat 219 h. ilā 250 h., bi-taḥqīq 'Afif Ḥāḡūm, Dār al-Taqāfa, Bayrūt, 1996, թ. 7-9.

¹⁷⁴ Al-Kutubī, *Fawāt al-Wafayāt wa-l-ḡayl 'alayhā*, 5 չ., bi-taḥqīq Iḡṣān 'Abbās, Dār Ṣādir, 1973-1974.

չարունակությունն է: Ալ-Քուլթուբիի գրչին է պատկանում նաև ‘Uyūn al-tawārīḥ («Պատմության ակումբներ») վերնագիրը կրող Համընդհանուր պատմությունը, որ սկսվում է Մուհամմադ մարգարեի ժամանակներից և ավարտվում 1359 թվականով: Արդի հետազոտողների կարծիքով ‘Uyūn al-tawārīḥ-ը մեծամասամբ հիմնված է ալ-Ջազարիի պատմության վրա և աննշան հավելումներ է պարունակում¹⁷⁵: Սա է հավանաբար պատճառը, որ ցայսօր ալ-Քուլթուբիի պատմության առանձին հատորներ են միայն հրատարակված¹⁷⁶:

Իմադ ալ-Դին Իսմաիլ իբն Ումար իբն Քասիրը ծնվել է Բուսրայում 1302 թ.: Կրոնական հիմնավոր կրթություն է ստացել Դամասկոսում՝ աշակերտելով ասորիքյան ‘ulamā’-ի այնպիսի խոշոր հեղինակությունների, ինչպիսին էր, օրինակ, իբն Թալմիյյան: Իբն Քասիրը վախճանվել է 1374 թ. Դամասկոսում և թաղվել իր ուսուցչի կողքին¹⁷⁷:

Իբն Քասիրը վերջին խոշոր ներկայացուցիչն է մամլուքյան պատմագրական ավանդույթի այն ճյուղի, որին վերևում «ասորիքյան դպրոց» պայմանական բնորոշումն ենք տվել: Նրա պատմագրական ժառանգության թագը Al-Bidāya wa-l-nihāya («Սկիզբը և վերջը») վերնագիրը կրող Համընդհանուր պատմությունն է¹⁷⁸: Այս երկի մամլուքների վաղ պատմությանը նվիրված հատվածը, ինչպես ինքը հեղինակն է խոստովանում, հիմնված է ալ-Բիրգալիի Al-Muqtafi-ի վրա: Արդի հետազոտողների աղբյուրագիտական ուսումնասիրություն-

¹⁷⁵ D. Little, *An Introduction*, p. 67; U. Haarmann, *Quellenstudien*, S. 103.

¹⁷⁶ St‘u al-Kutubī, ‘Uyūn al-Tawārīḥ, wa-ḥi min sanat 219-250 ḥ., bi-tahqīq ‘Afif Nāyif Ḥāṭūm, Dār al-ṭaqāfa, Bayrūt, 1996; նույնի՝ ‘Uyūn al-Tawārīḥ, al-safar al-awwal, bi-tahqīq Ḥusām al-Dīn al-Qudsī, Maktabat al-Nahḍa al-Miṣriyya, 1980: Ալ-Քուլթուբիի պատմության 12-րդ, 20-րդ և 21-րդ մասերի հրատարակություններից (Al-Kutubī, ‘Uyūn al-Tawārīḥ, bi-tahqīq Fayṣal al-Sāmīr and Nabīlah ‘Abd al-Mun‘im Dāwūd, 3 ց., Baḡdad, Dār al-Rashīd li-l-naṣr, 1977-1984) մեզ հասանելի են եղել 20-րդ (1980) և 21 (1984) մասերը: Դրանցից բացի ձեռքի տակ ունեցել ենք նաև Ստամբուլի Թոփկափի պալատի հավաքածուի՝ երկի 21-րդ և 22-րդ մասերն ընդգրկող թիվ 2922/21 և 2922/22 ձեռագրերի լուսապատկերները (պարփակում են հիշրայի 671-710 թթ. / 1272-1310 թթ. պատմությունը):

¹⁷⁷ Հեղինակի կյանքի ու գործունեության մասին մանրամասների համար տե՛ս H. Laust, “Ibn Kathīr”, in *IEP*, vol. 3, pp. 817-818:

¹⁷⁸ Ibn Kaṭīr, Al-Bidāya wa-l-nihāya, 21 ց., bi-tahqīq ‘Abd Allāh ibn ‘Abd al-Muḥsin al-Turkī, Dār Haḡar, 1997-1999.

ները, սակայն, ցույց են տալիս, որ Իբն Քասիրի օգտագործած աղբյուրներից են նաև ալ-Ջազարին և ալ-Յուսուբին¹⁷⁹։ Չնայած այս պարագային՝ Al-Bidāya wa-l-nihāya-ում չատ են բացառիկ ու արժեքավոր տեղեկություններն ու հավելումներն իր ժամանակի շատ անցքերի վերաբերյալ, որ բացակայում են մյուս ժամանակակիցների մոտ։ Այս հանգամանքն առանձնահատուկ տեղ է ապահովում Իբն Քասիրի համար Բահրի մամլուքյան շրջանի պատմիչների շարքում¹⁸⁰։

Ալ-Ջահաբիի, ալ-Քուլթուբիի և Իբն Քասիրի եգիպտացի ժամանակակիցներից հարկ ենք համարում անդրադառնալ ալ-Յուսուբիին (մահ. 1358 թ.)։ Ժամանակակից և հաջորդ սերնդի հեղինակների կենսագրական բառարաններում և պատմագրական երկերում նրա մասին պահպանված տեղեկություններից պարզ է դառնում, որ հեղինակը ծնվել է Կահիրեում։ Ալ-Մալիք ալ-Նասիր Մուհամմադ սուլթանի օրոք զբաղեցրել է մամլուքյան բանակի զինված խմբավորման հրամանատարի պաշտոն (muqaddam al-ḥalqa) և մասնակցել է մոնղոլների, Կիլիկյան Հայաստանի դեմ, ինչպես նաև Եմեն ուղղված մամլուքյան արշավանքներին։ Ալ-Յուսուբիի երկը պարունակում է Այաս նավահանգստի մի եզակի նկարագրություն, որ երբեք ուշադրության չի արժանացել¹⁸¹։ Ընկերական հարաբերություններ ունենալով մամլուքյան բյուրոկրատիայի շատ ներկայացուցիչների և արքունականների հետ՝ նա իր ժամանակի շատ իրադարձություններ ներկայացրել է ակնանատեսի աչքերով։ Նրա մեզ հայտնի միակ երկը Nuzhat al-nāẓir fī sīrat al-Malik al-Nāṣir («Ակնատեսի զրոսանքն ալ-Մալիք ալ-Նասիրի կյանքի ընթացքով») վերնագիրը կրող ժամանակագրությունն է։ Ցավալի է, սակայն, որ այս կարևոր երկից պահպանվել է 1332-1338 թթ. ընդգրկող մի հատված միայն¹⁸²։ Ալ-Յուսուբիի պատմությունը լայնորեն

¹⁷⁹ D. Little, *An Introduction*, p. 69; U. Haarmann, *Quellenstudien*, S. 105.

¹⁸⁰ H. Laust, “Ibn Kaṭṭāir”, p. 818; D. Little, *An Introduction*, pp. 71-73; L. Northrup, *From slave to sultan*, p. 50.

¹⁸¹ Al-Yūsufī, *Nuzhat al-nāẓir fī sīrat al-Malik al-Nāṣir*, bi-taḥqīq Aḥmad Ḥuṭayṭ, ‘Ālam al-Kutub, Bayrūt, 1986, §. 39-57, §. 403-409.

¹⁸² Պատմագրի մասին կենսագրական տեղեկությունների և նրա երկի մասին մանրամասն տե՛ս D. Little, “The Recovery of a Lost Source for Bahri Mamluk History: al-Yūsufī’s

օգտագործվել է հաջորդ սերնդի պատմիչների՝ մասնավորապես ալ-Այնիի (մահ. 1451 թ.) կողմից, ով բազմաթիվ մեջբերումներ է կատարել նրանից¹⁸³:

Ալ-Յուսուֆիի երկն առանցքային է եղել նաև նրա ժամանակակից ալ-Շուլջաիի (մահ. 1356 թվականից հետո) պատմության համար: Վերջինիս կյանքի ու գործունեության մասին տվյալները նույնպես սուղ են¹⁸⁴: Փ. Հոլտն իր մի հոդվածում փորձել է տեղեկություններ հայթայթել նրա անձի վերաբերյալ՝ ի վերջո փորձելով նույնականացնել նրան «Շամս ալ-Դին Ակսունկուր» անունով մի էմիրի հետ¹⁸⁵:

Ինչպես ալ-Յուսուֆիի երկից, ալ-Շուլջաիի ժամանակագրությունից՝ Tārīḥ al-Malik al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn al-Ṣāliḥī wa-awlādihī («Ալ-Մալիֆ ալ-Նասիր Մուհամմադ իբն Կալավուն ալ-Սալիհիի և նրա որդիների պատմություն») վերնագրով, ևս ընդամենը մի հատված է հասել մեզ, որն ընդգրկում է 1337-1345 թթ.: Սփոփիչ է գոնե այն հանգամանքը, որ չնայած ալ-Շուլջաիի պատմության մեզ հասած մասն ընդամենը մեկ տարվա իրադարձությունների շարադրանքով է խաչաձևվում ալ-Յուսուֆիի երկի պահպանված մասի հետ, բայց և այնպես առաջ է անցնում դրանից յոթ տարով: Երկի պահպանված հատվածը գերմաներեն թարգմանությամբ հրատարակել է Բարբարա Շեֆերը¹⁸⁶:

Երկու երկերի հատվող ժամանակագրական հատվածների տեքստերի համեմատությամբ Դ. Լիթլը ցույց է տվել, որ Nuzha-ն եղել է ալ-Շուլջաիի առանցքային աղբյուրներից մեկը, որը մատնանշելուց նա խուսափել է՝ որոշ լրացումներ կատարելով ալ-Յուսուֆիի հաղորդումներին¹⁸⁷:

Nuzhat al-Nāzīr fī sīrat al-Malik al-Nāṣir”, JAOS, vol. 94, 1974, pp. 42-54, նույնի՝ “Historiography”, pp. 426-427 և al-Yūsufī, Nuzha, §. 39-57:

¹⁸³ D. Little, “Historiography”, p. 426.

¹⁸⁴ Տե՛ս D. Little, “Al-Shudjā’ī”, in *IEJ*, vol. 9, pp. 493-494, ինչպես նաև նույնի՝ “Analysis of the Relationship between Four Mamluk Chronicles for 737-45”, *JSS*, vol. 19, 1974, pp. 252-268:

¹⁸⁵ P.M. Holt, “Shams al-Shujā’ī: a chronicler identified?”, *BSOAS*, vol. 58.3, 1995, pp. 532-534.

¹⁸⁶ Վերևում մի անգամ արդեն ծանոթագրել ենք: Տե՛ս ծնրք. 121:

¹⁸⁷ D. Little, “Analysis”, pp. 252-268.

Ալ-Շուջջաիով սահմանափակենք Բահրի մամլուքյան շրջանի արաբագիր ժամանակագիրների հետ մեր ծանոթությունը՝ անցում կատարելով Հաջրդ սերնդի մատենագիրներին, որոնց, ինչպես նախորդ խմբի պատմիչներին, Սուլթանություն կառավարող այժմ արդեն գերազանցապես չեքքեզական ծագման վերնախավի անունով պայմանականորեն պիտի անվանենք «Բուրջի մամլուքյան շրջանի պատմիչներ»։ Չնայած այն հանգամանքին, որ այս շրջանի առանձին հեղինակներ և երկեր արևմտյան հետազոտողների ուշադրության կենտրոնում են հայտնվել դեռ ԺԹ դարում, և մինչ այժմ ահռելի ջանքեր են գործադրվել այդ հարուստ ժառանգությունը դնահատելու և արժեւորելու ուղղությամբ, ուրտոն այսօր էլ շարունակում է ընդհանուր առմամբ թերամշակ մնալ¹⁸⁸։ Պատճառներից մեկն այն է, որ այս շրջանի շատ արժեքավոր գործեր դեռ մասամբ կամ ամբողջովին անտիպ են և հետևաբար անհասանելի գիտական լայն շրջանակներին։ Ժամանակն անշուշտ կլրացնի այս բացը՝ թարմ շունչ ու նոր թափ հաղորդելով մամլուքյան պատմության ուսումնասիրության գործին։

Մամլուքյան նոր սերնդի պատմիչներից առաջինն, ում ցանկանում ենք անդրադառնալ Նասիր ալ-Դին իբն ալ-Ֆուրաթ ալ-Հանաֆին (մահ. 1405 թ.) է։ Չնայած որ իբն ալ-Ֆուրաթի ընտանիքի անդամները կարևոր դիրք ու պաշտոններ են ունեցել պետության վարչական համակարգում, նրա կյանքն անհամեմատ ավելի համեստ է անցել։ Ամենաբարձր պաշտոնը, որ զբաղեցրել է իբն ալ-Ֆուրաթը, եղել է *ḥātib*-ի պաշտոնը՝ Կահիրեի մազրաասներից (մուսուլման կրոնական ուսումնական հաստատություն՝ դպրոց) մեկում¹⁸⁹։

Նրա պատմությունը՝ *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*-ը («Հարստությունների և արքաների պատմություն»), արդի հետազոտողների կողմից ճանաչվում է մամլուքյան պատմության, մասնավորապես վաղ շրջանի,

¹⁸⁸ D. Little, “Historiography”, p. 433; S.G. Massoud, *The chronicles and annalistic sources of the early Mamluk Circassian Period*, E.J. Brill, Leiden-Boston, 2007, p. 4.

¹⁸⁹ Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn, *Arbaʿat Muʿarriḥīn wa-arbaʿat muʿallafāt min dawlat al-Mamālīk al-ḡarākisa, al-Hayʿa al-Miṣriyya al-ʾĀmma li-l-Kitāb, al-Qāhira*, 1992, ք. 35-40; S.G. Massoud, *The chronicles*, p. 34.

և, որքան էլ տարօրինակ կարող է թվալ, նաև Ֆաթիմյանների¹⁹⁰ և Այյուբյանների պատմության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր: Իբն ալ-Ֆուրաթի պատմության ներկայացրած այսպիսի արժեքի հիմնապատճառը նրա օգտագործած մեծածիփ աղբյուրներն են, որոնց մի մասը մեզ չի հասել (ինչպես օրինակ՝ Իբն Աբի Տայյի երկը)¹⁹¹: Ցավով պետք է արձանագրել, որ Իբն ալ-Ֆուրաթի պատմությունը նույնպես ամբողջական տեսքով չի պահպանվել, իսկ պահպանված մասերից բոլորը չէ, որ խմբագրվել ու հրատարակվել են¹⁹²:

¹⁹⁰ Ֆ. Բորան այս թեմայով 2010 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, որի արդյունքները վերջերս ամփոփել է տպագիր հրատարակությամբ: Տե՛ս **F. Bora**, *Mamluk Representations of Late Fatimid Egypt: The Survival of Fatimid-Era Historiography in Ibn al-Furāt's Ta'riḥ al-duwal wa'l-mulūk* (History of Dynasties and Kings), DPhil Thesis, The Oriental Institute, University of Oxford, 2010 և **նույնի** *Writing History in the Medieval World: The Value of Chronicles as Archives*, I.B. Tauris, London, 2019.

¹⁹¹ **Cl. Cahen**, “Ibn al-Furāt”, in *EF²*, vol. 3, pp. 768-769; **M.F. Elshayyal**, *Ibn al-Furāt, Ta'riḥ al-duwal wa'l-mulūk*, unpublished PhD thesis, Edinburgh University, 1986, pp. 11-23, ինչպես նաև Ֆ. Բորայի ներկում ծանոթագրված աշխատությունները:

¹⁹² Իբն ալ-Ֆուրաթի պատմության հիշրայի 522-543 թվականներ (1128-1148/1149 թթ.) ընդգրկող հատորն իր թեկնածուական ատենախոսությամբ խմբագրել է Մուհամմադ ալ-Շայ-յալը: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

Այլ հատորների հրատարակություններ՝ **Ibn al-Furāt**, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 7-9, bi-tahqīq Quṣṭanṭīn Zurayq wa-Izz al-Dīn Nağla, Bayrūt, 1936-1942 և ց. 4.1-4.2, 5, bi-tahqīq Ḥasan Muḥammad Šammā', Baṣra, 1967-1969, 1970:

Մեզ հասանելի է եղել նաև Իբն ալ-Ֆուրաթի պատմության հիշրայի 660-671 թթ. (1261-1273 թթ.) ընդգրկող ինքնագիր հատորը, որը, ցավոք, դեռ անտիպ է և գտնվում է Ավստրիայի ազգային գրադարանում (MS A.F. 122): Ավստրիայի ազգային գրադարանում են գտնվում նաև երկի 8 այլ ինքնագիր հատորներ: 1241-1259 թվականներն ընդգրկող մի ձեռագիր էլ գտնվում է Վատիկանի գրադարանում: Տե՛ս **M.F. Elshayyal**, “Ibn al-Furāt”, pp. 8-9; **F. Bora**, “Writing History”, pp. 29-36: Վիեննայի A.F. 122 և Վատիկանի V720 ձեռագրերից հաղվածական թարգմանություններ կատարելու փորձ է ձեռնարկվել մոտ կես դար առաջ (Ayyubids, Mamlukes and Crusaders, selections from the Tārīḥ al-Duwal wa'l-mulūk of Ibn al-Furāt, text and translations by **U. and M.C. Lyons**, historical intro. by **J.S.C. Riley-Smith**, 2 vols., W. Heffer and Sons Ltd, Cambridge, 1971, հետայսու՝ *Tārīḥ al-duwal (Selections)*): Նույնպիսի մի փորձ բոլորովին վերջերս կատարել է Դեյվիդ Քոմբը՝ հատվածներ թարգմանելով Կալավուն և Ռա որդի՝ ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանների կառավարման շրջաններում մամլուֆ-ֆրանկյան հարաբերությունների վերաբերյալ: Տե՛ս Baybars' Successors: Ibn al-Furāt on Qalāwūn and al-Ashraf, trans. by **D. Cook**, Routledge, London and New York, 2020:

Մամլուքյան պատմությունը շարադրելիս Իբն ալ-Ֆուրաթը որպես ձևանմուշ օգտագործել է ալ-Նուվայրիի Nihāyat al-arab-ը, ուսմ հաղորդումները փոխառել է առանց դրանց իրական հեղինակի անունը նշելու: Այլ պատմիչներից Tārīḥ al-duwal-ում հաճախակի մեջբերումներ կան Աբու ալ-Ֆիդայից, Բայբարս ալ-Մանսուրից, ալ-Ֆուհրիից և ալ-Ջազարիից¹⁹³, ինչպես նաև «Իբն Մուքարրամի» կորած երկից¹⁹⁴: Հաջորդ սերնդի պատմիչներից Իբն ալ-Ֆուրաթի երկն աղբյուր է ծառայել հատկապես ալ-Մակրիզիի համար: Նրա երկից քաղվածքներ (Al-Muntaqā min tārīḥ Ibn al-Furāt) է կատարել Իբն Կադի Շուհբան (մահ. 1448 թ.)¹⁹⁵:

Եգիպտացի պատմիչ Սարիմ ալ-Դին Իբրահիմ իբն Դուկմակը (մահ. 1407 թ.) նույնպես awlād al-nās խավի ներկայացուցիչ էր, ով իր կյանքի մեծ մասը նվիրել է պատմագրությանը, թեև նրա ժառանգության միայն փոքր մասն է պահպանվել: Ճիշտ է՝ ալ-Սախավիի վկայությամբ՝ Իբն Դուկմակը վատ է տիրապետել արաբերենին, այնուամենայնիվ, դա չի խանգարել ժամանակակիցներին և նրանից հետո ապրած պատմիչներին՝ մասնավորապես Իբն ալ-Ֆուրաթին և ալ-Այ-նիին, լայնորեն օգտվել նրա պատմագրական երկերից¹⁹⁶: Մասամբ մեզ է հասել նրա՝ Կահիրեի (Ֆուստատի) պատմատեղագրական նկարագրությանը նվիրված նրա երկասիրությունը՝ Kitāb al-Intiṣār li-wāṣiṭat ‘iqd al-amṣār («Գիրք ի պաշտպանություն ֆաղաֆների մանյակի կենտրոնա-

¹⁹³ D. Little, *An Introduction*, p. 73-75, ինչպես նաև նույնի՝ “Historiography”, p. 433.

¹⁹⁴ Տե՛ս L. Northrup, *From slave to sultan*, p. 51: Իբն Մուֆաւրամը հավանաբար Lisān al-‘arab բառարանի հեղինակ հանրահայտ Իբն Մանգուրն է (մահ. 1311 թ.): Տե՛ս J.W. Fück, “Ibn Manẓūr”, in *IE²*, vol. 3, p. 864:

¹⁹⁵ D.C. Reisman, “A Holograph MS of Ibn Qāḍī Shuhbah’s “Dhayl””, *MSR*, vol. II, 1998, pp. 19-49: Ձեռագիրը գտնվում է Դուքլինի Chester Beatty գրադարանում (MS 4125): Տե՛ս նաև S.G. Massoud, “Ibn Qāḍī Shuhba’s “Al-Dhayl Al-Muṭawwal”: The Making of an all Mamluk Chronicle”, *Quaderni di Studi Arabi, Nuova Serie*, vol. 4, 2009, pp. 61-79:

¹⁹⁶ Հեղինակի կյանքի և մատենագրական ժառանգության մասին ավելի հանգամանալից տե՛ս J. Pedersen, “Ibn Dukmāk”, in *IE²*, vol. 3, p. 756; F. Rosenthal, *A history of Muslim historiography (Second revised edition)*, E.J. Brill, Leiden, 1968, p. 356, n. 3; S.G. Massoud, *The chronicles*, pp. 31-34, ինչպես նաև ‘Izz al-Dīn, *Arba’at Mu’arriḥīn*, §. 107-108, ինչպես նաև նրա երկերի ստորև ներկայացված հրատարակությունների խմբագիրների՝ Սաիդ Աբդ ալ-Ֆաթթան Աշուրի, Ումար Աբդ ալ-Սալամի ներածական ակնարկները:

կան գոհարի», իմա՝ «Կանխիրեի»- Գ. Դ.) վերնագրով, որի երկու հատորները դեռ ժԹ դարի վերջին հրատարակվել են գերմանացի արևելագետ Կառլ Ֆյոլլերսի կողմից¹⁹⁷:

Նրա կարևորագույն ժամանակագրությունը՝ *Nuzhat al-anām fi tāriḥ al-Islām* («Մարդկանց զրոսանքն իսլամի պատմության ընթացքով») վերնագրով 12 հատորանոց երկը, որում իրադարձությունների շարադրանքը հասցվել է մինչև հիջրայի 779 (1377) թվականը, դժբախտաբար մասամբ է պահպանվել: Այս երկի՝ Այյուբյանների պատմության վերջին տասնամյակների ու Մամլուքյան սուլթանության առաջին տասնամյակի (628-659 հ. / 1230-1261 թթ.) պատմությունն ընդգրկող հատվածը հրատարակել է Սամիր Տաբբարան¹⁹⁸: Որոշ մասեր էլ դեռ ձեռագրում են և սպասում են հրատարակության իրենց հերթին¹⁹⁹:

Պահպանված է, օրինակ, նրա *Al-Ġawhar al-ṭamīn* («Թանկագին գոհար») երկը²⁰⁰, որի մի քանի տարբերակներ են մեզ հասել:

Մամլուքյան մատենագրության վառ հեղինակություններից է Շիհաբ ալ-Դին Աբու ալ-Աբբաս ալ-Կալկաշանդին (մահ. 1418 թ.):

¹⁹⁷ **Ibn Duqmaq**, *Kitāb al-Intiṣār li-wāṣiṭat 'iqd al-amṣār* / **K. Vollers**, Description de l'Égypte, par Ibn Doukmaq, publiée d'après le manuscrit autographe conservé à la Bibliothèque khédiviale, Le Caire, Imprimerie Nationale, 1893 (վերահրատարակությունը՝ **նույնի**՝ *Kitāb al-Intiṣār li-wāṣiṭat 'iqd al-amṣār*, Bayrūt, առանց քականի): Տե՛ս նաև **S. Denoix**, Décrire le Caire: Fustat-Misr d'après Ibn Duqmaq et Maqrizi: l'histoire d'une partie de la ville du Caire d'après deux historiens égyptiens des XIVe-XVe siècles, Institut français d'archéologie orientale du Caire, Le Caire, 1993:

¹⁹⁸ **Ibn Duqmāq**, *Nuzhat al-anām fi tāriḥ al-Islām*, bi-taḥqīq Samīr Ṭabbāra, al-Maktaba al-ʿAṣriyya, Ṣaydā-Bayrūt, 1999.

¹⁹⁹ **Ibn Duqmāq**, *Nuzhat al-anām*, §. 15; **C. Brockelmann**, *History of the Arabic Written Tradition*, vol. 2, tr. by J. Lameer with a Preface by J.J. Witkam Brill, Leiden, p. 52.

²⁰⁰ **Ibn Duqmāq**, *Al-Ġawhar al-ṭamīn fi siyar al-ḥulafā' wa-l-mulūk*, bi-taḥqīq Saʿīd ʿAbd al-Fattāḥ ʿĀṣūr, Ġamiʿat Umm al-Qurā, Makka, 1982 և **նույնի**՝ 2 չ., bi-taḥqīq Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn ʿAlī, Bayrūt, ʿĀlam al-Kutub, 1985: Այս երկու հրատարակություններից մեզ հասանելի է եղել առաջինը: Երկի՝ Մամլուքյան սուլթանության պատմությունն ընդգրկող երկրորդ մասի՝ նախորդ երկու հրատարակություններից ուր տարով առաջ անցնող (մինչև հիջրայի 805, այն է՝ 1402/1403 թ.) տարբերակ էլ՝ *Al-Nafḥa al-miskiyya* վերնագրով, հրատարակել է Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրին: Տե՛ս **նույնի**՝ *Al-Nafḥa al-miskiyya fi al-dawla al-turkiyya min kitāb al-Ġawhar al-ṭamīn*, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-ʿAṣriyya, Ṣaydā-Bayrūt, 1999:

Ծնվել և ապրել է Եգիպտոսում, որտեղ և ստացել է դասական կրոնական կրթություն՝ վաղ երիտասարդություն տարիներին իրեն նվիրելով շաֆիական կրոնաիրավագիտություն (fiqh), ինչպես նաև հադիսագիտություն ուսումնասիրելուն և դասավանդելուն: Սուլթան Բարկուկի օրոք՝ 1389 թ., նա արքունի դիվանագետի օգնական գրագրի (kātib al-dast) պաշտոն է ստացել, ինչը և կանխորոշել է նրա հետագա գործունեության ուղղությունը՝ ընդհուպ մինչև մահը: Հատկանշական է, որ այդ ժամանակ սուլթանական դիվանատան գլխավոր քարտուղարը (kātib al-sirr) հայտնի էրն Ֆադլ Ալլահ ալ-Ումարիի զարմին էր²⁰¹:

Ալ-Կալկաշանդին հեղինակ է բազմաթիվ աշխատությունների՝ կրոնաիրավագիտության և adab-ի բնագավառներում²⁰², բայց նրա գլուխգործոցը Կահիրեի դիվանատանը նրա երկարամյա աշխատանքի արգասիքը դարձած գրագրության և քարտուղարության հանրագիտարանային ձեռնարկն է՝ *Ṣubḥ al-a'shā fī šinā'at al-inšā'* («Կույրի լուսաբացը գրագրության արվեստում») վերնագրով²⁰³: Հենվելով ալ-Հալաբիի, ալ-Ումարիի, Իբն Նագիր ալ-Ջալշի վերևում հիշված երկերի վրա՝ ալ-Կալկաշանդին գրել է մամլուքյան պաշտոնական գրագրության ամենամեծ ու համապարփակ աշխատությունը: Նրանում հեղինակը ժողովել է արքունի գրագրին անհրաժեշտ բոլոր գիտելիքներն ու օժանդակ նյութերը՝ սկսած դիվանատան գործունեությունից, գրագրության մեջ օգտագործվող թղթի, թանաքի և գեղագրության տեսակներից, տեքստի մեքանիկայից, Մամլուքյան սուլթանության վարչական կառուցվածքի, կառավարման աստիճանակարգության և հարա-

²⁰¹ Ալ-Կալկաշանդիի կյանքի և գործունեության մասին տե՛ս Քլիֆֆորդ Բուսվորթի հոդվածը «Իսլամի հանրագիտարանում»: Տե՛ս **C.E. Bosworth**, “Al-Qalkāshandī”, in *IF*², vol. 4, p. 509-510, ինչպես նաև **И.Ю. Крачковский**, *Избранные сочинения*, т. 4, стр. 411-412 և **Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn**, *Abū al-ʿAbbās al-Qalqaṣandī muʿarriḥan*, ʿĀlam al-kutub, Bayrūt, 1990, §. 24-26:

²⁰² Մատենագրի մյուս երկերի մասին տե՛ս Անդ, §. 29-30; **C.E. Bosworth**, “Al-Qalkāshandī”, pp. 509-511; Selections from *Ṣubḥ Al-A'shā* by al-Qalqaṣandī, clerk of the Mamluk Court. Egypt: “Seats of Government” and “Regulations of the Kingdom”, From Early Islam to the Mamluks, ed. by **Heba El-Toudy** and **Tarek Galal Abdelhamid**, Routledge, London and New York, 2017, pp. 10-13:

²⁰³ **Al-Qalqaṣandī**, *Ṣubḥ al-a'shā fī šinā'at al-inšā'*, 14 ց., al-Maṭba'a al-amīriyya, al-Qāhira, 1913-1919.

կից երկրների մասին աշխարհագրական տեղեկություններից մինչև պաշտոնական փաստաթղթերի տարատեսակների, դրանց առանձնահատկությունների, հարևան երկրների տիրակալներին ուղարկվող պաշտոնական նամակների (այդ թվում Կիլիկիո հայոց արքային ուղարկված)²⁰⁴, նրանց բանաձև-կաղապարների, միջազգային պայմանագրերի բազմաթիվ նմուշներ: Ալ-Կալիլաշանդին իր երկը հարստացրել է Կահիրեի դիվանատան արխիվներից քաղված բազմաթիվ արժեքավոր վավերագրերով, որոնք օգնում են բացահայտելու մամլուքյան պաշտոնական դիվանագիտության և արարողակարգի բազմաթիվ թաքնված նրբերանգներ²⁰⁵:

Ալ-Կալիլաշանդիի ժամանակակիցն է մամլուքյան պատմագրություն և ընդհանրապես միջնադարյան արաբախալամական պատմական մտածողության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Իբն Խալգունը (մահ. 1406 թ.): Պատմիչ, պատմության փրկսոփա-տեսաբան և կրոնաիրավագետ Իբն Խալգունը ծնվել է 1332 թ. Մադրիդում՝ Թունիսում, որտեղ ստացել է դասական իսլամական կրթություն: Կյանքի մեծ մասն անցկացրել է ճամփորդություններում՝ վայելելով մուսուլմանական Արևմուտքի (Անդալուս, Մադրիդ) և Արևելքի (Մամլուքյան սուլթանություն) բազմաթիվ կառավարողների բարեհաճությունը՝ կարևոր դերք ու բազմազան հարգի պաշտոններ զբաղեցնելով նրանց արքունիքներում²⁰⁶:

Իբն Խալգունը մամլուքյան շրջանի հեղինակներից թերևս ամենաուսումնասիրվածն է: Նրա և նրա հիմնարար աշխատության՝ Kitāb

²⁰⁴ Տե՛ս վերևում ծնթգր. 145:

²⁰⁵ Տե՛ս И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 412; D. Little, “Historiography”, p. 444; A. Broadbridge, *Diplomatic conventions*, pp. 105-107 և հատկապես ʿIzz al-Dīn, Abū al-Abbās al-Qalqasandī, ֆ. 31-49: Գրագրության և փաստաթղթային ձեռնարկի հեղինակ է նաև ալ-Կալիլաշանդիի որդին՝ Նաջմ ալ-Դին Մուհամադ իբն ալ-Կալիլաշանդին: Qalāʾid al-ġumān («Մարգարտե մանյակ») վերնագիրը կրող այդ երկի կառուցման և ներկայացրած առժեմին վերջերս հիմնավոր անդրադարձ է կատարել Ֆրեդերիկ Բոդենը: Տե՛ս F. Bauden, “Like father, like son: The chancery manual (Qalāʾid al-ġumān) of al-Qalqasandī’s son and its value for the study of Mamluk diplomacies (ninth/fifteenth century) (Studia Diplomatica Islamica, I)”, *Eurasian Studies*, vol XI, 2013, pp. 181-228:

²⁰⁶ M. Talbi, “Ibn Khaldūn”, in *IEP*, vol. 3, pp. 825-828.

al-‘Ibar-ի («խրատական օրինակների գիրք»)²⁰⁷ նկատմամբ արդի հետազոտողների այս աստիճանի մեծ հետաքրքրությունն պատճառը, սակայն, ամենևին էլ վերջինիս պատմագրական բացառիկ արժեքը չէ: Ընդհակառակը, որպես մամուլային պատմություն սկզբնաղբյուր al-‘Ibar-ը «շարփային» երկ է, և եթե իրենից պատմագրական կարևորություն է ներկայացնում, ապա միայն և միայն մոսուլմանական Մաղրիբի պատմության ուսումնասիրության համար: Երկի իրական արժանիքները նրա հայտնի նախաբանում՝ Al-Muqaddima-ում հեղինակի արտահայտած իր ժամանակի համար եզակի գաղափարներն են հասարակական զարգացման, քաղաքակրթությունների պատմական առաջընթացի, դինաստիաների շրջափոխային փոփոխության և պետական իշխանության օրինաչափությունների վերաբերյալ: Բուն պատմության և նրա «Առաջաբանի» միջև կապն այնքան թույլ է, որ երկրորդը կարելի է ընկալել որպես առանձին գործ: Մամուլային պատմությանը վերաբերող մասերը շարադրելիս Իբն Խալդունը գերազանցապես հենվել է ալ-Նուվայրիի պատմության վրա՝ հավելյալ տեղեկություններ քաղելով նաև ալ-Ջազարիից և ալ-Յունինիից²⁰⁸:

Իբն Խալդունի բազմաթիվ աշակերտներից ամենաականավորն ալ-Մակրիզին (մահ. 1452 թ.) էր²⁰⁹: Ալ-Մակրիզին ծնվել է 1364 թ. Կահիրեում՝ հորական կողմից ասորիքյան ծագում ունեցող ընտանիքում: Նրա պապը հայտնի հանքալիական մագհաբի կրոնագետ ու muhaddith էր Բաալբաքում: Հայրը, ով նույնպես հանքալիականության հետևորդ էր, վճռում է տեղափոխվել Կահիրե, որտեղ և ծնվում և իր կյանքի մեծ մասն է անցկացնում ապագա պատմիչը²¹⁰:

²⁰⁷ Ibn Ḥaldūn, *Al-‘Ibar wa-diwān al-mubtada’ wa-l-ḥabar fi ayyām al-‘Arab wa-l-Barbar*, 8 ց., bi-taḥqīq Ḥalīl Šihāda wa-Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, 2000-2001.

²⁰⁸ D. Little, *An Introduction*, pp. 75-76, ինչպես նաև նույնի՝ “Historiography”, p. 435.

²⁰⁹ Sḡu F. Rosenthal, “Al-Maqrīzī”, in *IF*, vol. 6, pp. 193-194; Šākir Muṣṭafā, *Al-Tārīḥ al-‘Arabī wa-l-mu‘arriḥūn: Dirāsa fi taṭawwur ‘ilm al-tārīḥ wa-ma‘rifat riğālihi fi al-Islām*, ց. 3, Dār al-‘Ilm li al-malāyīn, Bayrūt, 1990, ց. 140: Հմմտ. R. Irwin, “Al-Maqrīzī and ibn Khaldun, historians of the unseen”, *MSR*, vol. 7.2, pp. 217-230 և A. Broadbridge, “Royal authority, justice, and order in society: The influence of Ibn Khaldūn on the writings of al-Maqrīzī and Ibn Taghrībirdī”, *MSR*, vol. 7.2, pp. 231-245; N. Rabbat, “Was al-Maqrīzī’s *Khiṭa’* a Khaldūnian history?”, *Der Islam*, vol. 89.2, 2012, pp. 120-123:

²¹⁰ Մատենագրի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս մասնավորապես Muḥammad Kamāl al-Dīn ‘Izz al-Dīn ‘Alī, “Arba’at Mu‘arriḥīn”, ց. 157-176, ինչպես նաև

Մինչ պատմագրությանը նվիրվելն ալ-Մակրիզին վարել է ակտիվ Հասարակական-քաղաքական գործունեություն: Ընկերական Հարաբերություններ ունենալով մամլուքյան բարձր դասի ներկայացուցիչների հետ և վայելելով նրանց հովանավորությունը՝ նա բազմաթիվ Հարգի պետական պաշտոններ է զբաղեցրել սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիր Բարկուկի (կառ. 1382-1389, 1390-1399 թթ.) և նրա որդու՝ ալ-Նասիր Փարաջի (1399-1405, 1405-1412 թթ.) կառավարման տարիներին: Մանկավարժական և հոգևոր-կրոնական գործունեությունից զատ (հաղիս է դասավանդել Կահիրեի մադրասաներում, եղել է իմամ և խաֆիք քաղաքի տարբեր մզկիթներում)՝ ալ-Մակրիզին գրագիր է եղել դիվանատանը (*diwān al-inšāʿ*), իսկ 1399 թ. և 1400 թ. մի կարճ ժամանակ զբաղեցրել է Կահիրեի *muḥtasib*-ի («չափուկչոփ վերատեսուչ», «շուկաների վերակացու») բարձր պաշտոնը, որը երկու անգամ էլ զիջել է մամլուքյան պատմագրության մյուս անվանի հեղինակությունը՝ իր կրտսեր ժամանակակից ալ-Այնիին (մահ. 1453 թ.): Այս վերջինի հետ Հարաբերությունները շուտով այնքան լարվեցին, որ վերաճեցին ակադեմիական մրցակցություն²¹¹:

Ալ-Մակրիզին հեղինակ է բազմաթիվ և տարբեր ժանրերի երկերի՝ ինչպես կարճաոտ մենագրությունների, այնպես էլ սովորահաստոր ժամանակագրությունների և կենսագրական բառարանների, թեև նրա թողած Հարուստ մատենագրական ժառանգությունից ամեն ինչ էլ,

նույնի՝ *Al-Maqrīzī muʿarriḥan*, ʿĀlam al-kutub, Bayrūt, 1990, ֆ. 23-47; **Muḥammad Muṣṭafā Ziyāda**, *Al-Muʿarriḥūn fī Miṣr fī al-qarn al-ḥāmisa ašara al-milādī (al-qarn al-tāsiʿ al-ḥigri)*, al-Qāhira, 1949, ֆ. 6-10, ինչպես նաև **նույնի**՝ “*Tārīḥ hayāt al-Maqrīzī*”, *Dirāsāt ʿan al-Maqrīzī (maǧmūʿat abḥāt)*, al-Hayʾa al-Miṣriyya al-ʾamma li al-taʿlīf wa-l-našr, al-Qāhira, 1971; **N. Rabbat**, “Who was al-Maqrīzī? A Biographical Sketch”, *MSR*, vol. 7.2, 2003, pp. 1-19 և պարբերականի այս հատորն ընդհանրապես, որն ամբողջովին նվիրված է ալ-Մակրիզիին: Տե՛ս նաև **F. Bauden**, “Al-Maqrīzī”, pp. 1074-1076, ինչպես նաև **նույնի**՝ “Al-Maqrīzī”, in *Christian Muslim Relations: A bibliographical history*, vol. 5 (1350-1500), Brill, Leiden-Boston, 2013, pp. 380-383 և **նույնի**՝ “*Taqī al-Dīn Aḥmad ibn ʿAlī al-Maqrīzī*”, in *Medieval Muslim Historians and the Franks in the Levant*, ed. by Alex Mallett, E.J. Brill, Leiden-Boston, 2014, pp. 161-167:

²¹¹ **Muḥammad Kamāl al-Dīn ʿAlī**, *Al-Maqrīzī muʿarriḥan*, ֆ. 42-44; **A. Broadbridge**, “Academic rivalry”, pp. 85-107.

որ պահպանվել է: Պահպանված է նրա հեղինակած Ֆաթիմյան պատմությունը, որը կրում է Itti'āz al-hunafā' bi-akhbār al-a'imma al-Fātimiyyīn al-ḥulafā' վերնագիրը: Հատկանշական է, որ սա Եգիպտոսի պատմությունն առանձնապես այս շրջանին նվիրված միակ ժամանակագրությունն է միջնադարյան մուսուլմանական պատմագրություն մեջ²¹²:

Ալ-Մակրիզիի պատմագրական ժառանգության թագը նրա՝ Այյուբյանների և Մամլուքների պատմությունը նվիրված երկն է՝ Kitāb al-sulūk li ma'rifat duwal al-mulūk-ը, որի մասին արդեն ակնարկել ենք վերևում: Այն, ըստ այդմ, ընդգրկում է Ֆաթիմյանների կործանմանը հաջորդած մոտ երեքդարյա ժամանակաշրջանի՝ 1171-1441 թթ. պատմությունը: Kitāb al-sulūk-ը մեծ ճանաչում է ունեցել անգամ հեղինակի կենդանության օրոք՝ նույնիսկ Եգիպտոսի սահմաններից անդին: Հայտնի է, որ 1428 թ. Լենկ Թեմուրի որդու՝ Շահրուհի կողմից Կահիրե ուղարկված դեսպանները խնդրել են իրենց տրամադրել ալ-Մակրիզիի երկի մի օրինակ²¹³: Երկար ժամանակ այս երկը բացառիկ և անփոխարինելի աղբյուր է համարվել մամլուքյան պատմության ուսումնասիրության համար: Վերջին ժամանակներում, սակայն, այդ շրջանի պատմության նորանոր աղբյուրների հրատարակությունը երևան է հանել ալ-Մակրիզիի պատմագրական «Աֆթոդի» կարևորագույն թերությունը՝ իր օգտագործած աղբյուրները չհիշատակելու նրա գործելաոճը: Օրինակ, ինչպես Լիթթլը, Ամիրտայը և վերջերս էլ Մասսուդեն են ցույց տվել, Բահրի մամլուքների և Բուրջի մամլուքների վաղ շրջանի պատմությունը շարադրելիս նրա համար առանցքային աղբյուր ու ուղեցույց է ծառայել Իբն ալ-Ֆուրակի Tārīḥ al-duwal wa-l-mulūk-ը²¹⁴: Բայց նա խուսափել է իր իրական աղբյուրը բացահայտելուց: Ըստ Բոդենի՝ նրա օգտագործած «տեխնիկայի» բնութագրիչ հատկանիշը «տարբեր աղբյուրներից փաղված հաղորդումները միմյանց

²¹² P. Walker, “Al-Maqrīzī and the Fatimids”, MSR, vol. 7.2, p. 3.

²¹³ A. Broadbridge, “Academic rivalry”, p. 103; F. Bauden, “Al-Maqrīzī” (Christian-Muslim Relations), p. 383.

²¹⁴ D. Little, *An Introduction*, pp. 77-78; R. Amitai-Preiss, “Al-Maqrīzī as a Historian of the Early Mamluk Sultanate (or: Is al-Maqrīzī an Unrecognized Historiographical Villain?)”, MSR, vol. 7.2, pp. 99-118; S.G. Massoud, *The chronicles*, pp. 49-53.

հետ գուգորդելն ու սեփական բառերով վերաշարադրելն է»²¹⁵: Վկայու-
թյուններն ամփոփելու, համառոտելու և, ինչպես Լիթթլն է մի առի-
թով ձևակերպում, «իր իսկ լեզվով վերադարձրելու»²¹⁶ նրա այս սովո-
րությունը երբեմն անճշտությունների և հազորդությունների իրական բո-
վանդակության աղավաղման պատճառ է դարձել²¹⁷: Նույն ուսումնա-
սիրողը մեկ այլ տեղում եզրահանգում է, որ քանի դեռ *Kitāb al-sulūk*-ը
համեմատվում է ժամանակակից այլ պատմիչների տարեգրությունների
հետ, ալ-Մակրիզին կշարունակի «սուկ բանաբաղ և մյուսների գործերը
պահպանած հեղինակ» համարվել²¹⁸: Համենայն դեպս, անկախ ժամա-
նակակից հետազոտողների քննադատական հայացքներից՝ նույնիսկ
այս շրջանի անցքերի առնչությամբ ալ-Մակրիզիի երկում քիչ չեն
«այնպիսի հաղորդումները, որ չեն հանդիպում ոչ մի այլ աղբյուրում, և
որոնց ծագումը շարունակում է առեղծված մնալ»²¹⁹:

Իր ապրած ժամանակի պատմությունը շարադրելիս ալ-Մակրի-
զին հանդես է գալիս գերազանցապես որպես ինքնուրույն ու անկախ
պատմիչ՝ հիմնվելով իր իսկ ժողոված տեղեկությունների և պատմագրա-
կան նյութի վրա²²⁰:

Հեղինակի մեկ այլ երկը՝ *Al-Mawā'iz wa-l-i'tibār bi-dīkr al-ḥiṭaṭ wa-l-
aṭ'ār*-ը («Հորդորներ և խրատներ թաղամասերի և հուշարձանների նկարա-

²¹⁵ F. Bauden, “Al-Maqrīzī”, p. 1074.

²¹⁶ D. Little, “Analysis of the Relationship between Four Mamluk Chronicles for 737-45”, *JSS*, vol. 19, 1974, p. 260.

²¹⁷ R. Amitai-Preiss, *Mongols*, p. 5 (Introduction). Կոնկրետ օրինակների համար տե՛ս D. Ayalon, “The Great Yāsa of Chingiz Khān: A Reexamination (Part C2). Al-Maqrīzī’s Passage on the Yāsa under the Mamluks”, *SI*, № 38, 1973, pp. 121-123; R. Amitai-Preiss, *Mongols*, p. 30, note 32. Նույն միտքն է արտահայտել նաև Իրվինը: Տե՛ս R. Irwin, “Mamluk history and historians”, in *The Cambridge history of Arabic literature: Arabic literature in the post-classical period*, ed. by R. Allen and D. S. Richards, Cambridge University Press, 2006, p. 167.

²¹⁸ Տե՛ս D. Little, “Historiography”, p. 437, ինչպես նաև ճույճի՝ “A Comparison of al-Maqrīzī and al-‘Aynī as historians of contemporary events”, *MSR*, vol. VII/2, 2003, p. 207:

²¹⁹ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 52.

²²⁰ F. Bauden, “Al-Maqrīzī”, p. 1074: *Kitāb al-sulūk*-ի և ժամանակակից մյուս պատմա-
գիրների երկերի համեմատական ֆունկցիան մի քանի փորձեր գիտական գրականության մեջ
արդեն իսկ ձեռնարկվել են: Տե՛ս I. Perho, “Al-Maqrīzī and Ibn Taghrī Birdī as historians of
contemporary events”, in *HIE*, pp. 107-120; D. Little, “A Comparison”, pp. 205-215.

գրության համար»)²²¹, պակաս հռչակ չունի, քան Al-Sulūk-ը: Այն ավելի շատ հայտնի է «Ալ-Խիտաա» անվանումով և նվիրված է ընդհանրապես Եգիպտոսի և մասնավորապես Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը: Kitāb al-sulūk-ի պես Al-Ḥiṭaṭ-ը նույնպես բուռն քննարկումների առարկա է արդի հետազոտողների չըջանում: Բայց եթե առաջինի դեպքում քննադատների տված գնահատականները չեն անցնում հեղինակի «մասնագիտական անագնություն կամ անբարեխղճության» սահմանը, ապա այս երկրորդի դեպքում ալ-Մակրիզիին հասցեագրված մեղադրանքները շատ ավելի լուրջ են, քանի որ խոսքն այստեղ գրագրության մասին է²²²:

Ալ-Մակրիզին հեղինակ է նաև երկու կենսագրական բառարանների: Դրանցից առաջինը՝ Al-Tārīḥ al-muqaffā al-kabīr («Համապարփակ պատմություն») վերնագրով, պարունակում է Եգիպտոսի մուսուլմանական նվաճումից ի վեր մինչև իր ծնունդն ապրած «երևելիների» կենսագրություններ: Հայտնի է, որ ինքը՝ ալ-Մակրիզին, մտադիր է եղել բառարանի հատորների թիվը հասցնել 80-ի, բայց ցավոք մինչև իր մահը գործն ավարտին հասցնել չի կարողացել: Երկի պահպանված մասերը հրատարակել է Մուհամմադ ալ-Յալալին²²³: Մատենագրի հեղինակած մյուս կենսագրական բառարանը Durar al-ʿuqūd al-farīda fī tarāḡim al-aʿyān al-mufīda-ն է²²⁴: Նրանում հեղինակը ներառել է իր կյանքի օրոք մահացած հայտնի ժամանակակիցների ավելի քան 500 կենսագրական հոդվածներ²²⁵:

²²¹ Տե՛ս **al-Maqrīzī**, *Al-Mawāʿiz wa-l-iʿtibār bi-ḍikr al-ḥiṭaṭ wa-l-aṭār*, 2 ք., Bulāq, al-Qāhira, 1853-1854, ինչպես նաև Այման Ֆուադ Սայյիդի նոր հրատարակությունը տե՛ս **Ռոյճի՛**՝ bi-tahqīq Ayman Fuʿād Sayyid, 5 ք., Muʿassasat al-Furqān li al-turāṭ al-ʿarabī (Al-Furqān Islamic Heritage Foundation, London, 2002-2004):

²²² **F. Bauden**, “Maqriziana IX: Should al-Maqrīzī be thrown out with the bath water? The question of his plagiarism of al-Awhādī’s *Khīṭaṭ* and the documentary evidence”, *MSR*, vol. XIV, 2010, pp. 159-232. Հմմտ. **N. Rabbat**, “Was al-Maqrīzī’s *Khīṭaṭ* a Khaldūnian history?”, p. 132, n. 56:

²²³ **Al-Maqrīzī**, *Kitāb al-Muqaffā al-Kabīr*, bi-tahqīq Muḥammad al-Yaʿlāwī, 8 ք., Dār al-Ġarb al-Islāmī, Bayrūt, 1991.

²²⁴ Տե՛ս **al-Maqrīzī**, *Durar al-ʿuqūd al-farīda fī tarāḡim al-aʿyān al-mufīda*, ք. 1-2, bi-tahqīq Adnān Darwīš wa-Muḥammad al-Miṣrī, Dimašq, 1995 և մեկ այլ հրատարակություն ևս՝ **Ռոյճի՛**՝ ք. 1-4, bi-tahqīq Maḥmūd al-Ġalīlī, Dār al-Ġarb al-Islāmī, Bayrūt, 2002:

²²⁵ **Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn**, *Al-Maqrīzī muʿarriḥan*, թ. 93.

Ալ-Մակրիզիի մեզ հասած երկերից քիչ հայտնի է, բայց բացառիկ կարևորություն Al-Ḥabar ‘an al-bašar fī ansāb al-‘Arab wa-nisb sayyid al-bašar («Մարդկության պատմություն» [ի մասնավորի] արաբների և ժողովուրդներից գլխավորագույնի ծագումնաբանության մասին») վերնագրով համընդհանուր պատմությունը՝ սկսած աշխարհի և մարդու արարումից²²⁶։ Երկի նպատակը, ինչպես հեղինակն է պարզաբանում, արաբներին աշխարհի մյուս ժողովուրդներից առանձնացնելն է (ḡinsuhā min sā’ir al-aḡnās), նրանց արժանիքները ցուցանելը²²⁷։ Al-Ḥabar ‘an al-bašar-ի առաջին հատորներն ըստ այդմ նվիրված են արաբների նախախլամական պատմությանը՝ ծագումնաբանությունը, ավանդույթներին, հավատալիքներին։ Այնուհետև նա անցում է կատարում այլ ժողովուրդների՝ պարսիկների, հրեաների, հույների, լատինների և գոթերի (al-qūṭ) համառոտ պատմությանը²²⁸։ «Մարդկության պատմության» վերջին մասը հակաքրիստոնեական բանավիճական զրախանություն իսկական նմուշ է։ Նրանում խոսվում է մարգարեների մասին ընդհանրապես և Ղուրանում ու Աստվածաշնչում հանդիպող մարգարեների մասին մասնավորապես, Քրիստոսի և քրիստոնեության ծագման, նրա տարածման, հիմնական դոգմաների մասին՝ համեմեցնելով սուր քննադատությունը և համեմատական աղերսեր տանելով իսլամի հետ՝ որպես միակ ճշմարիտ հավատի։ Ինչպես իր մյուս վերոնկարագրյալ երկերում, Al-Ḥabar ‘an al-bašar-ում նույնպես ալ-Մակրիզին շատ հաճախ զլանում է իր աղբյուրները նշել²²⁹։

²²⁶ St‘u al-Maqrīzī, Al-Ḥabar ‘an al-bašar fī ansāb al-‘Arab wa-nisb sayyid al-bašar, bi-tahqīq Ḥālid Aḥmad al-Suwaydī wa-‘Ārif ‘Abd al-Ḡanī, 8 ց., Dār al-‘arabiyya li al-mawsū‘āt, Bayrūt, 2013, ինչպես նաև F. Bauden, “Al-Maqrīzī” (Christian-Muslim Relations), p. 392 և նույնի՝ “Taḡī al-Dīn”, p. 196-199։ Ֆ. Բոդենն իր գործընկերների հետ ձեռնարկել է *Bibliotheca Maqriziana* շարք, որի նպատակն ալ-Մակրիզիի երկերի թարգմանական հրատարակությունն է։ Շարքի մի քանի հատորները՝ այդ թվում Al-Ḥabar ‘an al-bašar-ից մի քանի հատվածների թարգմանությունն ընդգրկող երկու հատորն արդեն հրատարակվել են։ St‘u al-Maqrīzī’s Al-Ḥabar ‘an al-bašar, vol. V, Sections 1-2. The Arab Thieves, Critical Edition, Annotated Translation and Study by P. Webb, Brill, Leiden-Boston, 2019 և Al-Maqrīzī’s al-Ḥabar ‘an al-bašar, vol. V, Section 6. The Greeks, Romans, Byzantines, Franks, and Goths, Critical Edition, Annotated Translation and Introduction by M. Penelas, Leiden-Boston, 2020։

²²⁷ St‘u al-Maqrīzī, Al-Ḥabar, ց. 1, ց. 53, ինչպես նաև Muḥammad Kamāl al-Dīn ‘Izz al-Dīn, Al-Maqrīzī mu’arriḥan, ց. 62-63։

²²⁸ F. Bauden, “Al-Maqrīzī” (Christian-Muslim relations), pp. 392-393.

²²⁹ Ա.նդ., pp. 393-394։

Ալ-Մակրիզիի ժամանակակիցն ու նրա ակադեմիական մրցակիցն էր ալ-Այնին (մահ. 1451 թ.)՝ ևս մի ակնառու դեմք մամլուքյան պատմագրության երկնակամարում:

Վերջինիս պատմագրական գլխավոր երկի՝ *ʿIqd al-ğumān fī tāriḥ ahl al-zamān*-ի («Ժամանակի մարդկանց պատմության մարգարայա մանյակ») արժեքը ճանաչված է մամլուքյան պատմագրության արդի հետազոտողների շրջանում: Չնայած դրան՝ ալ-Այնիի պատմության շուրջ կեսը դեռ մնում է չհրատարակված (տե՛ս ներքևում): Երկի կարևորությունը դրսևորվում է հենց թեկուզ նրանում, որ ի տարբերություն, օրինակ, ալ-Մակրիզիի՝ այս մատենագիրը շատ հետևողական է իր աղբյուրները հղելու հարցում²³⁰:

Բաղբ ալ-Դին Մահմուդ ալ-Այնին ծնվել է 1360 թ. Այնթաբում՝ Հայտնի մտավորականի (ʿālim) և Հանաֆիական մազհաբի դատավորի՝ qāḍī-ի ընտանիքում: Հոր հետևողությամբ ստացել է հիմնավոր կրոնական կրթություն: Բացի արաբերենից գերազանց տիրապետել է նաև թուրքերենին, ինչը բարենպաստ ազդեցություն է ունեցել նրա հետագա գործունեության վրա²³¹: Կրթությունը շարունակելու նպատակով ճամփորդել է Ասորիքում և աշակերտել Հայտնի աստվածաբանների և կրոնաիրավագետների²³²: Ալ-Այնիի կյանքը կտրուկ փոխվեց, երբ նա վերջնականապես հաստատվեց Կահիրեում: Կարճ ժամանակի ընթացքում կապեր հաստատելով մի շարք ազդեցիկ էմիրների հետ՝ նա աստիճանաբար շահեց կառավարող վերնախավի բարեհաճությունը: 1399-1401 թթ. ընթացքում ալ-Այնին իր մեկենաս էմիրների միջնորդությամբ ալ-Մակրիզիի փոխարեն թեև կարճ ժամանակով, բայց երկու անգամ նշանակվեց Կահիրեի muḥtasib-ի («չափուկչոփ վերապետ», «շուկաների վերակառու») բարձր պաշտոնում²³³: Ալ-Այնին

²³⁰ D. Little, *Introduction*, pp. 79-80.

²³¹ W. Marçais, “Al-ʿAynī”, in *IE²*, vol. 1, pp. 790-791; A. Broadbridge, *Academic rivalry*, p. 86; P.M. Holt, “Literary offerings: a genre of courtly literature”, in *The Mamluks in Egyptian politics and Society*, ed. by Thomas Philipp and Ulrich Haarmann, Cambridge University Press, Cambridge, 1998, p. 8.

²³² Al-ʿAynī, *ʿIqd al-ğumān fī tāriḥ ahl al-zamān*, ց. 1, bi-taḥqīq Maḥmūd Rizq Maḥmūd (հետալյալ՝ *ʿIqd-MRM*), Dār al-kutub wa-l-waṭāʾiq al-qawmiyya, al-Qāhira, 2007, ց. 19-20.

²³³ A. Broadbridge, *Academic rivalry*, pp. 89-90; Muḥammad Muṣṭafā Ziyāda, *Al-Muʿarriḥūn fī Miṣr fī al-qarn al-ḥāmis aṣar al-milādī (al-qarn al-tāsil al-ḥiğrī)*, al-Qāhira, 1949, ց. 20; al-ʿAynī, *ʿIqd-MRM*, ց. 1, ց. 21.

քանիցս զբաղեցրել է նաև nāzīr al-aḥbās-ի («բարեգործական ֆոնդերի վերառեսույժ») ոչ պակաս հեղինակավոր պաշտոնը: Ալ-Այնիի հասարակական-քաղաքական գործունեությունը կարծես թե փակուղիում հայտնվեց ալ-Մուլայյադ Շեյխի կառավարման սկզբնական շրջանում: Բայց նա կարողացավ չահել նոր սուլթանի վստահությունը, և 1420 թ., որպես արքունական դեսպանագնացության ղեկավար, ուղարկվեց Կոնիա՝ Կարամանների հետ բանակցելու²³⁴: Բավական է նշել, որ հենց ալ-Մուլայյադի կառավարման օրոք ալ-Այնին կառուցեց իր սեփական մադրասան²³⁵: Մամուլքյան ռազմավարչական վերնախավի հետ ալ-Այնիի հարաբերություններն անխափան շարունակվեցին նաև հաջորդած սուլթանների օրոք: Նրա կառավարչական գործունեությունն իր բարձրակետին հասավ ալ-Մալիք ալ-Ջահիր Տատարի (al-Ṭaṭār, 1421 թ.) և հատկապես ալ-Աշրաֆ Բարսբայի կառավարման տարիներին: Ալ-Այնին թերևս առաջինն էր, ով արժանացավ muḥtasib-ի, nāzīr al-aḥbās-ի և հանաֆի գլխավոր qāḍī-ի պաշտոնները միաժամանակ զբաղեցնելու պատվին²³⁶: Բարսբայի հետ ալ-Այնիի հարաբերություններն այնքան մտերմական էին, որ սուլթանը շատ հաճախ խորհրդակցում էր նրա հետ կրոնաիրավագիտական և անգամ պետական նշանակություն հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելիս, խնդրում իր համար թարգմանել նրա երկերից, քանզի արաբերենին լավ չէր տիրապետում, թույլատրում էր իր փոխարեն պատվիրակություններ ընդունել և այլն²³⁷: Միայն ալ-Ջահիր Սայֆ ալ-Դին Ջալմակ սուլթանի գահակալման տարիներին է, որ ալ-Այնին աստիճանաբար դուրս մնաց արքունական շրջանակների ուշադրությունից և ազատվեց իր զբաղեցրած պաշտոններից: Նա վախճանվեց 1451 թ. և թաղվեց իր իսկ հիմնած դպրոցի (madrasa) տարածքում²³⁸:

Ալ-Այնիի պատմագրական ժառանգության պսակը նրա վերոհիշյալ համընդհանուր պատմությունն է՝ ‘Iqd al-ḡumān-ը: Հեղինակն իր երկի շարադրանքն սկսել է աշխարհի արարումից՝ հասցնելով մինչև

²³⁴ Տե՛ս Անդ, §. 22:

²³⁵ L. Ibrahim & B. O’Kane, “The Madrasa of Badr al-Dīn al-‘Aynī and Its Tiled Mihrāb”, *Annales Islamologiques*, vol. 24, 1988, pp. 253-268.

²³⁶ A. Broadbridge, *Academic rivalry*, p. 96; al-‘Aynī, ‘Iqd-MRM, §. 1, §. 24.

²³⁷ Տե՛ս նախորդ ծնթր.:

²³⁸ Al-‘Aynī, ‘Iqd-MRM, §. 1, §. 24; A. Broadbridge, *Academic rivalry*, p. 106.

1446 թ.: Ընդ որում այս մեծածավալ ժամանակագրությունը միանգամից չի ծնվել: Ծապոնացի հետազոտող Նոբուտակա Նակամաչիի հետազոտությունները ցույց են տվել, որ ալ-Այնին նախ գրել է մի շատ ավելի փոքրածավալ երկ՝ Tārīḥ al-Badr fī awṣāf ahl al-aṣr վերնագրով, որի և նոր աղբյուրների հիմքի վրա այնուհետ վերաշարադրել է իր ժամանակագրությունն արդեն 'Iqd al-ġumān վերնագրի տակ: Դրանից հետո հեղինակը պատրաստել է նաև իր պատմության համառոտագրությունը²³⁹: Ալ-Այնիի այս երկերն է ընդօրինակել և դրանց հիման վրա իր Al-Tārīḥ al-Šihābī wa-l-qamar al-munīr fī awṣāf ahl al-aṣr wa-l-zamān կարճառոտ ժամանակագրությունն է գրել նրա կրտսեր եղբայրը՝ Շիհաբ ալ-Դին Ահմադ ալ-Այնին²⁴⁰:

Բահրի մամլուքների պատմությունը շարագրելիս մատենագիրն իրենից առաջ ապրած հեղինակներից հենվում է մասնավորապես Բալբարս ալ-Մանսուրիի, Աբու ալ-Ֆիդայի, Իբն Քասիրի, ալ-Նուվայրիի, ալ-Յուսուֆիի պատմագրական երկերի վրա, որոնց անունները գրեթե միշտ բարեխղճորեն հիշատակում է²⁴¹: Օրինակ, ալ-Յուսուֆիից ալ-Այնիի կատարած մեծաթիվ մեջբերումները թույլ են տալիս վերականգնել Nuzhat al-nāẓir-ի առանձին հատվածներ, որից, ինչպես վերևում ենք նշել, մեզ է հասել ընդամենը 1332-1338 թթ. ընդգրկող մի հատված միայն: Երկի հրատարակության գործի մեկնարկը տրվել է 1987 թ. Մուհամմադ Ամինի կողմից, և առաջինը լույս են տեսել հենց Բահրի մամլուքյան շրջանն ամփոփող 4 հատորներ: Երկարամյա դադարից հետո նույն խմբագիրը կյանքի կոչեց 1308-1312 թթ.

²³⁹ N. Nakamachi, “Al-‘Aynī’s chronicles as a source for the Bahrī period”, *Orient (The Society for Eastern Studies in Japan)*, vol. XL, 2005, p. 141; **ՏԵՄԵՆԻ** “Four chronicles attributed to Bedruddīn Aynī”, in *Uluslararası Bedruddin El-Ayni Sempozyumu ve II. Hadis İhtisas Toplantısı*, ed. by Recep Tuzcu, 2016, pp. 587-596; N. Nakamachi, “Al-‘Aynī’s Working Method for His Chronicles: Analysis of His Holograph Manuscripts”, in *In the Author’s Hand: Holograph and Authorial Manuscripts in the Islamic Handwritten Tradition*, ed. by F. Bauden, E. Franssen, Brill, Leiden-Boston, 2020, pp. 277-299.

²⁴⁰ **ՏԵՄԵՆԻ** “Life in the Margins: Shihāb al-Dīn Aḥmad al-‘Aynī, a None-Elite Intellectual in the Mamlūk Period”, *Orient*, vol. 48, 2013, pp. 95-111:

²⁴¹ D. Little, *An Introduction*, p. 81; L. Northrup, *From slave to sultan*, p. 52; N. Nakamachi, “Al-‘Aynī’s chronicles”, p. 141.

չարագրանքը պարփակող ևս մի հատոր: Նրա մահով, սակայն, անավարտ մնաց հետագա հատորների հրատարակման գործը²⁴²:

Տարիներ առաջ Մահմուդ Ռիզկի Մահմուդը ձեռնամուխ է եղել նաև Այյուբյանների պատմությունը պարունակող մասերի հրատարակությանը²⁴³: Սուլթան Բարկուկի (կառ. 1382-1389, 1390-1399 թթ.) կառավարման շրջանի լուսաբանման համար 'Iqd al-ğumān-ի 1382-1396 թվականներն ընդգրկող հաղորդումներն է օգտագործել Իման Ումար Շուքրին²⁴⁴: Եվ վերջապես Աբդ ալ-Ռազիկ ալ-Տանտավի ալ-Կարմուտը հրատարակել է 1421-1447 թթ. ընդգրկող պարբերությունը²⁴⁵:

Ալ-Այնիի երկի ձեռագրերը՝ այդ թվում 15 ինքնագիր հատորները²⁴⁶, ցրված են աշխարհի՝ մասնավորապես Թուրքիայի գրադարաններում: Մուհամմադ Ամինի գործի շարունակումը, որի համար պարարտ հող կա ստեղծված Նոբուտակա Նակամաչիի հետազոտությունների շնորհիվ, իսկական նվեր կլինի մամլուքյան դարաշրջանի ուսումնասիրողների համար: Հաշվի առնելով ալ-Այնիի օգտագործած աղբյուրների բացառիկությունը՝ 1312-1375 թվականներն ընդգրկող հատորներում, անշուշտ, ուշագրավ տեղեկություններ կգտնվեն նաև հայ-մամլուքյան հարաբերությունների վերաբերյալ, ինչու՞մ համոզվելու առիթ մի անգամ արդեն ունեցել ենք²⁴⁷: Լիթթիլի կարծիքով ալ-Այնիի «Մարգարտյա մանյակի» արժանիքները ցայտուն երևում են

²⁴² Տե՛ս **al-'Aynī**, 'Iqd al-ğumān fī tāriḥi ahl al-zamān, 4 ց., bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay'a al-miṣriyya al-'āma li-l-kitāb, al-Qāhira, 1987-1992 (հետայսու՝ 'Iqd-MMA), ինչպես նաև ց. 5, Maṭba'at Dār al-kutub wa-l-waṭā'iq al-qawmiyya, al-Qāhira, 2009:

²⁴³ Տե՛ս **նույնի**՝ 'Iqd-MRM, 4 ց., bi-taḥqīq Maḥmūd Rizq Maḥmūd, Dār al-kutub wa-l-waṭā'iq al-qawmiyya, al-Qāhira, 2007-2010:

²⁴⁴ Al-Sulṭān Barqūq, mu'assis dawlat al-mamālīk al-ğarākisa (784-801-1382-1398) min ḥilāl maḥtūṭ 'Idq al-ğumān min tāriḥi ahl al-zamān li-Badr al-'Aynī, bi-taḥqīq **Imān 'Umar Šukrī**, Maktabat Madbūlī, al-Qāhira, 2002.

²⁴⁵ **Al-'Aynī**, 'Iqd al-ğumān fī tāriḥi ahl al-zamān, 2 ց. (815-824 h.), bi-taḥqīq 'Abd al-Rāziq al-Ṭanṭāwī al-Qarmūṭ, al-Zahrā' li-l-'lām al-'arabī, al-Qāhira, 1989:

²⁴⁶ **N. Nakamachi**, "Al-'Aynī's Working Method", p. 278.

²⁴⁷ Տե՛ս **Գ. Գանիկեան**, «Մալաթիայի գրադարանի մամլոմիջոցների կողմից 1315 թ. եւ Կիլիկիան Հայաստանը», ՀԱ, քիւ 1-12, 2017, Վիեննա-Երևան, էջ 85-146: Իր երկում Մալաթիայի գրավման մասին ալ-Յուսուֆիի հաղորդումն է մեջբերել ալ-Այնին: 'Iqd al-ğumān-ի Բելազհաի գրադարանի համապատասխան ձեռագրի (Veliyuddin 2394) հիշյալ հաղորդումը բովանդակող էջերը խնդրել և շնորհակալությամբ ստացել ենք Նոբուտակա Նակամաչիից:

Հատկապես ալ-Մակրիզիի ժամանակագրությունն հետ համեմատությունն մեջ, քանզի այն իր կառուցվածքային և օգտագործված աղբյուրները հղելու տեխնիկական բնութագրիչներով գերազանցում է Kitāb al-sulūk-ին²⁴⁸։ Բուրջի մամլուքյան պատմության սկզբնական շրջանի իրադարձությունները շարադրելիս ալ-Այնին, ինչպես Սամի Մասսուդն է եզրակացնում, հենվել է Իբն Դուլմալի Nuzhat al-anām-ի վրա²⁴⁹։ Մասսուդի կարծիքով 1407-1446 թթ. իրադարձությունների մասին խոսելիս ալ-Այնին արդեն հանդես է գալիս առավելապես որպես ինքնուրույն ու անկախ հեղինակ՝ «Մարգարտյա մանյակի» այս մասը կառուցելով հիմնականում իր հավաքած տեղեկությունների վրա։ Բացի 'Iqd al-ğumān-ից ալ-Այնին հեղինակ է սուլթանների կենսագրություն-վարքագրությունների՝ ալ-Մուլայյադ Շեյխին նվիրված Al-Sayf al-muhannad-ի²⁵⁰ և ալ-Մալիք ալ-Ջահիր Տատարին նվիրված Al-Rawḍ al-zāhir-ի²⁵¹։

Ժե դարի մամլուքյան պատմագրությունն մյուս հայտնի ներկայացուցիչն ալ-Այնիի և ալ-Մակրիզիի կրտսեր ժամանակակից և նրանց ակադեմիական մրցակից, հայտնի հադիսագետ և կրոնաիրավագետ Իբն Հաջար ալ-Ասկալանին է (մահ. 1449 թ.)։ Նա ծնվել է 1372 թ. Եգիպտոսում՝ հարուստ վաճառականական ընտանիքում։ Իր

²⁴⁸ Տե՛ս D. Little, *An Introduction*, p. 80; նույնի՝ “Analysis”, pp. 259-261 և հատկապես նույնի՝ “A Comparison”, pp. 205-215, ինչպես նաև N. Nakamachi, “Al-‘Ayni’s Working Method”, pp. 296-298:

²⁴⁹ Տե՛ս S. Massoud, *The chronicles*, p. 40-41: Հմմտ. Իբն Հաջար ալ-Ասկալանիի այն վկայության հետ, թե ալ-Այնին «բառ առ բառ ամբողջ էջեր է արտագրել նրանից (Իբն Դուլմալիից)՝ երբեմն փոխառելով նաև կասկածելի թվացող տեղեկությունները: Նա անգամ կրկնել է վերջինիս կատարած ակնհայտ քերականական սխալները, ինչպես օրինակ՝ aḥla‘a ‘alā fulān: Տարօրինակ է, որ Բադրն անգամ իրեն է վերագրել վկայություններ այն իրադարձությունների մասին, որոնց Իբն Դուլմալին է նշել, թե ականատես է եղել, և որոնք տեղի են ունեցել Եգիպտոսում, երբ ինքը [գետ]՝ հեռու Այնիթաբում էր»: Տե՛ս Ibn Ḥağar al-Asqalānī, *Inbā’ al-ğumr fī abnā’ al-‘umr*, bi-taḥqīq Ḥasan Ḥabašī, ց. 1, al-Qāhira, 1969, ց. 4-5: Նույնը տե՛ս նաև F. Rosenthal, *A History*, p. 356, n. 3 (թարգմանությունը), p. 583 (արաբերեն բնագիրը):

²⁵⁰ Al-‘Aynī, *Al-Sayf al-Mufannad fī sirat al-Malik al-Mu‘ayyad “Sayḥ al-Mahmūdī”*, bi-taḥqīq Fahīm Šaltūt, Dār al-Kitāb al-‘Arabī, al-Qāhira, 1967.

²⁵¹ Նույնի՝ *Al-Rawḍ al-zāhir fī sirat al-Malik al-Zāhir “Tatar”*, bi-taḥqīq Hans Arnst, Dār ihyā’ al-kutub al-‘arabiyya, al-Qāhira, 1962: Ինչպես երևում է, ալ-Այնին այս *sīra*-ի վերնագիրը փոխառել է Իբն Աբդ ալ-Ջահիրից: Տե՛ս նաև D. Little, “A Comparison”, p. 211 և հատկապես P. Holt, “Literary offerings”, pp. 8-12:

կյանքի գրեթե ողջ ընթացքում վայելել է մամլուքյան վերնախավի հարգանքն ու հովանավորությունը: Սուլթան ալ-Աշրաֆ Բարսբայի օրոք իբն Հաջարը նշանակվել է Եգիպտոսի շաֆիական գլխավոր *qāḍī*-ի (*qāḍī al-quḍāt*) բարձր պաշտոնում, որը զբաղեցրել է ընդհուպ մինչև իր մահը՝ շուրջ 21 տարի: Ալ-Ասկալանին մահացել է 1449 թ. Կահիրեում: Ըստ իբն Թաղրի Բիրդիի՝ նրա թաղման թափորում շուրջ 50 հազար մարդ կար. ներկա էին նաև սուլթան Զակմակն ու խալիֆան²⁵²:

Չնայած իբն Հաջարին կյանքի օրոք փառք են բերել կրոնատիրավագիտական երկերը²⁵³, բայց նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել նաև պատմագրություն նկատմամբ: «Նա նույնքան մեծ պատմագիր էր, որքան մեծ հաղիսագետ», - նրա մասին գրում է Շաքիր Մուստաֆան²⁵⁴: Ալ-Ասկալանին հեղինակ է *Inbāʾ al-ġumr fī abnāʾ al-ʿumr* («Հաղորդումներ անգիտակների համար ժամանակի մարդկանց մասին») վերնագրով ժամանակագրություն²⁵⁵, որն ընդգրկում է իր ծննդյան թվականից մինչև 1446 / 1447 թ. մամլուքյան պատմությունը: Իբն Հաջարն իր պատմությունը հյուսելիս օգտագործել է իբն ալ-Ֆուրակի, իբն Դուկմակի, ալ-Մակրիզիի, ալ-Այնիի և այլոց երկերը²⁵⁶: Պետք է նշել, որ անգամ իր ժամանակի անցքերը նկարագրելիս իբն Հաջարը չատ հաճախ հենվում է այլ հեղինակների վկայությունների վրա: Սա հավանաբար նշանակում է, որ ճիշտ կլինի այս երկն օգտագործել

²⁵² Իբն Հաջար ալ-Ասկալանիի կյանքի և գործունեության մասին ավելի հանգամանալից տե՛ս հատկապես **Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn, Al-Tārīḥ wa-l-manḥağ al-tārīḥ li-ibn Ḥağar al-ʿAsqalānī, Dār al-Iqrāʾ, Bayrūt, 1986, ք. 61-186, ինչպես նաև Ֆ. Ռոզենտալի հոդվածն** Իսլամի հանրագիտարանում՝ “Ibn Ḥağar al-ʿAsqalānī”, in *EI²*, vol. 3, pp. 776-778: Մասուդը նույնպես հղում է այս հոդվածը, բայց սխալ է նշում ոչ միայն հանրագիտարանի հատորը, այլև հոդվածի հեղինակին՝ շփոթելով հաջորդ հոդվածի հետ: Տե՛ս **S. Massoud, The Chronicles**, p. 53, note 167: Իբն Հաջարի մասին տե՛ս նաև **A. Broadbridge**, “Academic rivalry”, pp. 85-107:

²⁵³ Խոսքը մասնավորապես ալ-Բուխարիի *Ṣaḥīḥ*-ի մեկնության՝ *Al-Fath al-Bārī*-ի մասին է, որն իբն Հաջարի և ալ-Այնիի փոխադարձ անհանդուրժողականության պատճառներից մեկն է դարձել: Ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk*-ի հետ մեկտեղ այս երկն այն երկու երկերից մեկն էր, որոնք Լեոն Թեմուրի որդի Շահրուհը 1428 թ. խնդրել էր մամլուքյան իշխանություններից:

²⁵⁴ **Ş. Muştafâ, Al-Tārīḥ al-ʿArabī**, ց. 3, ք. 152.

²⁵⁵ **Ibn Ḥağar, Inbāʾ al-ġumr fī abnāʾ al-ʿumr, bi-taḥqīq Ḥasan Ḥabaşī**, 4 ց. 1, al-Qāhira, 1969-1998.

²⁵⁶ Տե՛ս Անդ. ց. 1, ք. 3-5:

միայն ժամանակակից մյուս մամլուքյան սկզբնաղբյուրներին զուգահեռ: Ինչպես Սամի Մասուդն է նկատում, *Inbā' al-ğumr*-ում չատ են տարեթվերի անճշտությունները, կրկնությունները, այն զուրկ է չափադրանքի հստակ, կանոնակարգված տրամաբանությունից²⁵⁷:

Իբն Հաջարի գրչին է պատկանում նաև *Al-Durar al-kāmina fī a'yān al-mi'a al-tāmina* («Թաֆնված մարգարիտներ ութերորդ հարյուրյակի երեկիների վերաբերյալ») վերնագրով ընդարձակ կենսագրական բառարանը²⁵⁸, որը, ինչպես վերնագիրն է հուշում, պարունակում է Հիջրայի Ը դարում վախճանված ինչպես եգիպտացի, այնպես էլ ասորիքցի ավելիքան 5200 երևելի մուսուլմանների մասին կենսագրական հոգվածներ: Քանի որ Իբն Հաջարը ծնվել է 1372 թ., հասկանալի է, որ *Al-Durar*-ը մեծամասամբ կառուցված պիտի լինի նրանից առաջ գրված այլ կենսագրական բառարանների՝ առանձնապես ալ-Սաֆադիի *Al-Wāfi*-ի վրա²⁵⁹:

Բուրջի մամլուքյան շրջանի արաբալեզու պատմագրության հաջորդ ակնառու ներկայացուցիչն Աբու ալ-Մահասին Իբն Թադրի Բիրդին (մահ. 1470 թ.) է: Նա ծնվել է մոտ 1410 թ. Կահիրեում՝ բարձրաստիճան մամլուք պաշտոնյայի ընտանիքում²⁶⁰: *Awlād al-nās*-ի ներկայացուցիչ լինելով՝ Իբն Թադրի Բիրդին մեծ հեղինակություն ու կապեր ուներ ինչպես մամլուքյան վերնախավի, այնպես էլ մտավորականության շրջանակներում: Հիմնավոր կրթություն ստացած և արաբերենից բացի ազատ տիրապետելով նաև թուրքերենին՝ նա սկսել է զբաղվել հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ: Անձամբ ծանոթ լինելով ալ-Մուալլայադ Շեյխ, Բարսբայ, Ջակմակ և Խուլզկադամ սուլթաններին և վայելելով նրանց հովանավորությունը՝

²⁵⁷ S. Massoud, *The Chronicles*, pp. 54-60.

²⁵⁸ Ibn Ḥaǧar, *Al-Durar al-kāmina fī a'yān al-mi'a al-tāmina*, bi-tahqīq Sālim al-Karnakāwī, ǧ. 1-4, Ḥaydarābād, 1929-1931.

²⁵⁹ D. Little, “Historiography”, p. 442.

²⁶⁰ Կենսագրական տեղեկությունների համար տե՛ս W. Popper, “Abū al-Maḥāsin Taghrībirdī”, in *El²*, vol. 1, p. 138; Ibn Tagrī Birdī, *Al-Manhal al-ṣāfi wa-l-mustawfi ba'da al-Wāfi*, ǧ. 1, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-ʿĀmma li-l-Kitāb, al-Qāhira, 1984, ǧ. 5-7 (Taqdīm Saʿīd ʿAbd al-Fattāḥ ʿĀṣūr); Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-ʿArabī*, ǧ. 3, ǧ. 169; Ibn Tagrī Birdī, *Ḥawādiṯ al-duḥūr fī maḍā al-ayyām wa-l-ṣuhūr*, bi-tahqīq Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn, ʿĀlam al-Kutub, 1990, Bayrūt, ǧ. 13-26; M.M. Ziyāda, *Al-Muʿarriḥūn*, ǧ. 26-32; S. Massoud, *The chronicles*, p. 60-61:

նա ազատ ելումուտ ուներ արքունիք²⁶¹: Հայտնի է, որ նա սկսել է հետաքրքրվել պատմագրությամբ, երբ լսել է, որ ալ-Այնին սուլթան Բարսբայի խնդրանքով իր երկերն է ընթերցում նրա համար²⁶²: Բայց և այնպես, իբն Թաղրի Բիրդիի պատմիչի ձևավորման վրա ամենամեծ ազդեցությունը թողել է ալ-Մակրիզին, ում նա աշակերտել է: Ալ-Մակրիզիի և ալ-Այնի մահից հետո իբն Թաղրի Բիրդին արդեն մամլուքյան եգիպտոսի ամենանշանավոր պատմիչն էր²⁶³: Աբու ալ-Մահասինը հեղինակ է երկու ժամանակագրությունների՝ *Al-Nuġūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira* («Եգիպտոսի և Կահիրեի արքաների փայլուն աստղեր») և *Ḥawādīṭ al-duhūr fī maḍā al-ayyām wa-l-šuhūr* («Ժամանակների անցման ըստ օրերի և ամիսների հերթագայության») վերնագրերով²⁶⁴:

Al-Nuġūm al-zāhira-ն եգիպտոսի ամբողջական պատմությունն է՝ սկսած նրա իսլամական նվաճումից ընդհուպ մինչև 1468 թվականը: Իբն Թաղրի Բիրդին, նշում է, որ ինքն իր «պատմությունը» գրել է իր ընկերոջ՝ սուլթան Ջակմակի որդի Մուհամմադի համար²⁶⁵: Այս երկում պատմական նյութի շարադրանքը, ինչպես Լիթթլն է մատնանշում, համապատասխան չէ դասական տարեգրության սկզբունքներին: Այն, ըստ էության, դինաստիական պատմություն է, թեև իրադարձությունների ներկայացման ժամանակագրական հաջորդականությունը պահպանված է բոլոր կառավարողների իշխանության տարիների պատմությունը ներկայացնելիս²⁶⁶: Մամլուքյան պատմու-

²⁶¹ D. Little, “Historiography”, p. 439; Ibn Taghrī Birdī, *Al-Manhal*, ǧ. 1, ʃ. 7.

²⁶² M.M. Ziyāda, *Al-Muʿarriḥūn*, ʃ. 29-30; I. Perho, “Al-Maqrīzī and Ibn Taghrī Birdī as historians of contemporary events”, *HIE*, p. 108, ինչպես նաև նույնի՝ “Ibn Taghrībirdī’s Voice”, in *Studia Orientalia*, vol. 114 (Travelling through Time. Essays in honour of Kaj Öhrnberg), ed. by Sylvia Akar, Jaakko Hämeen-Anttila & Inka Nokso-Koivisto, Helsinki, 2013, pp. 135-145.

²⁶³ W. Popper, “Abū al-Mahāsīn”, ʃ. 138; M.M. Ziyāda, *Al-Muʿarriḥūn*, ʃ. 26, 30.

²⁶⁴ Ibn Taghrī Birdī, *Al-Nuġūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, 16 ǧ., bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-ʿilmiyya, Bayrūt, 1992; նույնի՝ *Ḥawādīṭ al-duhūr fī maḍā al-ayyām wa-l-šuhūr*, 2 ǧ., bi-taḥqīq Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn, ʿĀlam al-kutub, 1990.

²⁶⁵ Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-ʿArabī*, ǧ. 3, ʃ. 170-171.

²⁶⁶ D. Little, *An Introduction*, p. 87, ինչպես նաև նույնի՝ “Historiography”, p. 439; Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-ʿArabī*, ǧ. 3, ʃ. 171.

Թյունը շարադրելիս նա օգտագործել է Բայբարս ալ-Մանսուրիի, ալ-Նուվայրիի, ալ-Ջահաբիի, ալ-Յունինիի, ալ-Ջազարիի, Իբն Քասիրի, ալ-Յուսուֆիի, Իբն Դուկմակի, ալ-Մակրիզիի և այլոց երկերը, որոնցից շատերին նա հաճախ հղում է, թեև նույնքան հաճախ անփութորեն և կամ միտումնաբար մի հեղինակի վկայությունը վերագրում է մեկ ուրիշին, երբեմն էլ անհարկի ու անհիմն հավելումներ անում նրանց հաղորդումներին: Այս հանգամանքները հաշվի առնելով է, որ Լիթթին Al-Nuǧūm al-zāhira-ն գոնե որպես ալ-Մալիք ալ-Նասիրի կառավարման շրջանի համար «կասկածելի արժեքով սկզբնաղբյուր» է որակում²⁶⁷: Իր մյուս երկում Իբն Թադրի Բիրզիի պատմագրություն իր «նորարարական ռիթմ» վերստին անցում է կատարում դեպի դասական տարեգրություն: Սրա պատճառը հավանաբար այն է, որ Ḥawādīt al-duḥūr-ը գրվել է որպես ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk-ի շարունակություն: Այն, հետևաբար սկսվում է 1441 և ավարտվում 1469 թվականի իրադարձություններով: Թեև այս նույն շրջանը գրեթե ամբողջությամբ ներառված է նաև վերը հիշատակված Al-Nuǧūm-ում, այնուհանդերձ Ḥawādīt al-duḥūr-ում 1441-1469 թթ. իրադարձությունները շատ ավելի հանգամանալից են ներկայացված²⁶⁸:

Բացի այս երկու ժամանակագրություններից՝ Իբն Թադրի Բիրզիի գրքին է պատկանում նաև Al-Manḥal al-ṣāfi wa-l-mustawfi ba'da al-Wāfi («Վերստաղծված և ամրապնդված Al-Wāfi-ի լրացում») կենսագրական բառարանը²⁶⁹: Վերնագիրը հուշում է, որ այն գրվել է որպես ալ-Սաֆադիի երկի լրացում և շարունակություն: Այն ընդգրկում է Մամլուքյան սուլթանության հիմնադրման ժամանակներից մինչև 1458 թ. մահացած մոտ երեք հազար ականավոր քաղաքական, ռազմավարական գործիչների, գիտնականների, մտավորականների և այլ երևելիների մասին կենսագրական հոգվածներ²⁷⁰:

²⁶⁷ D. Little, *An Introduction*, p. 89-92.

²⁶⁸ Sk'ū 𐤲𐤍𐤕𐤒𐤕𐤃𐤃𐤃𐤃 "Historiography", p. 439:

²⁶⁹ Ibn Tagrī Birdī, *Al-Manḥal al-ṣāfi wa-l-mustawfi ba'da al-Wāfi*, 13 ǧ., bi-taḥqīq Muḥammad Muḥammad 'Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-Āmma li-l-Kitāb, al-Qāhira, 1984-2009.

²⁷⁰ M.M. Ziyāda, *Al-Mu'arriḥūn*, ʃ. 32-33.

Կենսագրական մի ավելի ընդարձակ բառարանի հեղինակ է Աբու ալ-Խայր Մուհամմադ իբն Ռահման ալ-Սախավին (մահ. 1497 թ.): Կրոնական գործիչների ու մտավորականների (*‘ulāmā’*) հայտնի ընտանիքից լինելով՝ ալ-Սախավին ստացել է դասական կրոնական կրթություն²⁷¹: Նա շարունակել է ուսումնասիրել իսլամական գիտություններ՝ հատկապես հադիսագիտություն, երբ աշակերտել է Իբն Հաջար ալ-Ասկալանիին: Հետևաբար, բնական է, որ նրա թողած մատենագրական ժառանգության մի մասը կրոնական թեմաներով են: Իսկ նրա պատմագրական երկերից արժանահիշատակ է *Al-Tibr al-masbūk fi ḍayl al-Sulūk*-ը («Ձուլածո ոսկի որպես *Al-Sulūk*-ի շարունակություն»), որն ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk*-ի շարունակությունն է և ավարտվում է հիջրայի 857 թվականի (1453 թ.) իրադարձություններով²⁷²: Մատենագիրը մի շարունակություն էլ գրել է ալ-Չահաբիի *Tārīḥ duwal al-Islām* երկի համար²⁷³:

Ալ-Սախավիի հեղինակությունը կապված է երկու այլ աշխատությունների հետ՝ *Al-Ḍaw’ al-lāmi’ li-ahl al-qarn al-tāsi’* («Պայծառ լույս Թ դարի մարդկանց համար») ²⁷⁴ և *Al-I’lān bi-tawbīḥ li-man ḍamma ahl al-tārīḥ* («Պատմագիրներին նախատողների հրապարակային քննադատություն») ²⁷⁵ վերնագրերով: Նրանցից առաջինն ընդարձակ կենսագրական բառարան է՝ հիջրայի Թ դարի (ԺԵ դար) երևելիների ավելի քան 12.000

²⁷¹ Հեղինակի մասին կենսագրական տեղեկությունների համար տե՛ս Անդ. Տ. 39-43; **C.F. Petry**, “*Al-Sakhāwī*”, in *IEP*, vol. 8, pp. 881-882, ինչպես նաև **D. Little**, “*Historiography*”, p. 443: Հմմտ. **S. Massoud**, *The chronicles*, p. 65:

²⁷² **Al-Sakhāwī**, *Kitāb al-Tibr al-masbūk fi ḍayl al-Sulūk*, bi-murāḡa’at Sa’īd ‘Abd al-Fattāḥ ‘Āṣūr, 4 ց., Dār al-kutub wa-l-waṭā’iq al-qawmiyya, al-Qāhira, 2002-2007.

²⁷³ **M.M. Ziyāda**, *Al-Mu’arrifūn*, Տ. 43-44. Այն սկսվում է 1345 թ. և ավարտվում 1493 թ. իրադարձությունների շարադրանքով: Տե՛ս **al-Sakhāwī**, *Waḡīz al-kalām fi al-ḍayl ‘alā Duwal al-Islām*, bi-tahqīq Baṣṣār ‘Awwād Ma’rūf, Mu’assasat al-Risāla, Bayrūt, 1995.

²⁷⁴ Տարօրինակ է, որ հեղինակը նաև իր կենսագրությունն է ներառել բառարանում: Հատկանշական է նաև, որ բառարանի վերջին գլուխը նվիրված է մուսուլման երեկի կանանց կենսագրություններին (*Kitāb mu’jam al-nisā’*):

²⁷⁵ Անգլերեն քաղվածությունը տե՛ս **F. Rosenthal**, *A history*, pp. 262-529: Ֆ. Ռոզենտալի այս ուսումնասիրության արաբերեն քաղվածությունը և երկի բնագրի հրատարակությունը տե՛ս **al-Sakhāwī**, *Al-I’lān bi-tawbīḥ li-man ḍamma ahl tārīḥ*, tarḡamat Ṣāliḥ Aḥmad ‘Alī, Mu’assasat al-Risāla, Bayrūt, 1986:

կենսագրական հոգվածներով: Երկրորդը պատմությունյան յուրատեսակ «ներածություն» է, որում հեղինակը քննական հայացք է գցել «պատմագիտությանը»՝ որպես կրոնական գիտություններին օժանդակ գիտակարգի: Երկում ալ-Սախավին փորձել է սահմանել *tārīḥ*-ի առարկան, մատնանշել նրա օգտակարությունը, մատնանշել պատմագիրներին անհրաժեշտ որակները, նրանց նպատակները և այլն: Նա այնուհետև քննական հայացք է գցում իրենից առաջ ապրած և իր ժամանակակից պատմիչների պատմագրական երկերին, նրանց որդեգրած պատմագրական մեթոդներին՝ չխորշելով սուր քննադատություններից, որոնց հաճախակիությունը ստիպում է զգուշությամբ մոտենալ դրանց²⁷⁶:

Ալ-Սախավիի կրտսեր ժամանակակիցն ու նրա ակադեմիական մրցակիցը՝ մասնավորապես հադիսագիտության բնագավառում, Ջալալ ալ-Դին ալ-Սուլուտին (մահ. 1505 թ.) էր: Հարյուրավոր բազմաթանր (կրոնաիրավագիտություն, հադիսագիտություն, թաֆսիր (Ղուրանի մեկնություն), լեզվաբանություն, աշխարհագրություն, պատմություն և այլն) երկերի հեղինակ ալ-Սուլուտին հաճախ համարում են ամենաբեղմնավոր ստեղծագործական ժառանգություն թողած մուսուլման հեղինակ²⁷⁷: Նրա պատմագրական բնույթի երկերից են *Tārīḥ al-ḥulafāʾ*-ը («Խալիֆաների պատմություն»)՝²⁷⁸ և *Husn al-muḥāḍara fī tārīḥ Miṣr wa-l-Qāhira*-ն («Պատշան դասախոսություն Եգիպտոսի և Կահիրեի պատմության վերաբերյալ»)՝²⁷⁹: Սրանցից առաջինն Օմայյան և

²⁷⁶ C.F. Petry, “Al-Sakhāwī”, p. 882:

²⁷⁷ Տե՛ս E. Geoffroy, “Al-Suyūṭī”, in *EP*², vol. 9, p. 913 և M.J. Saleh, “Al-Suyūṭī and his works: their place in islamic scholarship from Mamluk times to the present”, *MSR*, vol. 5, 2001, p. 73: Կենսագրական տեղեկությունների համար այս երկու հոդվածներից բացի տե՛ս նաև M.M. Ziyāda, *Al-Muʿarriḥūn*, §. 56-60:

²⁷⁸ Արաբական մի հրատարակություն տե՛ս վերևում՝ ծնթգր. 57: Անգլերեն թարգմանությունը տե՛ս *History of the caliphs by Jalalu'ddin a's-Suyūṭī*, translated from the original Arabic by Major H. S. Jarrett, J. W. Thomas, Baptist Mission Press, Calcutta, 1881:

²⁷⁹ Տե՛ս **Տույճի**՝ *Husn al muḥāḍara fī tārīḥ Miṣr wa-l-Qāhira*, bi-taḥqīq Muḥammad Abū al-Faḍl Ibrāhīm, 2 ց., Dār al-iḥyāʾ al-kutub al-ʿarabiyya, al-Qāhira, 1968: Տե՛ս նաև **Н.Ю. Крачковский**, *Избранные сочинения*, т. 4, стр. 483-484:

Աբբասյան խալիֆաների պատմությունն է, երկրորդը՝ Եգիպտոսի մասին պատմական, տեղագրական-աշխարհագրական տեղեկությունների, զանազան այլ փաստերի ժողովածու:

Մամլուքյան պատմագրության վերջին խոշոր դեմքն ալ-Սուլյուստիի աշակերտ Մուհամմադ իբն Ահմադ իբն Իյասն է (մահ. 1524 թ.), ով ականատես է եղել Սուլթանության մայրամուտին ու կործանմանը և Ասորիքում ու Եգիպտոսում օսման թուրքերի տիրապետության հաստատմանը: Ինչպես Իբն Թադրի Բիրդին, նա նույնպես մամլուք էմիրի որդի էր: *Awlād al-nās* սոցիալական խավի ներկայացուցիչ լինելով՝ Իբն Իյասը բավական ապահովված էր, ինչը նրան հնարավորություն էր տալիս ամբողջությամբ նվիրվել պատմագրությանը: Հայտնի մամլուքի որդի լինելով՝ Իբն Իյասը որոշակի հեղինակություն էր վայելում կառավարող վերնախավի շրջանում, ինչը նրան հնարավորություն էր տալիս ազատ մուտք ունենալ Սուլթանության արքունիք²⁸⁰: Նրա պատմությունը՝ *Badā'ī al-zuhūr fī waqā'i al-duhūr* վերնագրով («Եգալիի ծաղիկներ դարերի իրադարձությունների մասին») ²⁸¹, անփոխարինելի աղբյուր է Մամլուքյան դինաստիայի վերջին տարիների պատմության համար: Դրան հակառակ՝ Սուլթանության առաջին դարի պատմության համար Իբն Իյասի երկը ոչ այնքան վստահելի աղբյուր է: Նորթրափն ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ երկում չատ են (գոնե Կալավունի կառավարման շրջանի կարևորագույն իրադարձությունների հետ կապված) ժամանակագրական չփոթներն ու անճշտությունները²⁸²: *Badā'ī al-zuhūr*-ը գերազանցապես հյուսված է նախորդ սերնդի պատմիչների երկերի՝ մասնավորապես ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk*-ի վրա, ինչպես վերջերս եզրակացրել է Սամի Մասսուդը²⁸³:

²⁸⁰ Հեղինակի մասին կենսագրական մանրամասն տեղեկությունների համար տե՛ս **M.M. Ziyāda**, *Al-Mu'arrihūn*, §. 46-55 և **W.M. Brinner**, “Ibn Iyās”, in *IEP*, vol. 3, pp. 812-813, ինչպես նաև **D. Little**, “Historiography”, pp. 440-441:

²⁸¹ **Ibn Iyās**, *Badā'ī al-zuhūr fī waqā'i al-duhūr*, §. 1.1, bi-tahqīq Muḥammad Muṣṭafā, Dār ihyā' al-kutub al-'arabiyya, al-Qāhira, 1975.

²⁸² **L. Northrup**, *From slave to sultan*, pp. 54-55. Նրանից առաջ նույնպիսի եզրակացության է հանգել նաև Լիթլը: Տե՛ս **D. Little**, *An Introduction*, p. 94:

²⁸³ **S. Massoud**, *The Chronicles*, p. 70.

Իբն Իյասուվ փակվում է մամլուքյան պատմագրական հարուստ գրականությունից դարաշրջանը և ընդհանրապես «մեծ ժամանակագրություններ» ավանդույթը միջնադարյան արաբական պատմագրության մեջ, որ պիտի վերածնվեր միայն ԺԸ դարում՝ հանձին ալ-Ջաբարիթի (մահ. 1825 թ.)²⁸⁴։ Հարկ է նշել, որ մամլուքյան պատմագրական գրականությունն այս ներածական ակնարկում ներկայացված հեղինակներով և երկերով բնավ չի սահմանափակվում։ Դեռ մոտ մեկ տասնյակի հասնող եգիպտացի և ասորիքցի պատմիչներ էլ կան, որոնք Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար ինչ-որ արժեք են ներկայացնում, բայց այստեղ առանձին անդրադարձի չեն ենթարկվել։ Դա չի խանգարելու մեզ այս և հետագա հետազոտություններում օգտագործել դրանց բովանդակած տեղեկությունները։

Ըստ այդմ, հարկ է արձանագրել, որ արաբամուսուլմանական պատմագրության մամլուքյան շրջանը հարուստ է այն աստիճան, որ գուցե արդի հետազոտողների տասնամյակների աշխատանքն ու ջանքերն անբավարար լինեն այդ ժառանգության համապարփակ և բազմակողմանի ուսումնասիրության համար։ Բավական է նշել, որ մամլուքյան պատմագրության շատ սկզբնաղբյուրներ ցայժմ կարոտ են հրատարակության և հետազոտության։ Բայց և այնպես, այս համառոտ ակնարկում նկարագրված պատմագրական երկերը, որոնց ճնշող մեծամասնությունը կարող է օգտակար լինել Կիլիկյան Հայաստանի պատմության շատուշատ էջերում լրացումներ ու ճշտումներ կատարելու համար, առավել քան բավական են ավանդույթի հիմնարար սկզբունքները, զարգացման հիմնական ուղղությունները, ժանրային ու ձևաբովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև սույն աշխատանքի հետագա շարադրանքի տրամաբանությունը հասկանալու համար։ Այժմ փորձենք սահմանել Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի և նրա ժամանակագրությունների տեղն այս ավանդույթում։

²⁸⁴ Նույն տեղում։

1.2 ԻՔՆ ԱԲԴ ԱԼ-ՋԱՀԻՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մամլուքյան պատմագրական ավանդույթի հիմնադիրներից մեկը՝ արքունական քարտուղար-գրագիր, կենսագիր, պատմիչ, բանաստեղծ Կադի Մունի ալ-Դիմ Աբու ալ-Ֆադլ Աբդ Ալլահ [ի]բն Ռաշիդ ալ-Դիմ Աբու Մունամմադ Աբդ ալ-Ջահիր [ի]բն Նաշվան [ի]բն Աբդ ալ-Ջահիր [ի]բն Նաշդա ալ-Սաադի ալ-Ռաունի ալ-Միսրին²⁸⁵, ծնվել է Կահիրեում հիջրայի 620 թ. Մուհարրամ ամսի իննին (1223 թ. փետրվարի 12): Միջնադարյան կենսագրական բառարանները նրա կյանքի մասին շատ մանրամասներ չեն հաղորդում²⁸⁶: Ծնվել է կադիի ընտանիքում, հետևաբար և ստացել է ավանդական կրոնաիրավագիտական կրթություն, մինչև որ ծառայություն է անցել արքունական դիվանատանը (dīwān al-inšā'): Ալ-Քուլթուբին իր Fawāt al-Wafāyāt կենսագրական բառարանում հաղորդում է, որ նա աշակերտել է Ջաաֆար ալ-Համադանին, Աբդ Ալլահ [ի]բն Իսմաիլ [ի]բն Ռամադանին, Յուսուֆ Իբն Մուխայյալին և այլոց: Իսկ նրա աշակերտներից են եղել ալ-Բիրզալին, Իբն Սայյիդ ալ-Նասսր, Ասիր ալ-Դինը և այլոք²⁸⁷: Սուլթան Բայբարսին նվիրված

²⁸⁵ Մունի ալ-Դիմի կյանքի ու մատենագրական ժառանգության մասին տե՛ս նաև **P. Casanova**, “L’Historien Ibn ‘Abd Adh-Dhāhir”, *Mémoires publiés par les membres de la mission archéologique française au Caire VI*, 1893, p. 493-505; **Abdul-Aziz Khawaiter**, *Baibars the First: His Endeavours and Achievements*, The Green Mountain Press, London, 1978, pp. 144-166; **J. Pedersen**, “Ibn ‘Abd al-Zāhir”, in *IE²*, vol. 3, pp. 679-680; **L. Northrup**, *From slave to sultan*, pp. 25-28; **F. Bauden**, “Ibn ‘Abd al-Zāhir, Mūhyī l-Dīn”, in *IE³*, pp. 125-128; **Ḥusayn ‘Āṣī**, *Muḥī al-Dīn [i]bn ‘Abd al-Zāhir, ‘aṣruhu wa-turāṭuhu al-tārīḫī*, Dār al-kutub al-‘ilmiyya, Bayrūt, 1993, ինչպես նաև նրա երկու ժամանակագրությունների խմբագիրներ Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայթիի և Մուրադ ալ-Քամիլի ներածական առաջաբանները (հիշյալ հրատարակությունների ծանոթագրությունները տե՛ս ստորև):

²⁸⁶ Նրա մասին առավել ծավալուն կենսագրական հոդվածները գրել են ալ-Սուլային, ալ-Ջազարին, ալ-Բիրզալին, ալ-Ջահիրին, ալ-Սաֆադին, ալ-Քուրբուբին, Իբն Հաֆիթը և այլոք: Տե՛ս **Ibn al-Suqāṭī**, *Tālī kitāb wafāyāt al-a’yān (Ibn al-Suqāṭī, édition et traduction par Jacqueline Sublet, Damascus, 1974)*, §. 118-121; **Al-Ġazarī**, *Ḥawādīṭ al-zamān*, §. 1, §. 175-183; **al-Birzālī**, *Al-Muqtaṭī*, §. 2, §. 329; **Al-Dahabī**, *Tārīḫ al-islām*, §. 52, §. 155-156; **Al-Şafadī**, *Al-Wāfi*, §. 17, §. 135-155; **Al-Kutubī**, *Fawāt al-Wafayāt*, §. 2, §. 179-191; **Ibn Ḥabīb**, *Tadkirat al-nabīh*, §. 1, §. 164; **al-Maqrīzī**, *Al-Muqqaṭā al-kabīr*, §. 4, §. 579-581; **al-‘Aynī**, *‘Iqd al-ġumān*, §. 3, §. 196-198:

²⁸⁷ **Al-Kutubī**, *Fawāt al-Wafayāt*, §. 2, §. 179 և **al-Şafadī**, *Al-Wāfi*, §. 17, §. 135.

կենսագրական երկում իր մասին թողած կենսագրական մի տեղեկություններից պարզ է դառնում, որ նա ալ-Մալիք ալ-Մուզաֆֆար Սայֆ ալ-Դին Կուտուբի (1259-1260 թթ.) սուլթանությունից օրոք արդեն իսկ ղրկված Կառաթի ծառայող է եղել և ուղեկցել է վերջինիս Հուլադու խանի 1260 թ. ասորիքյան արշավանքի ժամանակ: Մուհի ալ-Դինն այնուհետ վայելել է նաև Բայբարս ալ-Բուռդուկարի (կառ. 1260-1277 թթ.) սուլթանի բարեհաճությունն ու համակրանքը, ինչն ապահովել է նրա հետագա գործունեության հաջողությունը: Արքունի գրագրի աշխատանքի բնույթով պայմանավորված՝ Իբն Աբդ ալ-Ջահիրի և սուլթան Բայբարսի միջև ձևավորվել են անձնական մտերմիկ հարաբերություններ, և ժամանակի ընթացքում սուլթանն սկսել է ավելի ու ավելի մեծ կարևորության փաստաթղթեր ու գործեր վստահել իր քարտուղարին: Օրինակ, 1267 թ. հենց Իբն Աբդ ալ-Ջահիրի և մի մամլուք էմիրի գլխավորությամբ է ղեկավարված հեռավորագրություն ուղարկվել Աբրա՝ խաչակիրների և մամլուքների միջև կնքված հաշտության պայմանագրի վրա Աբրաջի տիրոջ երդումն ապահովելու համար²⁸⁸: 1271 թ., երբ սուլթան Բայբարսը գրավել է Տևտոնյան օրդենին պատկանող ալ-Կուրայն (Մոնտֆորտ) ամրոցը, Իբն Աբդ ալ-Ջահիրն է ուղարկվել այս առման ավետիսը Համայնի տիրոջ հայտնելու²⁸⁹: Սուլթան Կալավունը մի անգամ, երբ Ասորիք է մեկնել՝ իր որդի ալ-Մալիք ալ-Սալիհին որպես փոխարքա թողնելով Եգիպտոսում, կարգադրել է Մուհի ալ-Դինին Կահիրեում մնալ, որպեսզի «փոստը կարգա նրա համար և գործերը կատարի»²⁹⁰:

Նույնօրինակ ջերմ էին Իբն Աբդ ալ-Ջահիրի հարաբերությունները նաև Բայբարսի հաջորդների՝ մասնավորապես ալ-Մանսուր Կալավունի (կառ. 1279-1290 թթ.) և ալ-Աշրաֆ Նալիլի (կառ. 1290-1293 թթ.) հետ: Կառավարող վերնախավի հետ ունեցած անձնական մտերմություններ Իբն Աբդ ալ-Ջահիրի համար ապահովել է մեծ հարգանք ու հեղինակություն ժամանակակիցների շրջանում: Ալ-Ջադարին իր կենսագրական բառարանում նրա վերաբերյալ այսպես է արտահայտվում.

²⁸⁸ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, ց. 571.

²⁸⁹ Ibn ‘Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir, ց. 386.

²⁹⁰ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.1, ց. 684.

«Ժողովրդի մեծամեծերից և ամենաարժանավորներից մեկն էր, գրաստություն տեր, «տոհմային համերաշխության» (բնագրում՝ *min ahl al-‘aṣabiyyāt*²⁹¹) մարդկանցից մեկը, մարդկանց նկատմամբ շատ բարեսիրտ՝ իր տեսակով միակն իր ժամանակում»²⁹²: Ալ-Մուլուտին նրան բնութագրել է «որպես ամենախելացի մարդկանցից մեկը՝ հմուտ ինչպես արձակում, այնպես էլ ֆնարերգության մեջ»²⁹³: Իսկ ալ-Սաֆադին իր կենսագրական բառարանում նրան անվանել է «նամակագրության մարդկանց շեյխ» (*ṣayḥ ahl al-tarassul*)²⁹⁴:

Ալ-Կալիլաշանդին նրա գերդաստանի մասին գրում է, թե «ուղղախոսության և նարտասանության ուսնվիրանների ընտանիք» էր, չնայած հանուն ճշմարտության հարկ է համարում նաև նշել նրա՝ գլխավոր դիվանապետ եղած ժամանակ սուլթանական նոտարատներից դուրս եկած որոշ փաստաթղթերի ցածր մակարդակի մասին²⁹⁵: Հատկանշական է, որ Մուհհի ալ-Դինի բանաստեղծական ձիրքի մասին ժամանակակիցների հիացական վկայությունները հիմնականում չափազանցված են և պայմանավորված են նրա անձի նկատմամբ ժամանակակիցների տածած խորը հարգանքով: Օրինակ, Բայբարս ալ-Մանսուրի պատմիչն այս առիթով գրել է. «Նա հեղինակել է հրաշալի նամակներ և նրբագեղ բանաստեղծություններ, ինչպես նաև «Ջահիրի վարբը», որում ստեղծել է արձակի և չափածոյի հիանալի համադրություն»²⁹⁶: Բայբարսին և ալ-Մանսուր Կալավուտին նվիրված նրա կենսագրական երկերն իսկապես հարուստ են կասիդաներով, որոնք, այնուամենայնիվ, ինչպես նրա երկի հրատարակիչ Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայստիրն է նկատել, բարձր մակարդակի չեն համարի, իսկ Մուհհի ալ-Դինին ոչ մի կերպ չեն դասի ժամանակաշրջանի երեւելի բանաստեղծների շարքին²⁹⁷:

²⁹¹ Ta‘aṣṣub կամ ‘aṣabiyya նշանակում է անսահման սեր յուրայինի, տոհմի, զարմի նկատմամբ՝ հայրենասիրություն՝ տողորված միասնության և միասնականության գաղափարով:

²⁹² Al-Ġazarī, *Ḥawādith al-zamān*, ց. 1, ք. 175.

²⁹³ Al-Suyūṭī, *Ḥusn al-muḥādara*, ց. 1, ք. 570.

²⁹⁴ Al-Ṣafadī, *Al-Wāfi*, ց. 17, ք. 135.

²⁹⁵ Al-Qalqaṣandī, *Ṣubḥ al-a‘šā*, ց. 14, ք. 70.

²⁹⁶ Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra*, ք. 294.

²⁹⁷ Ibn ‘Abd al-Zāhir, *Al-Rawḍ al-zāhir*, ք. 11-12.

Շաֆի իբն Ալիին վկայում է, որ իր մորեղբայրը խնդիրներ է ունեցել տեսողություն հետ, և երբեմն, երբ անբավարար լուսավորություն է եղել, նրա փոխարեն ինքն է կարդացել որոշ փաստաթղթեր²⁹⁸: Դեռ Բայբարսի օրոք սուլթանական դիվանատան ծառայող է եղել է նաև Մուհի ալ-Դինի որդին՝ Ֆաթհ ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրը, ով հոր կենդանության օրոք մեծ հարգ ու ճանաչում է ձեռք բերել և հավանաբար փոխարինելով հորը՝ դարձել է սուլթան ալ-Մանսուր Կալավուների արքունի դպրապետը: Հատկանշական է, որ հենց Ֆաթհ ալ-Դինից սկսած ալ-Մանսուր Կալավուների որոշմամբ դիվանապետի *ṣāhib dīwān al-inṣāʾ*-ի պաշտոնը վերանվանվել է *kātib al-sirr*-ի (բառացի՝ «գաղտնիի դպիր»): Վերջինս այդուհետ համարվում էր սուլթանի անձնական քարտուղարը՝ ունենալով սուլթանին վերաբերող անձնական տեղեկատվության հետ առնչվելու պաշտոնական ավելի մեծ լիազորություններ: Ֆաթհ ալ-Դինը մահացել է հոր մահվանից մեկ տարի առաջ՝ 1292 թ.²⁹⁹:

Սուլթանական դիվանատան ծառայող, պատմիչ և բանաստեղծ է եղել նաև Ֆաթհ ալ-Դինի որդին և Մուհի ալ-Դին թոռը՝ Ալա ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրը (մահ. 1317 թ.): Նրա անունով մեզ է հասել մամլուքների և Ղազան խանի (և նրա հետ դաշնակցած ուժերի) բանականների միջև 1303 թ. տեղի ունեցած Մարջ ալ-Սաֆֆարի կամ Շակհարի հայտնի ճակատամարտի մասին պատմող մի փոքրածավալ ժամանակագրություն՝ *Al-Rawḍ al-zāhir fī ġazwat al-Malik al-Nāṣir* («Ծաղկուն պարտեզ ալ-Մալիֆ ալ-Նասիրի արշավանքի մասին») վերնագրով: Երկը Բեռլինի պետական գրադարանի արաբական ֆոնդում պահպանված գրչագրից (3623 համարի ներքո) հրատարակել է Ումար Աբդ ալ-Սալամ Թադ-մուրին 2005 թ.³⁰⁰:

²⁹⁸ *Šāfiʿ ibn ʿAlī*, *Ḥuṣn al-manāqib*, ʃ. 326, ինչպես նաև A.-A. Khowaiter, *Baibars the First*, p. 145.

²⁹⁹ J. Pedersen, “Ibn ʿAbd al-Zāhir”, p. 680.

³⁰⁰ *ʿAlāʾ al-Dīn ʿAlī Ibn ʿAbd Allāh ibn Abd al-Zāhir*, *Al-Rawḍ al-zāhir fī ġazwat al-Malik al-Nāṣir wa-bi-daylihi al-Manāqib al-Muzaḥaffariyya, bi-taḥqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmurī*, *Al-Maktaba al-ʿAšriyya, Ṣaydā-Bayrūt*, 2005: Ըստ հրատարակչի՝ սա երկի միակ պահպանված ձեռագիրն է: Մինչև մեզ հայտնի է, որ այս երկի մի գրչագիր էլ կա Սանկտ Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի արաբական ձեռագրաֆոնդում՝ B. 623 (532)/9643 համարի ներքո: Նկարագրությունը տե՛ս А.И. Михайлова, *Каталог арабских рукописей Института народов Азии и Африки*, Выпуск 3, История, изд. Наука, Москва, 1965, стр. 59-60:

Ալ-Մակրիզիի՝ Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը նվիրված երկից՝ «Ալ-Խիտատ»-ից իմանում ենք, որ քաղաքի փողոցներից մեկը, որտեղ Մուհի ալ-Դինի տունն էր գտնվում, կոչվել է նրա անունով. «Իբն Աբդ ալ-Ձահիրի փողոցը: Այս փողոցը գտնվում է Ֆունդուկ ալ-Ձահարի («Ոսկու հյուրատուն») հարևանությամբ ալ-Ձարաֆիշա ալ-Աթիկա («Ասեղնագործների փողոց») թաղամասում և նրա շարժում: Այն պատկանում էր «Գիտության տանը», որը վերաշինվել է Ալ-Ամիրի խալիֆայության և ալ-Մամուն Բատահիի վեզիրության օրոք: [Բայց] երբ պետությունն ընկավ, բնակեցվեց: Այնտեղ էր բնակվում ալ-Կադի Մունի ալ-Դին իբն Աբդ ալ-Ձահիր իբն Նաշվան ալ-Սաադի գրիչը, գրագիրը, իմամը, [եհեկի] գիտնականը, հեղինակը Rawḍa al-bahiyya al-zāhira fi ḥiṭaṭ al-Mu'izziyya al-Qāhira գրի, որից այս գրքում մեջբերումներ են արվել: Նա մահացել է 691 թվականին, և փողոցը նրա անունով է կոչվել»³⁰¹:

Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ձահիրը վախճանվել է Հիջրայի 692 թ. Ռաջաբ ամսի 3-ին (1293 թ. Հունիսի 9) և թաղվել Կահիրեի ալ-Մուկատտամ բլրին եղած ալ-Կարաֆա գերեզմանատանը՝ որդու՝ Ֆաթհ ալ-Դինի կողմից իր համար կառուցված մզկիթին հարող դամբարանում³⁰²:

Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ձահիրը, ով, ինչպես ասացինք, տեական ժամանակ զբաղեցրել է մամլուքյան արքունի ղեկնառան գլխավոր գրագրի կամ քարտուղարի պաշտոնը, հեղինակ է մամլուքյան երեք սուլթանների՝ Բայբարսի, Կալավունի և ալ-Աշրաֆ Նալիլի վարչագրությունների (համապատասխանաբար՝ Al-Rawḍ al-zāhir fi sirat al-Malik al-Zāhir- «Ծաղկուն պարտեզ ալ-Մալիկ ալ-Ձահիրի կյանքի մասին», Taṣrif al-ayyām wa-l-‘uṣūr fi sirat al-Malik al-Manṣūr - «[Գիրք] ալ-Մալիկ ալ-Մանսուրի կյանքի փառավոր օրերի և ժամանակաշրջանի մասին» և Al-Alṭāf al-Ḥafīyya min al-sīra al-ṣarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Aṣrafiyya - «[Գիրք] սուլթան ալ-Մալիկ ալ-Աշրաֆի ազնվագարմ կյանքի թափնված բարեհանությունների մասին», որն անավարտ է մնացել): Ծանոթ լինելով սուլթաններին, շատ հաճախ իրադարձությունների ակնատեսն ու

³⁰¹ Al-Maqrīzī, Al-Ḥiṭat, ց. 3, ց. 119-120.

³⁰² Տե՛ս Անդ. ց. 4, ց. 135:

անմիջական մասնակիցը լինելով, ձեռքի տակ ունենալով արքունական դիվանատան վավերագրական հարուստ արխիվները (փաստաթղթեր, պայմանագրերի տեքստեր)՝ Իբն Աբդ ալ-Ջահիրն իր այս երկերում անգնահատելի կարևորություն և մյուս պատմագիրների մոտ չհանդիպող մանրամասներ է պահպանել իր ժամանակի անցքերի՝ այդ թվում հայ-մամլուքյան հարաբերությունների մասին³⁰³:

Այս երեք երկերից առաջինը՝ Al-Rawḍ al-zāhir-ը, մեզ է հասել երկու ձեռագրով, որոնցից մեկը գտնվում է Ստամբուլի Սուլեյմանիյե գրադարանում (MS Fatih 4366), մյուսը՝ Լոնդոնի Բրիտանական թանգարանում (MS Add. 23331): Այս վերջին ձեռագիրը, որ խիստ թերի է և կիսատ, խմբագրել, հրատարակել և անգլերեն է թարգմանել Սայյիդ Ֆաթիմա Սադեկը: Այն հրատարակվել է 1956 թ. Պակիստանում³⁰⁴: Ցավոք, այս հրատարակությունը ձեռքի տակ չենք ունեցել: Չորս տարի անց՝ 1960 թ., Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայտիրը «Արևելյան և արևմտյան հետազոտությունների դպրոց» համալսարանում (S.O.A.S. University of London) իր թեկնածուական ատենախոսությամբ երկու ձեռագրերի հիման վրա իրականացրել է երկի քննական խմբագրությունը՝ անգլերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով³⁰⁵: Չնայած սույն ատենախոսության մեջ առկա թարգմանական բազմաթիվ սխալներին՝ այն շատ դեպքերում օգնել է մեզ և ուղղորդել բարդ ու խրթին հատվածները հասկանալու առումով: Ուստի երկից հայերի և Կիլիկյան Հայաստանին վերաբերող քաղվածքներն արաբերեն բնօրինակից թարգմանելիս հիշյալ ատենախոսությունը մշտապես սեղանին ենք ունեցել, անճշտություններ նկատելիս՝ ուղղել:

³⁰³ D. Little, “Historiography”, pp. 421-422; L. Northrup, *From slave to sultan*, pp. 25-28; R. Irwin, “Mamluk history and historians”, in *Arabic literature in the post-classical period*, ed. by R. Allen and D.S. Richards, Cambridge University Press, Cambridge, 2006, pp. 162-163: Այս երկերի մասին տե՛ս նաև G. Van Den Bossche, *The Past, Panegyric, and the Performance*, pp. 128-133, 159-164, 172-179:

³⁰⁴ S. Fatima Sadeque, *Baybars I of Egypt*, Oxford University Press, Dacca, 1956.

³⁰⁵ Abdul Aziz al-Khowayter, *A Critical Edition of an Unknown Source for the Life of al-Malik al-Zāhir Baibars*, with introduction, translation, and notes, 3 volumes, University of London, S.O.A.S., 1960 (unpublished Ph.D. thesis).

Թեկնածուականի պաշտպանությունից հետո Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայտիրը ձեռնամուխ է եղել երկի բնագրի հրատարակությունը, որն իրականություն է դարձել միայն 16 տարի անց՝ 1976 թ. ալ-Ռի-յադում³⁰⁶։ Բայբարսի վարքագրությունը քաղվածական թարգմանություն համար օգտագործել ենք հենց այս հրատարակությունը։

1992 թ. հրատարակվել է Ժակլին Սուբլեի «Սուլթան Բայբարսի երեք վարքեր» գիրքը³⁰⁷։ Նրանում հեղինակը ֆրանսերեն է թարգմանել Al-Rawḍ al-zāhir-ի՝ ալ-Խուվայտիրի հրատարակությունից մի փոքր հատված (էջ 45-68)։ Գրքի երկրորդ՝ հիմնական մասում, Սուբլեն թարգմանաբար ներկայացրել է Բայբարսի կառավարման շրջանի վերաբերյալ ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk-ում առկա պատումը (հիմնված Մ. Կատրմերի 1837 թ. թարգմանության վրա)։ Երրորդ մասում հատվածներ են քաղվել սուլթանի մասին հյուսված «Բայբարսի վարք» միջնադարյան հերոսական էպոսի՝ Զ. Բոհասի և Ժ.-Պ. Գիյոմի կատարած ֆրանսերեն թարգմանությունից։ Սուբլեի գիրքը հարուստ է Բայբարսի կյանքի ու գործունեության ժամանակաշրջանը ներկայացնող գունագեղ մանրանկարների վերարտադրություններով, հուշարձանների և ժամանակի արվեստի նմուշների լուսանկարներով։ Ծիշտ է՝ գրքի արվեստագիտական և հրատարակչական արժեքը բարձր մակարդակի վրա է, բայց այն թեմայի վերաբերյալ գիտական հետազոտություն հեն համարի³⁰⁸։

³⁰⁶ Վերևում այս հրատարակությունն արդեն ծանոթագրել ենք։ Տե՛ս ծնթգր. 49։

³⁰⁷ *Les trois vies de Sultan Baibars: choix de textes et presentation de Jacqueline Sublet*, Imprimerie Nationale, Paris, 1992.

³⁰⁸ Տե՛ս գրախոսների կարծիքները գրքի վերաբերյալ. D.E. Streusand, “The Lion of Egypt: Sultan Baybars I and the Near East in the Thirteenth Century, by Peter Thorau. Translated by P.M. Holt, 321 pages, tables, maps, bibliography, index. London & New York: Longman Group UK, 1992 & Les trois vies du sultan Baibars, by Jacqueline Sublet. Preface by André Miquel. 240 pages, illustrations, chronology, bibliography, indices. Paris: Imprimerie nationale Éditions, 1992” (review), *RoMES*, vol. 27, issue 2, 1993, pp. 260-261; C. Petry, “Jacqueline Sublet, *Les trois vies du sultan Baibars*, Imprimerie nationale Éditions, 1992, pp. 256, maps, chronology, bibliography, glossary-index” (review), *JESHO*, vol. 38, 1995, pp. 104-105 և հատկապես՝ R. Irwin, *Les Trois Vies du Sultan Baibars: Choix de textes et présentation* by Jacqueline Sublet, introduction by André Miquel, Paris: Imprimerie nationale Éditions, 1992 (review), *JAOS*, vol. 114 (1), 1994, pp. 104-106:

Սուլթան ալ-Մանսուր Կալավունին նվիրված երկը՝ *Tašrif al-ayyām*-ը, մեզ է հասել ընդամենը մեկ թերի ձեռագրով, որը գտնվում է Փարիզում՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում (*MS Arabe 1704*): Ձեռագիրն ընդգրկում է երկի 2-րդ և 3-րդ մասերը, որ պարփակում են 1281-1290 թթ. իրադարձությունները: Ժամանակագրությունը հրատարակվել է Մուրադ Քամիլի խմբագրությամբ 1961 թ. Կահիրեում³⁰⁹: Մեր քաղվածական թարգմանությունը հիմնված է երկի այս միակ հրատարակության վրա, բայց և ձեռքի տակ ունեցել ենք վերոհիշյալ ձեռագրի լուսապատճենը: Սա շատ դեպքերում հնարավորություն է տվել ստուգել Կիլիկյան Հայաստանին վերաբերող հատվածներում հրատարակչի որոշ ընթերցումների ստուգությունը, իսկ որոշ դեպքերում էլ՝ ճշտել տարընթերցումները:

Ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի վարքագրությունը՝ *Al-Altāf al-ḥafiyya*-ն, ավելի թերի է հասել մեզ: Միակ պահպանված ձեռագիրը, որ գտնվում է Մյունխենում՝ Բավարիայի ազգային գրադարանում (*Cod.Arab 405*), ընդգրկում է երկի չորս մասերից միայն մեկը, որը, ինչպես մի անգամ նշել ենք, պարփակում է ընդամենը հինգ ամսվա իրադարձությունների շարադրանք (1291-1292 թթ.): Երկի պահպանված տեքստը դեռ նախորդ դարի սկզբին հրատարակել է Կառլ Աքսել Մոբերգը՝ չվեդերեն թարգմանությամբ³¹⁰: Հրատարակիչը, սակայն, անտեսել է ձեռագրի վերջին կարևոր մասը, որը պարփակում է ալ-Աշրաֆ սուլթանի անունից գրված մի շարք արժեքավոր փաստաթղթեր (հրովարտականեր, կալվածագրեր և այլն): Այնուամենայնիվ, մեզ հիշյալ հրատարակությունից բացի հասանելի է եղել նաև երկի միակ պահպանված ձեռագրի լուսապատճենը, ուստի և հասու են եղել հրատարակության մեջ բացակայող այդ փաստաթղթերի ընդօրինակությունները³¹¹:

³⁰⁹ Ibn ‘Abd al-Zāhir, *Tašrif al-ayyām wa-l-‘uṣūr fī sīrat al-Malik al-Manṣūr, bi-taḥqīq Murād Kāmil, Muḥammad ‘Alī al-Nağğār, al-Qāhira*, 1961.

³¹⁰ Ibn ‘Abd al-Zāhir, *Al-Altāf al-Ḥafiyya min al-sīra al-šarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Ašrafīyya / Ur ‘Abd Allah b. ‘Abd ez-Zāhir’s biografi över Sultanen el-Melik al-Ašraf Ḥalīl*, hrsg. von Axel Moberg, Gleerupska Universitetsbokhandeln, Lund, 1902.

³¹¹ Բոլորովին վերջուս որպես *Routledge* հրատարակչության *Crusade Texts in Translation* շարքի ներքական հատոր լույս է տեսել Դեյվիդ Քուֆի հեղինակությամբ մի աշխատանք: Գրքում ներկայացված են Կալավուն և նրա որդի՝ ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանների կառավարման շրջաններում մամլոսփռանկյան հարաբերությունների վերաբերյալ փառվածական թարգմանություններ ժամանակի կարևորագույն աղբյուրներից՝ այդ թվում Իբն Արդ ալ-Ջահիթի *Tašrif*

Բացի այս երեք ժամանակագրական բնույթի վարքագրություններին Մուհի ալ-Դինը հեղինակ է նաև Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը նվիրված *Al-Rawḍa al-bahiyya al-zāhira fi ḥiṭaṭ al-Mu‘izziyya al-Qāhira* («Փայլուն ծաղկուն պարտեզ Մուիզզյան Կահիրեի քաղամասերի վերաբերյալ»), որը Բրիտանական թանգարանի թիվ MS Or. 13317 ձեռագրի հիման վրա հրատարակել է Այման Ֆուադ Սայ-յիդը 1996 թ. Կահիրեում³¹²:

Ինչպես արդեն նշել ենք, Իբն Աբդ ալ-Չահիրը նաև չափածո է գրել և իր պատմագրական երկերը հարստացրել է իր իսկ գրած կասիդաներով³¹³: Հատկանշական է, որ մասամբ պահպանված է նաև նրա բանաստեղծական ժողովածուն՝ դիվանը³¹⁴: Իբն Աբդ ալ-Չահիրը հեղինակ է նաև Եգիպտոսին, Նեղոսին և ալ-Ռաուդա կղզուն նվիրված մի մականայի³¹⁵, գեղագրությանը նվիրված մի երկի:

Իբն Աբդ ալ-Չահիրի գրչին է պատկանում նաև աղավնափոստին նվիրված մի երկ՝ *Tamā'im al-hamā'im* վերնագրով: Սրա բնօրինակը, ճիշտ է, մեզ չի հասել, բայց նրանից իրենց երկերի համար բազմաթիվ քաղվածքներ են կատարել ալ-Սաֆադին, ալ-Ումարին, Իբն ալ-Հիջլան (հատվածները մեջբերում է ալ-Սաֆադիի երկից), ալ-Մակրիզին, ալ-Կալկաշանդին³¹⁶:

Մուհի ալ-Դինի արձակի (հատկապես հանգավորված արձակի) և առհասարակ շարադրանքի ոճի համար տիպար են ծառայել Սալահ ալ-Դինի արքունի քարտուղար ալ-Կադի ալ-Ֆադիլի (մահ. 1200 թ.) երկերը: Ալ-Մակրիզին այս առիթով նրա մասին գրում է. «Կատարե-

al-ayyām և *Al-Altāf al-ḥafiyya* երկերից: Տե՛ս *Chronicles of Qalāwūn and his son al-Ashraf Khalīl*, tr. by **D. Cook**, Routledge, London and New York, 2020: Գ. Քուֆն իր քարգմանած ֆաղվածներում ներառել է նաև Կիլիկյան Հայաստանին վերաբերող մի քանի հատվածներ, որոնցում նկատել ենք մի շարք քարգմանական սխալներ: Դրանց մասին կխոսենք ներքևում համապատասխան տեղում:

³¹² **Ibn ‘Abd al-Zāhir**, *Al-Rawḍa al-bahiyya al-zāhira fi ḥiṭaṭ al-Mu‘izziyya al-Qāhira*, bi-taḥqīq Ayman Fu‘ād Sayyid, Maktabat Dār al-‘arabiyya li-l-kitāb, al-Qāhira, 1996.

³¹³ **Է. ‘Āṣī**, *Muḥī al-Dīn*, թ. 74-79.

³¹⁴ **Dīwān al-Qādī Muḥī al-Dīn ‘Abd Allāh ibn ‘Abd al-Ḍāhir**, al-Qāhira, 1990.

³¹⁵ **F. Bauden**, “Ibn ‘Abd al-Zāhir”, p. 127; **Է. ‘Āṣī**, *Muḥī al-Dīn*, թ. 86.

³¹⁶ **F. Bauden**, “Ibn ‘Abd al-Zāhir”, p. 127; **A.A. Khawaiter**, *Baibars the First*, p. 147; **J. Pedersen**, “Ibn ‘Abd al-Zāhir”, p. 679; **Է. ‘Āṣī**, *Muḥī al-Dīn*, թ. 87.

լուքյան է հասել արձակում և ալ-Կադի ալ-Ֆադիլ Աբդ ալ-Ռահիմի պես դարձել նամակագրության մարդկանց շեյխ»³¹⁷: Հատկանշական է, որ Իբն Աբդ ալ-Ջահիրի անունով մեզ է հասել նաև ալ-Կադի ալ-Ֆադիլի նամակների մի ժողովածու՝ Al-Durr al-nāẓim վերնագրով³¹⁸:

Սրանով ավարտենք մամլուքյան պատմագրությունն ու Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Ջահիրի մատենագրական ժառանգությունը նվիրված գլուխը: Ինչպես արդեն արձանագրել ենք Մուհի ալ-Դինի պատմագրական երկերը՝ վերոհիշյալ երեք վարքագրությունները, պարփակում են 1260-1292 թթ. քաղաքական անցուղարձերի նկարագրություններ: Դրանցից մենք ստորև քաղվածական թարգմանություն մը ներկայացնելու ենք Կիլիկյան Հայաստանին, և մասնավորապես նրա, Մոնղոլական իլխանության և Մամլուքյան սուլթանության քաղաքական հարաբերություններին վերաբերող մասերը: Հետևաբար այդ իրադարձությունների պատմական խորքը հասկանալու համար հարկ ենք համարում հաջորդ մասում ներկայացնել Կիլիկյան Հայաստանի և նրա երկու հզորագույն հարևանների՝ մամլուքների և մոնղոլների, քաղաքական հարաբերությունների սկզբնավորման պատմությունը, որոնց՝ տարածաշրջանի քաղաքական եղանակը պայմանավորող ներկայությունից էր մեծապես կախված Հայոց թագավորության հետագա կենսունակությունն ու գոյությունը:

³¹⁷ Al-Maqrīzī, Al-Muqqafā al-kabīr, ց. 4, ց. 580.

³¹⁸ Ibn ‘Abd al-Ẓāhir, Al-Durr al-nāẓim fī awṣāf al-Qādī al-Fāḍil ‘Abd al-Raḥīm, Dār nahḍat Miṣr, al-Qāhira, 1959.